միտք ունենալու յատկութենէն զուրկ  
ին. Այդ մասնաւոր յատկութիւնը  
զիւրութեան համար արթնաւորիւն

պիտի կոչենք: Արդ՝ արթնամտու-  
թիւնը մտքի եւ սրտի այն վիճակն է  
որ յանկարծահաս եւ անակնկալ վշտի,  
վտանգի. զարմանքի եւ ուրախու-  
թեան ժամանակ մարդու խաղաղ եւ  
անվրդով կը պահէ :

6. Վերը մէջ բերուած առաջին օ-  
րինակին օրիորդը եթէ արթնամտու-  
թիւն ունենար, շատ զիւաւ կրնար  
մարել երախային բռնկած քղանցք-  
ները Երկրորդ օրինակին մէջ ալ եթէ  
մանկամարդ աղջիկը արթնամիտ ըլ-  
լար, տարակոյս չկայ թէ նաւակը  
չպիտի շրջէր Նմանապէս երրորդ ու  
չորրորդ օրինակներուն մէջ յիշու ած  
մանկամարդ կիները եթէ ուրթնա-  
մտութեան տէր ըլլային, աւելորդ է  
ըսել թէ պատահած վտանգը տեղի  
պիտի չունենար: Ահա ուրեմն պատ-  
ուական յատկութիւն մը զոր աղջիկ-  
ներ եւ մանկամարդ կիներ պէտք են  
ածեցնել եւ զարգացնել իրեւ շատ  
պիտանի նեցուկ մը իրենց առօրեայ  
կեանքին: Արթուն միտք ունենալ,  
ինքն իրեն տէր ըլլաւ յանկարծակիի

զալով չշուարիլ եւ ինքվինքը չկորսնցնել, ահա իրենցմէ պահանջուածը:

7. Իրբեւ հակապատկեր վերոյիշեալ օրինակներուն կրնանք արձանագրել հետագայ դէ պքերը որ կը ցուցնեն թէ ի՞նչ է արթնամառւթիւնը:

Ամերիկայի հահանգներէն մէկուն մէջ ժամանակաւ մարդուն մէկը իր կնոջ հետ մէկ տեղ կը բնակէր քաղաքէն հեռու առանձին տեղ մը, ուր շատ արկածալից կեանք մը անցուցին, որմէ կը քաղենք հետեւ եալը: Անգամ մը կինը տանը մէջ միս մինակ եղած առեն այն կողմերը առապատակող ծանօթ աւաղակ մը ներս մտաւ՝ տանը բնակիչները սպաննելու եւ ամեն բան կողոպտելու նպատակաւ: Կինը առանց պաղարիւնութիւնը կորսրնցունելու շատ քաղաքավարութեամբ հրաւիրեց աւաղակը որ սեղանին մօտենայ եւ մէկ երկու օղի խմէ: Մարդը առանց կասկած մը ունենալու՝ հրաւիրը ընդունեց եւ հրացանը վար գնելով սկսաւ օղին ճնկել: Ասոր վրայ կինը գողին հրա-

ցանը յափշտակելով անոր կուրծքին ուղղեց, յայտարարելով թէ եթէ սեղէն երերայ կրակ պիտի ընէ: Աւազակը շյամարձակեցաւ տեղէն շարժիլ, եւ այս կերպով կինը բաւական ժամանակ շահեցաւ, մինչեւ որ էրիկը օգնութեան հասնելով վտանգը վերջացաւ: Տարակոյս չկայ թէ այս կնոջ արթնամտութիւնն էր որ թէ՛ իր տունը տեղը եւ թէ կեանքը փրկեց:

8. Անգամ մը աղջկանց դպրոցի մը մեծ ծինելոյզէն հրդեհ ծագեցաւ, երբ շէնքին մէջ քանի մը հարիւր ուսանողներ կային: Կրակը առջի անգամ տեսնողն էր վարժուհիներէն մէկը, որ փոխանակ «Հրդեհ կայ» պոռալով ամեն ոք ոտքի հանելու (ինչպէս շատ մը կիներ այդպիսի պարագաներու տակ պիտի ընէին). Խորհեցաւ թէ՛ ո՛րչափ վտանգաւոր պիտի ըլլար եթէ բոլոր ուսանողները փախչելու փութալով զիրար կոխկռտէին: Անշուշտ շատեր խելակորոյս պիտի ըլլային, կամ պիտի վիրաւորուէին եւ կամ պիտի սպաննուէին: Ուստի առանց

արթնամտութիւնը կորսնցնելու միշեալ վարժուհին կարգաւ դասարանները վազեց եւ իւրաքանչիւր վարժուհի զատ զատ իմացուց վատանզը՝ աշակերտներէն ծածուկ կերպով՝ Նոյն ատեն շատ կարծ ժամանակի մը մէջ ամեն մէկ վարժուհի կարող եղաւ իւր դասարանին աշակերտները կանանաւոր կերպով չէնքէն դուրս հանել. այսպէս բնաւ մէկուն վատանդ մը շպատահեցաւ :

9. Աղջիկներ կան որ արթնամտութիւնը աւելի առնական յատկութիւն մը համարելով զայն իւրացնելու հոգ չեն տանիր, Բայց այդպէս չէ. Նկարագիրը ուժովցնելու եւ ամրացնելու համար շատ պիտանի յատկութիւն մըն է, եւ իւրաքանչիւր աղջիկ պէտք է որ ունենայ զայն, որպէս զի իր կոչումը լիուլի կատարելու համար կազմ եւ պատրաստ ըլլայ: Անցուշտ ամեն աղջիկ անսօվոր գործեր բնելու կոչուած չէ. բայց կեանքի մէջ անպակաս են այն պարագաները ուր արթնամտութիւնը անհրաժեշտ պէտք

մըն է. ամեն աղջիկ իր փորձառութեամբը գիտէ այդ:

10. Կան աղջիկներ որ ամենափոքր բանէ խրտչիլը, շուարիլը եւ ինչ ընելիքը չգիտնալ ձեւացնելը կանացի փափկութիւն կը համարին. Շատ անգամ ցաւով եւ զզուանքով զիտած ենք աղջիկներու այդ օրինակ անպատճառտամտութիւնը. Ուստի կը խրատենք որ իրենց մատադ հասակին մէջ ջանան իրենք զիրենք կըրթել եւ արթնամտութեան յատկութիւնը իրենց մէջ զարգացնել, վասն զի երբ տան տիկին ըլլան՝ անոր շատ պէտք պիտի ունենան :

«Ճշմարիտ Կինը»

### ՏՂԱՑՈՅ ԲԱԺԻՆ

Աշխարհի սկիզբէն ի վեր չէ եղած ժամանակ մը որ ուսման, զիտութեան եւ կրթութեան այնքան կարեւորութիւն արուի եւ ուշադրութիւն ընծայուի, ինչպէս ներկայ զարս:

Գիտութիւն ձեռք բերելու համար  
ալ այն աստիճան զիւրութիւններ  
արուած են հիմակ, որ ամեն տղայ  
կրնայ գոնէ մասամբ մը զարգանալ  
եւ անհրաժեշտ եղած ուսում ստանալ:

Դասագրքեր, պարզ աշխարհաբար  
լեզուվ իրենց զնով զիւրամատչելի  
են, չն ազքատ դասակարգին խոկ,  
անանկ որ տգէտ մնալն անհոգ, ան-  
տարբեր, ծոյլ եւ թուլամորդ ըլլալու  
նշան է :

Լուրջ կերպով խորհած էք տըգի-  
տութեան վեասներուն վրայ, զիտած  
էք թէ տգէտը որքան յիմարական  
խորհուրդներով լեցուցած է իր միտ-  
քը, ո՛րքան ծուռ եւ սիսալ գաղա-  
փարներ ունի իր պարտականու-  
թեանց եւ ապագայ երջանկութեան  
նկատմամբ :

Գիտէ՞ք կռապաշտ Հնդիկին, մեծա-  
գոյն երջանկութիւնը ի՞նչ բանի մէջ կը  
կայանայ. — օր մը գոմէշի փոխուիլ եւ  
բարձր խոտերով ծածկուած դաշտի

մը վրայ պառկիլ, ուր չկան զինքը  
խայթող մժեղներ — այս է անոր ի-  
տէալը :

Կրէօնլանտացին երբ հարցաքննես,  
կ'ըսէ. ա՛խ ուրիշ բան չեմ ցանկար,  
կ'ուզեմ առողջ մի մարմին եւ շատ  
մը թռչուններ, ուտելու համար. այ-  
սինքն ապրիլ եւ ուտել. այս է աը-  
գէտին միակ նպատակը, նման անա-  
սունի :

Գիտութիւնը սակայն, նման ամեն  
ուրիշ ազնիւ ու թանկագին իրերու,  
իրեն կեզծը ու խարդախեալը ունի.  
շատ գրքեր կարդալը ճշմարիտ, զուտ,  
անխառն գիտութիւն չէ, կարդացած-  
նիս մեզի եւ այլոց օգտակար ընել —  
այս է գիտութեան, ճշմարտութեան  
ապացոյցը:

Ուսաի, ինչպէս անխափիր ամեն  
բան, գէշ կամ լաւ, օգտակար կամ  
վեասակար, ստամոքս լեցնելով ա-  
ռողջութիւնը կը խանգարի եւ մարզս

Հիւանդ կ'ըլլայ եւ ի վերջոյ կը մեռնի,  
նոյնպէս նաև տղայք ամեն զիրք  
չեն կարող կարդալ . պարտին ընտ-  
րութիւն ընել, կամ իրենց ծնողաց  
եւ ուսուցչաց յանձնարարած զրքերը  
պարտին կարդալ :

Միայն այսպէս ընելով կրնան յոյս  
ունենալ որ ստացած ուսում եւ զի-  
տութիւն իրենց ապագայ յաջողու-  
թեան եւ երջանկութեան պիտի նր-  
պաստէ եւ իրենք նաև այլոց հան-  
դէպ օգտակար պիտի հանդիսանան :

Այսքան առայժմ, այս կարեւոր  
կէտիս վրայ. հիմակ պիտի ներկայա-  
ցնեմ ձեզ մի քանի տղաքներ որ  
յաղթելով ամեն դժուարութեանց  
ուսում ու զիտութիւն ձեռք ձգեցին  
եւ նշանաւոր մարդիկներ եղան :

Հայնէ, ոստայնանկի որդի էր. հայրը  
մեծ ընաւանիքի տէր, հազիւ օրական  
հացը կրնար ճարել: Հայնէ քանի մը  
դահեկան ունէր երբ համալսարան  
մտաւ եւ հազիւ թէ շաբաթը երկու  
ամբողջ գիշեր կրնար քնանալ. 30

ատրի ուսման հետեւեցաւ եւ եղաւ  
բրօֆէսոր:

Գասթօնչիօ, աղքատ երկրագործի  
որդի էր, եւ Սուրբ Գիրքը լատինե-  
րէնի թարգմանեց :

Անվացկօ, իր հօր հետ կը գործէր  
երկաթագործի խանութը մինչեւ 18  
տարեկան եղաւ, սակայն իր ձիրքեր  
զարգացնելով, իտալացի բանաստեղծ-  
ներէն մին եղաւ :

Ճօնաըն, որմնապիր էր գործած ա-  
տենը զրպանը գիրք մը ունէր եւ իր  
միտքը կը մշակէր ձեռքով աշխատած  
ատեն. նա եղաւ հոչակաւոր զրպէտ:

Թոմաս Սիմբոն, ոստայնանկի որդի  
էր եւ հօր հետ կ'աշխատէր, հայրը  
զիտելով որ տղան ուսման առած  
է իր միտքը, արգիլեց զիրք ձեռք  
առնել եւ բոլոր օր կկաց (մէզիզ) նե-  
տել կու տար. տղան նորէն զիրք  
կարդալու ժամանակ կը գտնէր. հայրը

իր «անհնազանդ որդին» տունէն գուրս  
ըրաւ Սիմբսըն մօտակայ քաղաք մը  
գնաց եւ իր արհեստով զբազեցաւ.  
գիրք փոխ կ'առնէր եւ միայն քանի  
մը բովէ կը կարգար, ի վերջոյ  
լոնտօն գնաց, ոչ դրամ ունէր ոչ  
յանձնարարական. գրպանին մէջ գտան  
իր գրած մի յօդուած, այն աստիճան  
գերազանց համարուեցաւ այս գրու-  
թիւն որ նա յառաջ ատրուեցաւ եւ  
եղաւ Մաթէմաթիքայի Բրօֆէսօր եւ  
Ակադեմիոյ ընկերութեան անդամ.

Ուշիամ Հըթթըն, բուրդ մաքրողի  
մը որդին էր. «Իմ խեղճ մայրս, կ'ը-  
սէ Հըթթըն, զիրկը երախայ մը եւ  
շուրջը միւս զաւակներն, ամրող օ-  
րեր անօթի կ'անցնէր, եւ երբ ձեռքը  
բան մը հասնէր, իր բաժինն ալ մեզի  
կուտար». Հըթթըն գուլպա հիւսողի  
աշկերտ եղաւ, սակայն խելքը ուս-  
ման էր տուած. սա եղաւ գրագէտ  
եւ հնախուզական ընկերութեան ան-  
դամ:

Էտմընտ Սթօն, 100 տարի առաջ  
Արկայլի գուքսին պարտիզանին որ-  
դին էր, Օր մը գուքսը խոսին մէջ  
Նեւտոնի Լատիներէն մէկ հատորն  
գտնելով զարմացաւ երբ իմացաւ թէ  
իր պարտիզանին որդին, 18 տա-  
րեկան, այդ խրդին գիրք կը կարդար,  
երբ հարցուեցաւ թէ ի՞նչպէս ուսած  
է Լատիներէն, էտմընտ պատմեց թէ  
10 տարի առաջ ծառայէ մը ուսած  
էր. Զբաւէ՞ր, կ'ըսէր էտմընտ, լոկ  
զիրերն ճանչնալ լեզու մը սորվելու  
համար. Երբ գուքսին պալատ կը  
շինուէր, էտմընտ նստած կը զիտէր.  
ճարտարապէտին կարկինը եւ քանակը  
իր ուշագրութիւնը գրաւեցին. հար-  
ցուց եւ իմացաւ որ թուարանու-  
թիւն կոչուած զիրք մը կայ, իսկոյն  
ձեռք ձգեց զիրք մը եւ սորվեցաւ.  
Երբ երկրաչափութեան անուն լսեց,  
ան ալ սորվեցաւ, իմանալով որ Լա-  
տիներէն լաւ գրեանք կան, սորվե-  
ցաւ այն լեզուն, երբ Գաղղիերէնի մէջ  
ալ օգտակար գրքեր գտնուիլն իմա-  
ցաւ, իսկոյն գնեց զասազիրք մը եւ

սորվեցաւ այն լեզուն . ի մի բան  
պարտիզպանին որդին եղաւ մեծ հե-  
ղինակ մը եւ գրեց շատ զրքեր :

Պրիթ , երկութագործ էր , աղքատ  
ծնողաց զաւակ , միայն թաղային զբա-  
րոց էր գացած հօր մահէն ետեւ ան-  
կէ ալ զրկուեցաւ , 15 տարեկան  
հասակին երկաթագործի աշկերտ ե-  
ղաւ , հանրական գրատան գրքերէն  
սկսաւ փոխ առնել եւ ձմրան գիշեր-  
ները անոնցմով զբաղիլ . Երկաթ  
ծեծած տաեն Յունարէն կը սորվէր  
օճախին վրայ գիրքը դնելով եւ ան-  
կէ կարդալով . նոր լեզուներ սկսաւ  
սորվիլ , յետոյ փիլխոփայական զրքեր  
— միշտ արհեստով զբաղելով . Օր մը  
նետեց մուրճը եւ գնաց ուրիշ տեղ  
եւ սորվեցաւ Գաղղիերէն , Սրաներէն ,  
Դերմաներէն եւ Իտալերէն , երկու  
տարուան մէջ . նորէն անցաւ երկա-  
թագործի սալին առջեւ եւ մօւրճը  
ձեռքը առաւ . Հնախօսական ընկե-  
րութեան անդամ եղաւ . այս երկա-  
թագործի որդին որ 50 լեզու կրնար

«Քիչ կամ շատ զիւրութեամբ կար-  
դալ եւ հասկնալ » :

Ճշմարիտ ուսումնական , Ամենի-  
մաստին առջեւ կը խոնարհի : Հազար  
տարի առաջ Ալքալին իմաստասէրն  
ըսած է . ո՛րքան բարձր ելլես այն-  
քան կ'ընդարձակի տեսարանիդ հո-  
րիզոն , լեռան մը ետին յանկարծ ու-  
րիչ բարձրաբերձ լեռ մը կը տեսնես :  
Ուստի մի սիքանար քիչ մը զիտու-  
թեամբով այլ խոնարհ , միշտ խոնարհ  
եղիր :

### ԼՈՒՑԿԻԻ ԽՆԴԻՐՆԵՐ


Այս խնդիրներ լուծելու համար  
պէտք է ունենալ շատ մը փայտէ  
լուցկիներ , նոյն մեծութեամբ կտրը-  
ւած . ցորենի հասկ ալ կըլլայ . Տրուած  
ձեւը սեղանին վրայ շինէ լուցկիներով  
եւ ապա , անոր դիմացը շինէ , լուցկի-  
ներով . պահանջուած ձեւը :

Ա. ԶԵԿ




45 լուցկիէ բաղկացեալ այս 4 քառակուսիներն 5 քառակուսիի վերածել, միայն երկու լուցկիի դիրքը փոխելով :

Բ. ԶԵԿ




24 լուցկիէ բաղկացեալ այս 9 քառակուսիներն 4 քառակուսիի վերածել, միայն 8 լուցկիի դիրքը փոխելով :

Գ. ԶԵԿ



22 լուցկիէ բաղկացեալ այս 8 քառակուսիներն 5 քառակուսիի վերածել, միայն 4 լուցկիի դիրքը փոխելով :

Դ. ԶԵԿ




12 լուցկիէ բաղկացեալ այս 4 քառակուսիներն 3 քառակուսիի վերածել, միայն 4 լուցկիի դիրքը փոխելով :

Ե. Զեւ



Սեղանին վրայ Յ հատ լուցկի կայ այս դիր-  
քով. մէջտեղի լուցկին տեղափոխիսել առանց զայն  
տեղէն շարժելու:


Զ. Զեւ



Ա 22 լուցկիէ բաղկացեալ այս 8 բառա-  
կուսիներն 7 բառակուսիի վերածել, միայն 2  
լուցկիի դիրք փոխելով:


Բ. Այս նորակազմ 7 բառակուսիներն 5 բա-  
ռակուսիի վերածել, միայն 2 լուցկիի դիրք փո-  
խելով:

Ե. Զեւ




Այս ձեւն շինելէ ետեւ սոյն 25 բառակու-  
սիներէն 42 հաւասարակողմ բառակուսիներ  
կազմէ, միայն 16 լուցկիի դիրք փոխելով:

Բ. Զեւ




Կը տեսնե՞ս այս 12 լուցկիներն, օ՞ն, 3  
լուցկիր դիրք ա'յնպէս փոխէ, որ աչէն ձոխ եւ  
վերէն վար միշտ 4 հատ լուցկի զտնուին։

Թ. Զեւ



Եթէ տասը լուցկի վերցնելու ըլլաս պիտի  
ունենաս փոխանակ 9 բառակուսի որ պիտի ներկայա-  
ցնեն զեղեցիկ, կրկնակ մի խայ։

Ժ. Զեւ



Երբ 12 լուցկիի դիրք փոխելու ըլլաս պի-  
տի ունենաս 9 բառակուսի որ պիտի ներկայա-  
ցնեն զեղեցիկ, կրկնակ մի խայ։

Ա. Հաւասարիկ զուարճալի եւ հրահան-  
գիչ ժամանց մը։

Տուփ մը փայտէ լուցկի տոէք. 10  
փարա տալով, եւ լուծեցէք այս 10  
խնդիրներ։

Երբ լուծէք խնդիրներն, պէտք է

միայն նախ խնդիրին ձեւը գծէք,  
ճիշտ ինչպէս օրացոյցին մէջ զրուած  
է, եւ պահանջուած ձեւն ալ անոր  
զիմացը կամ տակը գծէք եւ ստո-  
րագրելով ինձ զրկէք :

Տասը հասն ալ ճշդիւ լուծողը սիր-  
ափ ընդունի Բիւրակն, մէկ տարի,  
ճինդ հաս ճշդիւ լուծողը Աւետարեր,  
մէկ տարի, հինգէն պահաս լուծողը  
կընդունի Տղայոց Աւետարեր, մէկ  
տարի : Երբ մէկէ աւելի ըլլան ճշդիւ  
լուծողները, բուհն կորոշէ թէ Մարտ-  
նակները ո՛վ պիտի ստանայ :

Պայմանաժամ մինչեւ Ա. Զատիկի,

Հասց. — Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ  
ՊՐՈՒՍԱ

### ՄՐՅԱՆԱԿԻ ԲԱՇԽՈՒՄ

Անցեալ 1903 տարւոյ Օրացոյցին  
խնդիրները լուծեցին հետեւեալք :

1. Տակոր էֆ. Ամառորեան, Կազմէկօլ հա-  
մամ, 1 խնդիր,
2. Սարգիս էֆ. Կէվմէրեան, Խօդատ, 1 խնդիր,
3. Արմենակ էֆ. Փեշտմալման, Տօպիչ, 1  
խնդիր,
4. Անանուն ոմն, Խօդատ, 1 խնդիր :

5. Օր. Մաքրուհի Մ. Փալուստեան, Խօդատ,  
3 խնդիր,
6. Միասկ էֆ. Մեսակեան, Պրուսա, 3 խնդիր,
7. Ցովհաննես էֆ. Պղտիկեան, Եկնիմէ, 4  
խնդիր,
8. Գեորգ էֆ. Լոշիսամեան, Այնքապ, 4  
խնդիր,
9. Եաղուակ էֆ. Եաղուակեան, Պօլիս, 4 խնդիր,
10. Գառնիկ էֆ. Փեյլերեան, Շավին Գարա-  
չիսար, 6 խնդիր,
11. Ցակոր էֆ. Տէմիրճեան, Տիարպէքիր, 7  
խնդիր,
12. Ցովհաննես էֆ. տէր Նիկողոսեան, Պրու-  
սա, 50 խնդիր,
13. Եղուարդ էֆ. Պօգամեան, Արապկիր, 12  
խնդիր,
14. Արմենակ էֆ. Խ. Թէվրիզեան, Խարբուրդ,  
բռլոր խնդիրներ.

Հետեւապէս կ'ընդունի.

ԱՐՄԵՆԱԿԻ էֆ. Խ. Թէվրիզեանի Խարբուրդ  
Առաջին մրցանակ, որ է ոսկեզօծ Աստուածա-  
շունչ մը եւ դրապարակաւ զովեստ իբր ամենա-  
լաւ կերպով խնդիրներն բացատրող և լուծող,  
երկրորդ մրցանակն ընդունեց ոսկեզօծ Աւետա-  
րան ՀՀ Եղուարդ էֆ Պօգամեան յԱրապկիր.  
Իսկ երրորդ մրցանակն ոսկեզօծ Երգարան մը,  
Ցովհաննես էֆ. Տէր Նիկողոսեան, ի Պրուսա

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ

1. Առեւտուրի մէջ մարդիկ կան որ  
ծնած են առեւտուրի մարդ. արտեստ-  
ներու մէջ ալ կան այնպիսիք, որք  
արհեստաւոր են ծնած : Ուսուցիչնե-  
րու համար ալ կ'ըսուրի . սա մարդը  
վարժապետ ծնած է :

2. Ուղիղ թէ սխալ ըլլայ աս , սա  
ճշմարիտ է թէ ուսուցչութիւն՝ ար-  
ուեստներուն արուեստն է, ճշմարիտ  
պսակն է ամէն արուեստից . եւ ուրիշ  
ոչ մի արուեստ կը պահանջէ աւելի  
բարձր ճարտարութիւն եւ աւելի  
խոր հմտութիւն քան ուսուցչու-  
թիւն , որ է արուեստ՝ նկարագիր  
կազմելու :

3. Բնական ձիրքեր չեն որ մարդս  
ուսուցիչ կընեն . մասնաւոր պատ-  
րաստութիւն , կրթութիւն պէտք է  
ուսուցիչ ըլլալու համար : Շատ  
աեղեր վարժապետանոցներ կան ,  
ուր միայն ուսուցիչ կը պատրաս-  
տուին . Մենք չունինք այս կարգի  
վարժարան , ուստի հոս մի քանի

հրահանդ կուտանք Գասապետնի  
«Դպրոցավարութիւն» մեզ առաջնորդ  
բռնելով :

4. Ուսուցիչն կը պահանջուի նախ  
եւ առաջ քաջ հմտութիւն , կատար-  
եալ զիտակցութիւն եւ թարմ ծա-  
նօթութիւն բոլոր այն առարկանե-  
րուն ու նիթերուն վրայ զորոնք  
պիտի ուսուցանէ :

5. Աշակերտ վստահ ըլլալու է թէ  
իրը ուսուցիչ աւանդած դասերուն  
քաջ հմտու է , ասով կը շահի աշա-  
կերտաց յարգանք , վստահութիւն ,  
հնագանդութիւն . մէկ խօսքով աշա-  
կերտին կամք կը հպատակի ուսու-  
ցիչն , սիրտ կուտայ անոր , զէկ յանձ-  
նուած է ուսուցիչին ձեռք :

6. Ուստի հմտութիւն է դպրոց  
կառավարող զօրութիւն , ասով վար-  
ժապետ աղղեցութիւն կունենայ ա-  
շակերտաց վրայ , իրենց բոլոր յարա-  
բերութեանց եւ պարտականութեանց  
մէջ . եւ կարգապահութեան հիմերը  
կը ձգէ վարժարանին մէջ :

7. Ուսուցիչ մը որ նախ լաւ

ապաւորութիւն կը ձգէ աշակերտաց վրայ, որ մը յանկարծ կը կորսնցունէ իր ազդեցութիւն . ինչո՞ւ, քանզի աշակերտաց մին թուաբանական ինդիր մը կը ներկայացնէ, զոր վարժապետը սխալ կը լուծէ . ծօ՛, վարժապետը բան չփառէր կոր, կսկսին տղայք միմեանց փսփսալ, ալ երթառ բարով կարգապահութիւն, ալ խերն տես դպրոցին :

8. Ընդհակառակն եթէ ուսուցիչ, որ չունի լաւ հմառութիւն, իրեն սովորութիւն ընէ աւանդելիք դասերն նախ լաւ իւրացնել, թէեւ իսխա պարզ եւ մանկական ըլլան անոնք, եւ առանց գրքին կապուած ըլլալու դասախոսէ, շուտով պիտի շա՞ի աշակերտաց յարգանք, սէր եւ սիրտ :

9. Շատ ուսուցիչներ լաւ դիրքի տէր են եղած օրական ընթերցումով ճոխացած եւ թարմացած հմտութեամբ. թմրմ, նոր, թապէ, այս է որ կը պահանջուի, հինցած, պայաք բաներ նորէն եւ նորէն տաքցնելով մատակարարել, աշակերտաց զզուանք

կը պատճառէ, կատեն ուսումը դպրոցը իրը բանա կը նկատեն :

10. Բրոֆէսօրի մը հարցուեցաւ թէ ինչո՞ւ ժամերով կը պատրաստէ այն դասեր, զորս տարիներով աւանդած էր : Կուզեմ որ ըստ, աշակերտներս հոսող առուակէ խմեն եւ ոչ թէ կայուն ջրակոյտէ, Ահա պայման ճշմարիտ ուսուցման եւ աշակերտաց սըրտերն գրաւելու :

11. Հմառութենէ զատ ուսուցիչ ունենալու է ճարտարութիւն զպրոց վարելու եւ ուսուցանելու : Հմառութիւն ուրիշ բան է եւ զիտցածն ուսուցանել, աւանդել ուրիշ բան. ամէն մարդու գործ չէ այս նոյնպէս նաեւ զպրոց կառավարելու համար բաւ չէ որ զիտնայ ուսուցիչ թէ աշակերտք ինչպէս վարուելու են վարժարանին մէջ եւ ժամանակնին ինչպէս անցընելու են, հապա պէտք է զիտնայ կերպը եւ միջոցը գործադրել տալու, ինչ որ պարտին ընել եւ ինչ որ կը պահանջուի աշակերտէն :

12. Ասով միայն կապահովուի դըպ-

բոցին կարգապահութիւն . դպրոց  
նման ժամացոյցի , կոկով զործել .  
ներքին մղումով , ոչ թէ արտաքուստ  
ձնշելով , քաշելով , քչելով :

13. Սյս ճարտարութիւն սորվելու  
է . ուսուցիչ իր արհեստին այս ճիւղ  
լաւ ուսանելու է . Առաջնորդուելու  
է , յաջողակ պաշտօնակիցներու փոր-  
ձառութենէն օգուտ քաղելու է .  
վարժապետութեան հիմնական սկզ-  
բունք ուսումնասիրելու է :

14. Սակայն հմտութիւն եւ ճար-  
տարութիւն անօգուտ կը զառնան  
եթէ ասոնց չընկերանար սրտի ոյժ ,  
այսինքն սէր առ ուսանողս : Աշո-  
կերաք տարբեր բնաւորութիւն ունին ,  
եւ ամէն մէկուն հանգամանք ու-  
սումնասիրելով , ըստ այնմ կո-  
ռավարելու է . բոնութիւն եր-  
բեմն հարկաւոր կ'ըլլայ . սիրոյ առջեւ  
սակայն ամեն զլուխ կը խօնարհի .  
սիրոյ նման սանձ չկայ . տղայոց կա-  
ռավարման վերջին միջոց սէր է :  
Սյս սէր ոչ թէ արժանաւորին , այլ  
կարօտին ցոյց տալ հարկ է :

15. Ի վերջոյ ուսուցիչ միշտ յիշե-  
լու է իր աշակերտութեան օրեր . ո-  
րով նաեւ կրնայ գործադրել ոսկեղէն  
կանոնը . ինչ որ կուզէք որ ուրիշներ  
ձեզի ընեն , դուք ալ անոնց անանկ  
ըրէք :

ԳՐՈՅՑԱԿԱՆ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՑ

1. Արձակուրդի վերջերը . դպրոցի  
վերաբացումէն առաջ , կրաջրել տալ  
պատերը , թէ՛ հաճոյատեսիլ , զուարթ  
երեւոյթ մը տալրւ համար զպրոցին ,  
եւ թէ մանաւանդ սպաննելու համար  
միքրոպներն այն տարափոխիկ հի-  
ւանդութեանց (կարմրախտ , եւն.) որ  
կրնան պատահած ըլլալ զպրոցին մէջ :

2. Ամէն օր տախտակամածներուն  
եւ կարասիներուն փոշին առնել տալ  
թաց լաթով . նոյնագէս պատուհաննե-  
րունք՝ քանի մր օրն անգամ մը . իսկ  
շաբաթը մէկ անգամ ջրով եւ հակա-  
նիսականով մը սրբել տալ տախտա-  
կամածներն եւ տարին գոնէ երկու  
անգամ ալ պատերը :

3. Ճեմիշները չատ մաքուր պահել տալ :

4. Հանգիստներու, զբոսանքներու միջոցին, երեկոյեան արձակուրդէն վերջ պատուհաններն եւ դոնները բանալ տալ որպէս զի օդը մաքրուի : Եւ այս, ո՞չ միայն օդը առաք եղած ատեն, այլ ամեն եղանակի մէջ : Նոյն իսկ ձմեռն աւելի կարեւոր է այս զգուշութիւնը, որովհեաեւ ջերմոցները կ'սպառեն դասարանին թթուածինին կարեւոր մէկ մասը : Հսկնք այս առթիւ թէ դասարանին տաքութիւնը պէտք է պահուի 12էն 15 աստիճան :

5. Թոյլ չտալ երբեք որ աշակերտները թքնեն տախտակամածին ու սանդուղներուն վրայ : Դասարանին մէջ թքնել՝ յարգանքի պակասութիւն մէ դասարանին հանդէպ . Եւ յետոյ, թու քը ցամքելէ վերջ՝ հիւծախափ փոխանցման միջոց մը կ'ըլլայ:

6. Ամէնամեծ մաքրութիւն պահնջել . ազառառութիւնը վտանգաւոր է առողջութեան համար, ու մա-

նաւանդ աղոց առողջութեան : Հարուստ ըլլալու պէտք չկայ մաքրու ըլլալու համար, զաստիարակը խստապահանջ պէտք է ըլլայ բոլոր աշակերտաց մաքրութեան մասին : Երբ առաւտուն աղաք զարոց կուգան, զաստիարակը պէտք է քննէ անոնց իւրաքանչիւրին գէմքին, մազերուն, ձեռքերուն եւ հագուստին մաքրութեան աստիճանը : Հազուադէպ չէ մեր վարժարաններուն մէջ զտնալ աղտոտ ձեռքերով սեւցած եւ մազիլի նման եղունգներով : կեղաստ վիզով աշակերտաներ, մեծ թէ պզտիկ Շատ աշակերտներու ականջները զարչելի կերպով աղտոտ են եւ գէջով լեցուն : Զանազան երկիրներու բժշկական աեղեկագիրները կը հաստատեն թէ զպրոցականներու զրեթէ մէկ քառորդին լուղական գործարանն առողջ չէ . ասոր զիսաւոր պատճառներէն մէկն է գէջին զիզուիլը : Աշակերտներ կան որ բերաննին րաց կը պահնջն, կամ թէ զրուցատրութեան ատեն բառերը սխուլ կը լսեն. յա-

ճախս ականջի անմաքրութեան, եւ կամ անյարմար զիբքի պատճառաւ ցուրա օդի հոսանքներէ առաջ եկած հարրուխներու զոհեր են անոնք Տք. Ժավալ կը յանձնարարէ՝ զպրոցական տարւոյն սկիզբը՝ անջատ բառերու զբուցատրութեան միջոցաւ զատել ականջի ծանրութիւն ունեցող աշակերտներն եւ առջեւի նստարաններուն վրայ նստեցնել զանոնք :

Եթէ աշակերտներն անհոգ են իրենց ականջներու մաքրութեան մասին, ա՛լ աւելի անհոգ են իրենց ականներու մասին . ամէն առաւօտ եւ իւրաքանչիւր ճաշէ վերջ բերանը ցօղուել, ակռանները խօզանակով մը կամ կարծր լաթով մը լուալ՝ ձեռքերն եւ դէմքը լուալու չափ սովորական բան մը պէտք է ըլլայ մեր տղոց համար :

Ու չի բաւեր որ տղաք հոգ տանին դէմքին, ձեռքերուն, վիզին մաքրութեան, ամբողջ մարմնոյն մաքրութիւնն անհրաժեշտ է առողջութեան համար . դաստիարակները պարտաւոր

են պահանջնել աշակերտաց ամբողջ մարմնոյն եւ հագուստներու մաքրութիւնը : Ուաքերու մաքրութիւնը մանաւանդ շատ կարեւոր է, ամառը՝ շտաց գպրոցներու դասարաններուն մէջ տիրող գարշահոտութեան պատճառը ոտից անմաքրութիւնն է :

7. Մարմնոյն մաքրութենէն վերջ նկատելի գլխաւոր բանը՝ աշակերտաց առողջութեան տեսակէտով՝ զգեստներն են, ու ասոնց մէջ ալ մասնաւորապէս կօշիկը : «Հիւանդութեան շատերը ստքէ պաղ առնելէ առաջ կուգան» կ'ըսեն . մասնաւորապէս աղոց համար ճշմարիտ է այս . սարմուճակ չունեցող տղաք պէտք է փոխեն կօշիկնին դպրոցին մէջ : Դպրոցին մաքրութեան տեսակէտով ալ պէտք է որ տղաք փուղոցի ցեխը չըերեն դպրոցի սանդուխներուն եւ ասիստակամածներուն վրայ :

8. Մասնաւոր ու շագրութեան առարկայ պէտք է ըլլայ նոյնպէս աղոց մարմնոյն դիրքը . աչքերը զիրքին կպցնել՝ կարդուլու ատեն, զրասեղա-

նին վրայ հակիլ կորաքամակ եւ  
կուրծքը փակցնել զրասեղանին՝ զրե-  
լու տաեն; շատ սովորական թերու-  
թիւններ են մեր զպրոցներուն մէջ,  
նոյն իսկ այն զպրոցներուն մէջ՝ որ  
ահագին զոհողաւթիւններով յինել  
տուած են յենարանաւոր զրասեղան  
նստարաններ, Պէտք է խստիւ ար-  
դիլել՝ անդադար ու անձանձրոյթ՝  
մարմնոյ այս յոոի զիրքերը, Աղէկ է  
որ աշակերտանները ձեռքերնին կռակ.  
նին տարած նստին կամ կենան:

9. Բայց եթէ պէտք է արգիլել մորմ-  
նոյ յոոի զիրքերը, պէտք չէ պահան-  
ջել մարմնոյ անշարժութիւն, մանա-  
ւանդ կրտսեր դասարաններու մէջ.  
աղան որքան պղտիկ ըլլայ, այնքան  
աւելի շարժման պէտք ունի: Ֆիզի-  
քական գործունէութիւնն իր զանա-  
զան արաւայացութիւններով պէտք  
չէ արգիլուի դասարանին մէջ. ընդ-  
հակառակն, այդ բնական պէտքին  
պէտք է զոհացում արուի, ի հարկին  
պէտք է զրգուի այն՝ նիւթական եւ  
մանկավարժական յարմար կազմա-

կերպութեամբ, աշակերտները աար-  
քեր աարքեր խառնուած քններ ունին,  
ու ամեն խառնուածք իր ուրոյն  
պահանջումները ունի, պէտք է նախ  
ճանչնալ իւրաքանչիւր խառնուածք  
եւ գոհացում տալ ամէն մէկ խառ-  
նուածքի պահանջումներուն, խմզուժ  
բանտապան մէ այն դաստիարակն որ  
կը պահանջէ աշակերտներէն բարեւ  
բոնած ու բերանը կզպած մտիկ ընել  
իր վարդապետական դասախոսու-  
թեանց. անդադար շարժիլ ու խօսիլ  
ուզող «անառակ» աշակերտաններ. ու  
ասոնց քով բարկացոտ, ծոյլ, սատիօս,  
անհնազանդ աշակերտներ չեն պակ-  
սիր անշուշտ. բայց ատոնք կարեկցու-  
թեան արժանի հիւանդներ են որք  
կը կարօտին համեմերտար դարման-  
ման մը, ու հո՛ս է դաստիարակն ար-  
ժանիքը, հո՛ս է որ կ'որոշուի արդի  
մանկավարժութեան պահանջած բնա-  
խօս. հոգեբան դաստիարակն :

10. Ճանչնալ իւրաքանչիւր աշա-  
կերտի խառնուածքը, ճանչնալ ամէն  
մէկ խառնուածքի պէտքերն ու գոհա-

ցում տալ անոնց բանաւոր միջոցներով  
արթնցնել, ցնցել քնացող ազաքը, որոց  
աչաց հուրին է մարեր, հանդարտեցնել  
փոքրիկ անզւսալներն որք խօսք չեն  
հասկնար, այս կը պահանջուի այսօր-  
ուան դաստիարակիչն՝ Փիզիքական  
դաստիարակութեան տեսակէտով։  
Իրմէ պահանջուածն ի գործ դնելու  
միջոցներն անի՞ սակայն դաստիարա-  
կը։ Ո՞չ բոլորովին, անշուշտ բայց  
ամէնէն կարեւորը, տղոց խառնուած-  
քը ճանչնալ ու այդ խառնուածքի  
պահանջքը գոհացնելու միջոցներուն  
ահղեակ ըլլալն է։ կուզեմ անզամ  
մաղ կրկնել հոս թէ երը կը թերա-  
նանք մեր բնախօս-հոգեբան դաս-  
տիարակի պարտականութեանց մէջ,  
հարիւրին իննառւն անզամ պատճառը  
մեր անխոզնութիւնն է։ նախ մեր ան-  
խոզնութիւնը դարմանենք, այն ատեն  
մեր չգիտացածը սովորելու եւ մեր  
սովորածն ալ գործ ազրելու միջոցները  
պիտի գանենք։ Պատասխանառուու-  
թեան զօրաւոր զգացումը մեծա-  
գոյն առաքինութիւն է ընկերական

մարդուն, եւ դաստիարակին՝ որ լի-  
կերական մարդը կը կերտէ։

Յ. Թ. Հինդկեսն



## ՀԱՐՑԱՐԱՆ

Տիկ. Ե. Դաւթեան։ — Երբ նորէն  
պատահիւոր փոքրիկներ քիթերնուն  
մէջ քար, կուտ եւ լն. տանին եւ չկըր-  
նան դուրս հանել գոցեցէք քթին  
միւս ծակ մատովմիդ, փչեցէք ուժ-  
գին տղուն բերնին մէջ։ սովորաբար  
քարը կուտը եւ լն. դուրս կ'ելլեն։  
հակառակ պարագային զիմեցէք  
քժիշին — եթէ, սակայն, սա զիտ-  
նայ հանել։

Սպասուի։ — Կանդեղիդ պատ-  
րոյգ երբ այնքան կարճ է որ չհաս-  
նի քարիւղին կամ ձէթին, եւ չես  
կրնար անմիջապէս նոր պատրոյգ  
գանել, կարէ պատրոյգին լայնու-

թեամբ կտաւի կտոր մը, կարէ զայն  
պատրոյց զին ծայրը . ասով ամբողջ  
պատրոյգ կրնաս գործածել :

Պ. Յ. Ն. — Եթէ կաթուածի տրա-  
մադիր, յարմար ըլլալ կը կարծէք .  
պարտիք կերուխումի մէջ խիստ  
չափաւոր ըլլալ . ոգելից ըմպելիք,  
սիկար եւլն . պարտիք մոռնալ . մատ-  
ւոր աշխատութեանց, շարժման, հան-  
գոտեան, քնոյ եւ արթնութեան մա-  
սին պատշաճն գիտնալ եւ կատարել:  
Մանաւանդ պառկելէ առաջ չպար-  
տիք սատամոքս ծանրաբեննել . կիր-  
քէ, զրգուումէ զգուշացէք . ո՛չ ատք,  
ո՛չ պադ, միշտ բարեխառն . հան-  
գերձներն թոյլ պէտք է ըլլան . մա-  
նաւանդ նեղ օձիկներէ եւ փողկապ-  
ներէ զգուշացէք . Կաթուած երբ  
պատահի պէտք է խսկոյն արիւն առ-  
նել եւ բժիշկ կանչել :

ՕՐ. Ե. Ա. — Մի վախնաք . առանց  
հազ եւ կուրծքի ցաւ ունենալու ա-  
րիւն թքնելն վտանգաւոր բան մը չէ.

թէեւ չեմ ըսեր թէ բժիշկի չղիմէք:

Ծերուկ. — Քաջ եղիր, զեռ շատ  
տարիներ կրնաս ապրիլ . անխունը  
եփէ Լեօպէր շիֆերով անուշցուր ,  
խմէ խուխը կը քակէ . կիւյեօյի կուտ-  
րոն — խաթռան — կրնաս գործածել:  
Զեռքերդ օրը քանի մանգամ 15 րո-  
պէ տաք ջրոյ մէջ դիր, չնաչու-  
թեանդ դիւրութիւն կուտայ:

Տիկ. Վ. Տ. — Երբ «արիւն զլուխ  
զարնելով», ինչպէս կըսէք . զլիսու  
ցաւ . ունենաք. թարմ լեմոն մը կարե-  
լով բազկերակիդ վրայ կապէ . այս  
օդակար է նաեւ «մարողներն»  
սթափեցնելու :

Ա. Ա. Ա. — Երանի թէ ձեզ նման  
շատեր գտնուէին . նպատակնիդ լաւ  
է . սակայն կարծեմ պէտք է սապէս  
որոշում ընել . — «Միայն մէկ ան-  
գամ պիտի անցնիմ այս աշխարհէս ,  
ուստի ինչ բարիք որ կրնամ ընել իմ  
ընկեր արարածներուս , պարտիմ հի-

Ամակ ընել, քանզի այլեւս աշխարհէս  
անցնելիք չունիմ :

Ուսուցիչ. — Ռուսօ կըսէ. տղայոց  
է՞ն վտանգաւոր ժամանակն է մինչեւ  
անոնց 12րդ տարին, զի այդ միջօցին  
մէջ է որ մոլութիւնք ծլիլ կսկսին .  
Ռւստի ճշմարիտ զաստիարակ մը, ոչ  
թէ ծիլերն փրցնելով զոհ ըլլալու է,  
այլ որոնելով անոնց արմատ գտնելու  
եւ հանելու է :

Երաժիշտ. — Այո՛, շատ տեսնուած  
եւ դիտուած բան մ'է. թէ անտառնք  
կախորժին երածշտութենէ . Օձերու  
թովիչներ Հնդկաստանի մէջ երաժշ-  
տութեամբ զարմանալիներկայացում-  
ներ կուտան. փողոցներն շրջող գնջու-  
ներն արջիբուն պարել կուտան իրենց  
խոպոտ երգերով : Մինչեւ իսկ ոստ-  
րէն կը բանայ իր երկու խեցեղէն  
գոներն, երբ իր մօտ երածշտական  
գործիք մը ածուի :

Փաստան. — Ըստ անդիշական

օրինաց, մանուկը պարտի իր հօրը  
կրօնքին նետեւիլ. ամուսնութենէ ա-  
ռաջ եղած պայմանագիր, մանուկը  
տարբեր կրօնի մէջ կրթելու, պար-  
տաւորիչ չէ հօր համար. մինչեւ իսկ  
յետ մահուան հօր, մայրը իրաւունք  
չունի մանուկը ուրիշ կրօնքի մէջ  
կրթելու :

Պ. Ն. — Հովհանոսը գործածուիլ  
սկսաւ 1775ին. կը շինուէր իւղոտած  
մետաքսէ. կոշտ բաներ էին անոնք,  
դժուար էր բանալ մանաւանդ երբ  
թրջէր . խիստ ծանր էր եւ միայն  
կանանց էր յատկացեալ :

Պատանիներ. — Այո՛, ցաւալի. խիստ  
ողբալի է, ձեր նկարապրած մարմնա-  
կան եւ մտային վիճակ. դպրոցներ,  
մանաւանդ գիշերօթիկ վարժարան-  
ներ վտանգաւոր տեղեր են եղած  
պատանեաց համար, զի ոչ թէ հսկո-  
ղութիւն չկայ այլ նաև այդ մարմին  
միտք հօգի աւերող ախտին վրայ խօ-  
սիլ եւ անկէ զգուշացնել ամօթ կը

համարուի : «Աշնան Տերեւներ» կարգացէք եւ հոն զրուած խրատներն կէտ առ կէտ ի գործ զրէք, եւ վատահ եղէք որ պիտի ըլլաք առոյդ, կայտառ պատանիներ :

Ընթացաւարք. — Երանի թէ վարժարաններէն, մանաւանդ աղջկանց վարժարաններէն խսպառ արտաքսուէին բալոր այն ուսումներ եւ զիտութիւններ, որք գործնական կենաց համար անհրաժեշտ պէտք չեն. ասոնց համար ի զուր կը վատանուի թանկազին ժամանակ, Զեր չէ յանձանք որ այժմ ի զուր կ'աշխատիք գործ գտնել. ճիշտ գործի մարդոց անհրաժեշտ պետք եղածէն շատ քիչ գիտութիւն ունիք : Ճար չկայ, պէտք է ինքնօգնութեամբ պակասն ձեռք ձգել եւ առայժմ լոկ «հացի բարա» շանելու համար տեղ մը մտնել . ո՛չ, բնաւ ամօթ մի սեպէք, մարհամարհէք, ո եւ է համեստ աշխատութիւն, խոնարհեցէք, եւ պիտի բարձրանաք — այս է բարձրացումի միակ ճանա-

պարհ. — Անգործ պարտելով պիտի վետառուիք, մանաւանդ մոլութեանց պիտի հետեւիք . շատ շիտակ է բանասակղծին սա խօսք. —

«Սատանան ծոյլին համար,

Ունի անթիւ, անհամար

Հրապուրիչ որոգայթ .

Օր մը եթէ հոն ինկար

Դուրս ելլելն է խիստ զժուար,

Վարձքդ ըլլայ «խղճի խայթ» :

Տօքրօ. — Արեան թունաւորման նորագոյն գարմանն գտած է Տօգ. Պարրոզ ի Նիւ-Եօրք. ֆօրմալին կը ներարկէ երակներուն մէջ :

Պատուելի. — Բրօք. Կրքի ելից գրքին յիշած Փարաւոնին մումեան գտած է. այս մումեան ցարդ Ամենօֆիս Գ. Փարաւոնը կը կարծուէր. սակայն բրօքէսօրը կը վստահացնէ թէ նա Մէնէքթա Բ Փարաւոնինն է. սա է Ելից գրքին յիշած Փարաւոնը :

Գ. Գ. Ա. — Զեռքերնուդ դողալն ,

եթէ ոգելից ըմպելիքէ չէ յառաջ եկած,  
կրնայ բուժուիլ, ամէն օր 3-4 ան-  
գամ ձեռքդ մինչեւ արմուկդ, քա-  
ռորդ ժամու չափ, պաղ ջրոյ մէջ դիր,  
եւ յետոյ բրդեզինով մը լաւ մը շփէ,  
մինչեւ տաքնայ, յարատեւէ մի քանի  
ամիս :

Վարժուիի . — Մի սրանեղիք, յի-  
շեցէք օր դուք ալ մանուկ էիք, նո-  
որ կը մանայ իր մանկութիւն, չէ  
կարող ըլլալ լաւ ուսուցիչ :

Քահանայ. — Քարողին դժուար  
չէ, կատարելն, օրինակ ըլլալն է  
դժուար, մի ցանկաք ճոռուարան  
ըլլալ, այս բնական ձիրք է . ամե-  
նուն չէ տրուած, Տէր Յիսուս Ձեզ  
օրինակ ըլլայ, ի՞նչ պարզ են Անոր  
քարողներ, Նմանեցէք մեղուին, սա  
կը մանէ ծաղկին մէջ, կառնէ մեղր  
եւ կը տանի փեթակին մէջ կը դե-  
մեղէ, կը վերագառնայ ծաղկին, կ'առ-  
նէ նորէն մեղր եւ փեթակ կը տանի:  
Դուք ալ Սուրբ Գրոց մէջ մտէք —

Զայն լաւ ուսումնասիրեցէք — առէք  
անկէ մեղրը «հացն», ջուրն կենաց»,  
«փրկութեան գինին», «անխարդախ  
կաթը», եւ տարէք փեթակ — ձեր  
ունինքիրներուն պրտերը — Այս է  
քարոզի գաղանիք :

Դաճնակահար . — Խօնաւութիւն  
կը վնասէ դաշնակին լարերուն . չոր  
տեղ զիր զաշնակդ . օգի հրսանք  
չըլլայ, փոշի, ասեղ, գնտասեղ, հացի  
փշանք, կը վնասեն, մանաւանդ  
զաստակներուն, Գիրք մի դնէր դաշ-  
նակին վրայ, ձայնը բամք կըլլայ, երբ  
չես ածեր, կղզէ, փայլը պահելու  
համար հին մետաքս գաշկինակով  
շփել կը բաւէ, երբ դաստակ մը վեր  
չելլէր, նշան է խոնաւութեան:

Տիկին Ռ. Տ. — Երբ ականջդ խօսի  
վաստան եղիր թէ պաղ ես առած եւ  
ճարը տես, պատաւներուն ըստծնե-  
րուն ականջ մի կախէր, սրոնք ա-  
կանջը խօսելուն եւ ձեռքը — ափը —  
քերուելուն եւլն . տեսակ տեսակ

մեկնութիւններ կուտան :

Սկեպտիկ . — Միայն մէկ հարցում,  
0'ն ըսէ. հա՞ւը հաւկիթէն է գոյացած  
թէ հաւկիթն հաւէն. որ կողմ որ  
դառնաս առաջին հաւին կամ — եթէ  
կուզես — առաջին հաւկիթին արա-  
րիչ մը պարտիս ընդունիլ : Այդ է  
Աստուած :

Անդուն . — Մեզրը քնարեր է .  
պառկելէ առաջ 1-2 անուշի դժու  
մեզր կեր, սնուցիչ, արիւն շինող եւ  
ջիղեր հանդարտեցնող ալ է մեզր .  
մեզր կերէք :

Տիկին Շ. Մ. — Օքը կը փոխանցէ  
ծաղկախափ միքրոպներն, ուստի եթէ  
վարտկեալ թաղէն չէք կրնար ատեն  
մը հեռանալ, գոնէ թաղին վարտկ-  
եալ կողմի պատուհաններն միշտ գոյց  
պահեցէք :

Մայրիկ . — Տանդ մէջ պահէ չիւ  
մը Ամօնեաքի հեղուկ — աժան է — ,

երբ մեղու, իշամեղու, մժեղ. կարիճ,  
օձ — առանց թոյնի — խայթէ, քսէ  
զեղէն եւ բորբոքում ու ցաւ իսկոյն  
կանցնին :

—○—○—○—

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ

### ՄԱՐԶԱՆԻՔ

Շարժումը առողջութեան նպաս-  
տով կարեւորագոյն միջոցներէն մին  
է: Նա էն առաջ շնչառութեան եւ  
մարսողութեան կը նպասէ որով  
նաեւ մարմնոյ սննդառութեան: Ապա  
անով մկաններն ու ջիղերն կը զօ-  
րանան եւ ի վերջոյ նա մեծ ազդե-  
ցութիւն ունի հոգեկան կենաց վրայ:

### Օգտակար է:

1. Կանոնաւոր, տարիքին եւ մարմ-  
նոյ զօրութեան համապատասխանող  
մարմնամարդ — շարժում — ընկել :

2. Մարմնամարզ շարունակել մինչեւ քրանիլ . երբ մարմին քրանիլ սկսի, նշան է թէ ջերմութիւն յառաջ եկած է :

3. Ամէն մէկ մարմնամարզէ ետեւ քիչ մը հանգչիլ . հանգիստ՝ մկաններուն սպառած նիւթն նորէն կ'արտադրէ :

4. Զի հեծնալ, բայց կերակուրէ առաջ, որով ախորժակ կը բացուի եւ մարսողութիւն կը զրգառի :

5. Զիարչաւէն ետեւ հանգչիլ, դէմք ու ձեռքիր լուալ եւ հանգերձներն փօխել :

6. Լողալու վարժութիւն ընել. որով մկաններն կը զօրանան եւ խորունկ ու կանոնաւոր շնչառութիւն յառաջ կուգայ :

7. Ման գալ բացօթեայ տեղեր, եղանակն ինչ որ ալ ըլլայ, այս թէ շարժում է եւ թէ թարմ օղի ներշնչում :

8. Լեռներու վրայ պտոյտ ընել, որով շնչառութիւնը կը կրթուի եւ սրախն գործողութիւնը կը նպաստուի:

9. Պայոյտի ատեն երբեմն հանգիստ եւ խոր շնչառութիւն ընել :

10. Զմշկել, թիալարել, առաջինով մարմին տոկուն կ'ըլլայ, երկրորդով կուրծքի մկաններն կը զօրանան եւ թոքերն խոր շնչառութեան կը վարժուին :

11. Գնդակ խաղալ, այս եւ ասոր նման անդամներն շարժման մէջ գնող խաղեր շատ նպաստաւոր են, մարմնոյ ընդհանուր առողջութեան եթէ չափն զիտնանք :

### Ապառողջ է

1. Ստամոքս լեցուն եղած ատեն կամ չափաղանց շատ ջուր կամ ուրիշ ըմպելի խմելէ ետեւ մարմնամարզ ընել :

2. Չափաղանց մարմնամարզ, աշխատութիւն եւ շարժում վեասակարէ, շարժման եւ հանգստեան ճիշտ չափն եւ սահմանն գտնել — այս է խնդիր կարեւոր :

3. Մարմնոյ մասերն սեղմ հանդերձներով ճնշել, արեան շրջան եւ

Հնչառութիւն կարգիլութին ասով՝,  
Սեղմիրան — քօրսէ :

4. Այնպիսի շարժումներ ընել որ  
ոչ տարիքին եւ ոչ մարմնոյ կազ-  
մութեան կը յարմարին. տարիքին եւ  
մարմնոյ կազմուածքին համապա-  
տասխան ըլլալու է շարժում եւ աշ-  
խառութիւն :

5. Միայն մարմնոյ մէկ մասն զօ-  
րացնող շարժումներ : Անանկ մարմ-  
նամարդ ընելու է որ մարմնոյ ամէն  
մի մաս անկէ նպաստաւոր ազդեցու-  
թիւն կրէ :

6. Յոզնեցուցիչ աշխատութիւնով  
սկսիլ. աշխատութիւն, շարժում առ-  
տիճանաբար յառաջ տանելու է, եւ  
ոչ թէ մէկէն ի մէկ բուռն կերպով  
սկսելու է :

7. Մարմնամարզի համար կատար-  
ուած շարժում օրը ժամէ մ'աւելի  
ըլլալու չէ, աւելին պաղառութիւն  
յառաջ կը բերէ :

8. Զիով պտոյտ ըրած ատեն ոչ  
ուտելու եւ ոչ խմելու է :

9. Երբ անզօր եւ կուրծքով ակար

ենք, պէտք չէ բարձր լեռներ ելնել,  
քանզի չնչասպառ եւ քրանաթոր  
լեռան գլուխ կը հասնինք :

10. Կէս զիշերներ կամ ամբողջ  
զիշերներ պարելն խիստ վնասակար  
է, մանաւանդ երբ աելք փոշիոտ է,  
որաի խանգարում — յանկարձամահ —  
եւ թոքերու գործողութեան աւերտում  
— թոքախառ ասոր հետեւանք են :

11. Թիալվարել եւ լողալ չափաւոր  
կերպով, երբ անցնի չափ, սրափ հի-  
ւանգութեանց պատճառ կ'ըլլան :

12. Տեղ մը համնելու համար, —  
շոգենաւին, կառախումբին — չափա-  
ղանց աճապարելն մահասիթ է. շա-  
տեր ինկած եւ մեռած են :

13. Իղական սեոին մարմնոյ կազ-  
մութիւն արականէն չատ նուրբ ըլ-  
լալով, անոնց համար շարժման եւ աշ-  
խատութեան թէ չափն, թէ եղա-  
նակն եւ թէ աեւողութիւն տոնա-  
կանէն տարբերելու է :

### ՀԱՆԳԵՐՉ

Օղին եւ կլիմային ազդեցութենէն

զմեզ պաշտպանելու եւ մարմնոյ ջերմութեան կորուսար արգիլելու համար հանդերձ կը հաղնինք . հանդերձներն թէ չափազանց քրախնք պատճառելու չեն եւ թէ մեր ջերմութիւն անանկ վիճակի մէջ պահելու են որ դուրսի օդէն աղջուելով պաղառութիւն արգիլուի : Եղանակին, հովին տեսակին համեմատ պէտք է հանդերձներ կարգադրել, մարդս պէտք է իր հանդերձներուն մէջ հանդիսաց զգայ . նախ հանդերձ պէտք է մարմին պաշտպանէ, ապա մարմնոյ դործողութեանց արգելք չըլլայ եւ էն վերջ մօտան նկատողութեան առնուի :

### Օգտակար է

1. Ներքին հանդերձներն անանկ նիւթէ շինել որ մարմնոյն քրախնքը ծծեն եւ պաղէն պաշտպանեն :

2. Ամեն գիշեր, գիշերուան երկայն շապիկ — գիշերանոց — հաղնիլ. վերէն մինչեւ ոսից կրունկ, օրուան շապիկը հանելով եւ օդի ենթարկել, Գիշերանոց ոչ թէ ծալլել եւ բարձին

տակ դնել, այլ ամբողջ օր օդին մէջ կախիլ :

3. Լայն հանդերձներ, որ տաքցնող նիւթէ շինուած ըլլան : Շատ ցուրտ ատեն կրկին հանդերձ հագնիլ :

4. Մերկ մարմինին վրայէն ֆանելա հաղնիլ, մանաւանդ եթէ բացողեայ տեղեր պարտիս աշխատիլ :

5. Ամառը բաց գոյն հանդերձ հաղնիլ, պատճառն յայանի է, վրզը բուրովին աղտտ թողուլ, արեան շրջան վիզին մեծ երակներէն չարդիկելու համար . կաթուածի ենթականերն մանաւանդ այս կէտ ուշաղութեան առնելու են :

6. Կուրծքը շրջապատող հանդերձներ անանկ յարմարելու են որ սիրտ եւ թոք աղւոր գործել կարենան, մանաւանդ մանկական հասակին մէջ: Թոք պարտի խոր շնչառութիւն ընել որ զօրանայ : Թոքախտ, հիւծախտ, — վերէմ — այս կանոն զանց ընելէ կուգոյ :

7. Ամառը բամպակէ եւ ձմեռը

մորթէ ձեռնոց դնել : Տափասներն  
առաջական լարերով — ասկը —  
հաստահել :

8. Զմեռը բրդէ, ամառը բամպակէ  
գուլպայ հագնիլ, եւ ամեն օր փո-  
խել, եթէ սաք քրանին . այրերուն  
գուլպան մինչեւ զարշապարին ու  
ծունկին մէջ տեղ հասնելու են. կա-  
հանցն մինչեւ ծունկէն ալ վեր :

9. Ուաքը կօշիկին մէջ հանգիստ  
ընելու է եւ մէջը շարժելու միջոց  
ունենալու է :

10. Մերկ սաքով պէտք է սաից  
ձեւն գծել տալ կօշկակարին, մանա-  
ւանդ փոքրիկներու համար, եթէ կու-  
շենք սաից ձեւն պահել եւ նաորրէ  
զերծ ու ազատ մնալ :

### Սպառողչ է:

1. Գլուխը շատ սաք պահել . ա-  
րինը զլուխը կը հոսէ, մանաւանդ  
տղայոց համար այս կանոն պահելու  
է, զի արդէն անոնց արիւն հակամէտ  
է միշտ զէպի ուղեղ վազել :

2. Սենեակին մէջ զլխանոց դնել,  
որով զլխուն արտաշնչութիւն կ'ար-

գիլուի :

3. Նեղ օձիկներ, փողկապներ,  
քրավաթներ, ասոնք երակներն կը  
ճնշեն, զլխու ցաւ, զլխու պտոյա,  
ականջի խօսում, մանաւանդ կաթ-  
ուած, ասկէ կը պատճառին :

4. Վիզը շատ սաք պահել, վիզի,  
չնչափողի հիանդութիւնք յառաջ  
կուղան վիզ շատ սաք պահելէ :

4. Քորոէ, չնչափութիւն կ'արգիլէ,  
փայծազն եւ մազձանօթն կը ճնշէ  
որով մննդառութիւն խիստ կը գժուա-  
րանայ : Անարիւնութիւն, զեղնոտու-  
թիւն, սրտի բարախում, կուրծքի  
անզօրութիւն, այս զժբաղդ մօտա-  
յին հետեւանքն են : Կենսական  
զլխաւոր գործարաններն սեղմելով՝  
մարմնոյ զարգացում, աճում կ'ար-  
գիլուի, կը խանգարուի, առանց  
մարմնոյ բարեձեւութեան նազատե-  
լու, ուսերն վեր կը մղուին, ողնա-  
յար կը ծոփ, զի զլխուն ծանրու-  
թիւն չէ կարող տանիլ . հետեւանք  
ի վերջոյ — վէրէմ — :

5 Տափատը մէջքէն լարով մը հաս-

տատել, զի ստամոքս եւ փայծաղ կը  
ճնշուին :

6. Գուլպայի ձիգ — սրգը — կա-  
պեր, մորթին տակի երակներ կը  
ճնշուին, եւ արիւնը սրունքներէն ի  
սիրա կը խուժէ, ծունկի ցաւեր անկէ  
կուգան, նեղ կօշիկ, արեան շրջանն  
դէպի ստքերն կ'արգիլէ, ձմեռն ստ-  
քերն չեն տաքնար, պաղ քրախնք  
կ'արտադրեն :

7. Շատ լայն կօշիկ, զի ստքը միշտ  
գէպ յառաջ կը սահի, մատերուն  
ծայրերն կօշիկին ծայրին կը բախին  
եւ եղունքներ միսին մէջ կը թաղ-  
ուին եւ ցաւալի հետեւանք կ'ունե-  
նան :

8. Շատ բարձր կրունքով կօշիկ,  
մարմինին բալոր ծանրութիւնը ստ-  
քին թաթին վրայ կը մնայ, որով  
ջիղերն իրենց բնական վիճակէն  
կ'ելլեն :

9. Լասթիք մանթոներ, վերաբ-  
կուներ, ասոնք իբր թէ մարդուս  
մորթը անթափանց նիւթով կը պա-  
տեն եւ արտաշնչութեան արտաք-

սում կ'արգիլեն, եւ խոնաւ տաքու-  
թիւն մը կը ստեղծեն : Շատ տաք-  
ցնող հանդերձներ, ան որ նղանակին  
եւ օդին ամեն փափախութեան հան-  
դերձի փոփոխութեան կը զիմէ, խիստ  
օդին դիմազրելու կարողաթիւնը կը  
կորսնցնէ, անանկ որ ալ թշուառ  
գերի մը կ'ըլլայ հանդերձներու : Մար-  
մինը դիմացկուն ընելու համար ծայ-  
րահեղութեան երթալ եւ հանդերձի  
մասին անհոգ ըլլալ . շատեր այս  
կարծեցեալ քաջութեան զոհ են ե-  
ղած : Երախաններ խանձարուրի մէջ  
փաթթել, — զունտագ — ասով փոք-  
րիկ անդամներուն շարժումն կ'ար-  
գիլուի : Շարժում կենսական ոկտօք  
մէ մանկիկին : Ի վերջոյ մանկիկին  
զլուխը հաստ բուրդէ զթակներով  
տաք պահել, զլխին արտաշնչման  
արտաքսումը ասով կ'արգիլուի եւ  
զլխուն փափուկ մորթին վրայ մնա-  
սակար ազդեցութիւն կ'ընէ, իկ կ'ըլ-  
լան մէկ խօսքով :

Հոգեխօսական մարմնամարզ . —

Շատ անգամ կը պատահի որ մէկէն  
ի մէկ չէք կրնար ընել բան մը , զոր  
կ'ուղէք սակայն : Տիսուր էք ,  
տիսուր մտածումներ կ'ունենաք , կ'ու-  
ղէք վանել զանոնք , է՞ն , չէք կրնար  
այնպէս չէ՞ , բայց գոնէ կրնաք եր-  
գել . երգեցէք ուրեմն . իրաւ է որ  
առաջները դժուար պիտի գայ ձեզի  
այս բան , բայց այս սովորութիւն  
պիտի ըլլայ : Առտուն կանուխ կ'ու-  
ղէք ելլել , բայց տաքուկ , կակողիկ  
անկողինը չի թողուր որ հեռանաք  
իրմէ , ձեր սիրած մէկ հատորը դրէք  
ձեր բարձին վերեւ , այս ինչ ձեր  
աչքը բանաք , հատորը պիտի տեսնէք ,  
ձեռքերնիդ պիտի առնէք , մէկ քա-  
նի էջ պիտի կարդաք , բայց ալ մնաս  
բարով քուն , շարունակեցէք ատիկա  
մէկ քանի օր , ու պիտի տեսնէք որ  
ալ սովորութիւն պիտի ըլլայ ձեզի  
համար՝ կանուխ ելնելը : Կամքեր-  
նուդ տէրն եղած պիտի ըլլաք յիշ-  
ուած այս երկու պարագաներուն մէջ :

Պտուղը արբեցողներու համար . —

Ժուժկալութեան վրայ զրող Եւրո-  
պական թերթի մը մէջ յօդուածա-  
ղիր մը ուշադրութիւն կը հրաւիրէ  
սա բանին թէ պատողները գեղթափ  
են արբեցութեան դէմ : Կըսէ , «Գեր-  
մանիոյ մէջ , որ չատ մը երկիրներէ ա-  
ւելի յառաջ գոցած է առողջապա-  
հութեան մասին , ալքոլախտին դէմ  
պայքար կը մղուի յաջողապէս՝ որ-  
գեղբելով պարզ կերակուր եւ բնա-  
կան բուժիչ ազգակներ : » Լսած եմ  
թէ թարժ պատողներու զործածու-  
թիւնը գեղթափ է խմառուքի փափա-  
քին դէմ , եւ ճշմարիտ է : Հանդի-  
պած եմ մարդոց որ պատմած են  
ինձի թէ պատողը յաճախ ջնջած է  
խմելու փափաքը : Կրնայ հարցուիլ  
թէ ի՞նչպէս կրնան պատուղը եւ պարզ  
ուտեսաը յառաջ բերել այս մեծ ար-  
դիւնքը : Բացասարութիւնը պարզ է :

Տղոց համբոյրը . — Մեր ունեցած  
վանդաւոր սովորութիւններէն կայ  
հատ մալ որ չատ անիմաստ բան մ'է .  
յայտնի է որ ծնողքները համբուրել

կուտան իրենց գաւակները , ամէն հանդիպողին . Խեղճ պղտիկները դժկամակութեամբ կ'ընեն այդ բանը , բայց զիտի՞ք թէ ի՞նչ կ'ըլլայ արդիւնքն այդ համբոյրներուն , կարմրախտ , ծաղիկ , եւ գեռ բազմաթիւ տղայոց յասուկ հիւանդաւթիւններ մէկէն միւսին կը փոխանցուին անդպալքար : Մեծերն հոգ չէ , թող համբուրուին , վերջապէս իրենք կրնան հասկնալ համբոյրին հետեւանքները , եւ կրնան զանազանել թէ զիմացինը հիւանդ է կամ ո՛չ , բայց ի՞նչ յանցանք ունին սա անմեղ պղտիկները . որ անպատճառ կը բանագաատւին հասած մարդուն զիրկը նետուելու եւ համբուրելու զանիկա :

Բնախօսները , բժիշկներն եւ առողջաբանները փորձով կը հաստատեն Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ թէ եղան միսն աւելի մննդարար է քան ոչխարինը : Եթէ ոչխարն այնքան անժխտելի գերազանցութիւն

մունենար , Եւրոպա եւ Ամերիկա դժուարութիւն պիտի չքաշէին հիմակուընէն աւելի մեծ քանակութեամբ ոչխարի կիր արկանելու հանրային սնունդին : Բայց հոն զիտմամբ եւ զիտակցարար է անշուշտ որ նախապատռութիւն կը տրուի եղան միսն : Եղան միսն աւելի մննդարար եւ զիւրամարա գանելնուն համար է որ իրենց հիւանդանոցներուն , զիշերօթիկ գպրոցներուն եւ որբանոցներուն մէջ հիւանդներու , տկարակազմներու եւ մանուկներու եղան միս կուտան իրրեւ միօրինակ մնունդ : Ամէնէ հարուստներն եւ մեծամեծներն ալ նախամեծար կը սեպեն եղան միսը , եւ ոչ թէ եղ կ'ուտեն ինայութեան համար : Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ ոչխարը կը նկատեն ինչպէս մենք կը նկատենք գառնուեկը , իրեւ համեղ բերանփոխ , կամ չերեղ , մինչ մնայուն եւ ընդհանուր սնունդի նիւթն եղան միսն է :

Պոլսոյ մէջ համեմատարար ամենէն աւելի ոչխարի միս սպառող տար-

բերն են թուրքերն եւ Հայերը, որք  
իրենց հետ Փոքր Ասիային ժառանշ-  
գաբար բերած են ոչխարին արուած  
առյուն նախապատռութիւնը: Յոյներն  
եւ Հրեաներն համեմատապէս աւելի  
ձուկով եւ ձկնեղէնով կը մնանին.  
Յոյները, որովհետեւ իրենց նախա-  
հայրերը ծովային ցեղ մ'էին, եւ  
Հրեաները, որովհետեւ ձուկը աժան  
կուզայ իրենց, քանի որ բրդայի  
խնդիր չկայ, մինչդեռ Խախտարա-  
նին արուելիք տուրքին պատճառաւ,  
միան իրենք աւելի սուզ կը գնեն քան  
ուրիշ ցեղեր: Իսկ Պոլսերնակ Եւրո-  
պացիք աւելի եղան միա, լաւ տե-  
սակ ձկնեղէն եւ հաւեղէն կ'ուտեն  
քան ոչխար: Բնիկ ժողովրդական  
դասակարգը մեծագոյն յաճախորդն  
է Գարաման ոչխարի:

—  
**Դիեցում**

Գաղղիացի գիտաւն մանկաբոյժ մը՝  
Տոքթ. Բինառ, պարզ, գիւրըմբոնելի  
ոճով, ապագայ մայրերուն պարզեց  
դիեցման եղանակը, բացատրեց թէ

օրը քանի անգամ եւ ո՛րչափ ժամա-  
նակ պէտք է կաթ տալ մանուկնե-  
րուն: Գոնէ, ըստ, առնուազն 12  
ամիս, եւ առառաւելին 15 ամիս,  
իսկ օրը 7-10 անգամ կաթ տալու է  
տղուն. շեշտեց թէ կրնայ ըլլալ որ  
աղեկը զոհ չմնար եւ կուլայ. բայց  
դարձեալ բնաւ պէտք չէ ագկէ ա-  
ւելի կաթ տալ: Տղուն առողջու-  
թեան մեծ վնաս է կաթ տալով քնա-  
ցնել ու ձայնը կարել, խիստ վնա-  
սակար է նաեւ ամառուան չորս տաք  
ամիսներուն, Յունիս, Յուլիս, Օգոս-  
տոս ու Սեպտեմբեր՝ տղան կաթէ  
կարել: Ահա աղաքներուն զիեցման  
էն նախնական եւ անհրաժեշտ կա-  
նոնը:

—  
**Ճիւծախ**

Թրանսացի բժիշկի մը ոտանաւոր  
պատռէրները՝ ուղղեալ թոքախտա-  
ւորներու: Առողջապահութեան՝ պիտի յարիս  
Ամեն կանոններուն՝ մտադրութեամբ:  
Զափաղանցութենէ պիտի խորչիւ

Մանաւանդ ալքոլէ՝ ամէն մասամբ։  
Բերանըդ, ակոաներդ պիտի մաքրես  
Առաւու եւ իրիկուն հոգածութեամբ։  
Քեզ նայող թժչկին պիտի հետեւիս  
Ամեն պատուէլներուն՝ մեծ ճշգու-  
թեամբ։  
Անկողինը պառկած պիտի հանգչիս  
Երբոր հիւանդանաս եւս տաքու-  
թեամբ։  
Եւ երբէք գետին պիտի չթուքնես,  
Այլ թքամանի մը մէջ մաքրութեամբ  
Եթէ չունիս զանի, պիտի թուքնես  
Թաշինակիդ մէջը զգու շութեամբ։  
Թաշկինակդ պիտի հականեխես  
Սօսալի տաք ջուրով արագութեամբ։  
Միշտ բացօթեայ կեանք պիտի վարես,  
Զը հիւանդանալով ցրառառութեամբ։  
Ամեն առառու լոդանք պիտի առնես  
Զորցնելով սակայն սասաթիկ շփմամբ։  
Ամեն օր հինգ անգամ պիտի ուահես  
Միս, հաց, հաւկիթ, կարագ առա-  
տութեամբ։  
Խմուած կաթն ալ պիտի ամլացունես  
Հնդ միշտ եփ հանելով շատ եռաց-  
մամբ։

Գարեջուր կամ զինի պիտի խմես  
Ճաշերու ժամանակ ժուժկալու-  
թեամբ։  
Հանգիստ եւ մտազիւր պիտի մարսես  
Զլուանք ընելով անդորրութեամբ։  
Ա.փրողիաէի զո՞ս պիտի մատուցանես  
Մեծ խոհականութեամբ, զգաստու-  
թեամբ։  
Մարմնամարզ ամեն օր պիտի ընես  
Մեթուաւոր կերպով, ոչ յոզնու-  
թեամբ։  
Երգ երաժշտութիւն պիտի ածես,  
Նաեւ ուրիշ արուեստք յօժարու-  
թեամբ։  
Վիշտ հեռու պիտի աշխատիս  
Աղէկնալու համար ամբողջութեամբ։  
Եւ այսպէս ահա պիտի ապրիս  
Երկար ժամանակ առողջութեամբ։  
Ակիւզապ

### Ֆիծաղ

Զուարճախօսութիւնն իր դերն ու-  
նի աշխարհիս մէջ։ Մարդ մը որ  
կրնայ ուրիշները ծիծաղեցնել, կրնայ  
մեծ օրհնութիւն ըլլալ իր ընկերնե-

ըուն : Կան ժամանակներ երբ ամենէն աղէկ օգնութիւնը զոր կրնանք ընել բարեկամի մը, զանիկա ծիծադիցնել է : Իմաստունը կ'ըսէ : «Ուրախ սիրաը դեզի պէս օգտակար է» Սրաազին ծիծադը կը բուժէ շատ մը հիւանդագին զգացումներ, վարելով մելամաղձութիւնները, եւ մարդու մը կեանքին ամբողջ երեւոյթը փոխելով :

Ծիծադը բարի սրտի եւ բարի խղճի նշան է : Շեյքսփիր քանի մը անհաճոյ բաներ խօսած է իր հոգւոյն մէջ երաժշտութիւն չունեցող մարզուն վրայով : Ուր որ երաժշտութիւն չի կայ, ամէն չարիք հան է : Երկրիս վրայ ոչինչ կայ աւելի գեղեցիկ քան մանկութեան զուարթ ծիծադը : Մանկական սրտի անմեղութեան եւ պարզութեան աղբիւրին յորդումն է այն : Նշան է տակաւին մեղքով չափականուած եւ աշխարհիս չարիքներով չվիրաւորուած հոգիի մը ինքնաբուխ, երջանիկ ծի-

ծաղը միշտ կը յայտնէ բարութիւն, եւ երբեք չծիծաղող մարզը պէտք չէ որ մեղաղը իր ընկերները եթէ անոնք խորհին թէ ծուռ բան մը կայ իր կեանքին մէջ, մութ բան մը՝ իր ներսի դին : Եթէ ջուրերը գառն են միայն, աղբիւրը չկրնար անոյշ ըլլալ :

Մինչեւ անողամնեղութիւնը պէտք չէ որ մարէ ծիծադը : Վիշտը չատ անզամ մութ ջրհեղեղի պէս կը խուժէ մարդկային կեանքերու վրայ եւ երբեմն կրնայ այնպէս թուիլ թէ այնուհետեւ կարելի չէ որ սրտին մէջ ուրախութիւն ըլլայ : Բայց թէպէտ վիշտը մեծ ըլլայ ալ, ուրախութիւնը պէտք է մնայ . . .

## ԲԺՇԿԱԿԱՆ

Մեռելները կ'ողջննան . . . — Հրաշալի զիւտերու զարը նոր կը սկսի : Ուուս բժիշկ մը, Տքթ. Քուլաբք,

կարգ մը հետաքրքրաշարժ փորձեր  
կատարեր է, մեռած մարդոց սիրալ  
վերակենդանացներու համար։ Տոք-  
թորը մինչեւ հիմայ իր փորձերը ա-  
նասուններու, մամնաւորապէս ճա-  
զարներու վրայ կատարած էր, բայց  
հիմայ յաջողած է հետաքրքրաշարժ  
արդիւնքներ ձեռք բերել մարդկային  
սրտին վրայ ալ։ Այս տարի օգոստո-  
սին Տոքթ. Քուլարք սկսաւ իր փոր-  
ձերը, ընկեցիկներու հիւմնդանոցին  
մէջ մեռած տղաքներու սիրանըուն  
վրայ։ Առաջին երկու սիրտերը, ո-  
րոնք բաւական առաջ մեռած էին,  
գործողութեան ենթարկուեցան, բայց  
ո եւ է արդիւնք չտուին։ Ուրիշ առ-  
թիւ մը բժիշկը փորձ կատարեց քսա-  
նըչորս ժամ առաջ մեռած մանկան  
մը սրտին վրայ։ Իր գործիքին տակ  
դրաւ սիրտը եւ սկսաւ զննել։ Պահ  
մը առանց արդիւնքի դիտելէ վերջը,  
բժիշկը փորձը դադրեցնելու վրայ էր  
երբ յարակից սենեակ մը կանչուե-  
ցաւ։ Քսան վայրկեան չէր անցած  
երբ վերադառնալով անուաւ թէ

աղուն սիրտը բնական կանոնաւու-  
րութեամբ կը բարախէ եւ զործի-  
քին որոշ մէկ մասը կ'արձանազրէ  
բարախումները։ զարկը երթալով  
աւելի կը զօրանար եւ կը կանոնա-  
ւորուէր։ Սիրտը գրեթէ ժամ մը շա-  
րունակեց բարախնել։ Ասկէ կը հե-  
տեւի թէ սրտին վերակենդանացումը  
կարելի է։ բայց ճագարներու վրայ  
եղած փորձերէն աւելի երկար ժա-  
մանակ կը պահանջէ։ Տքթ. Քուլարք  
կ'ըսէ թէ առաջին փորձը անոր հա-  
մար անյաջող եղաւ, որովհետեւ  
սիրտերը շատ չուտ հեռացուցած էր  
գործիքէն։ Վերջին կատարուած  
փորձերէ հասկցուած է թէ վերա-  
կենդանացումը կը սկսի 20էն մինչեւ  
70 վայրկեան վերջը։

Տքթ. Քուլարք կը հաւատայ թէ իր  
գործիքը կատարելագործելով, կարելի  
սիրտի ըլլայ բացարձակապէս վերա-  
կենդանացնել խեղդաման եղած մար-  
դոց սիրտը։ Տոքթորը կը կարծէ թէ  
արուեստական չնչառութեան գոր-  
ծողութիւնը պէտք է աւելի երկար

շարունակել, կենդանութեան ամեն  
նշան անհետանալէն վերջն ալ, որով-  
հետեւ շատ մը պարագաներու մէջ  
սրտին գործողութիւնը կրնայ վե-  
րսկսիլ :

Տքթ.ք կ'ըսէ թէ մինչեւ այսօր ո-  
եւ է փորձ չէ եղած կօքի աղային  
լուծաջուրը գործածել, մարդկային  
սրտին մէջ արուեստական շրջան յա-  
ռաջ բերելու համար : Կարդ մը հի-  
ւանդութիւններու մէջ սրտին շրջա-  
նին գաղարումը կամ սրտին մեսած  
բլալու նմանութիւնը շնչասպառու-  
թիւնէն յառաջ չիդար, այլ կարդ մը  
նիւթերու աձելէն. ասկէ հիւսկէննե-  
րու լարայեղութիւն (metabolisme)  
աեզի կունենայ : Լուալով ասիկայ  
անհետացնելէն վերջը, սրտին չափա-  
րերական գործողութիւնը կը վե-  
րսկսի :

Երանի անոնց որ կը հաւատան :

Խրական մահը առերեւոյք մահէն  
ոռուելու նոր կերպեր . — Կերպերէն  
մին է մորթին վերնամաշկին ներքեւ

ներարկել հեղուկ մը եւ յետոյ նայիլ  
թէ այդ հեղուկը ծաւալած է կազ-  
մութեան մէջ : Եթէ ծաւալած է,  
ուրեմն արիւնը շրջան կ'ընէ եւ  
կեանքը կը շարունակէ, թէպէտ  
կրնայ ըլլալ որ սրտին բաբախումը  
չնշմարուի ականջ գնելով : Ներարկ-  
ման համար յանձնարարուած նիւթե-  
րուն կարգէն են վիլորեսին, աօժում  
իօսիս, յիրիում, եւ փօրասիում ֆեր-  
րուիանիս : Նախապատռութիւնը կը  
արուի վիլորեսինին, որուն 1 կրամը  
(15½ ցորեն) կը հալուի հաւասար  
ծանրութեամբ աօժում բարպօնարի  
հետ 8 խորանարդ հարիւրակրամ  
(կէս խորանարդ մատնաջափ) ջուրի  
հետ եւ յետոյ ամբողջ քանակութիւնը  
կը ներարկուի : Եթէ արեան շրջանը  
կը մնայ գեռ, մորթը եւ լորձնագա-  
ղանդները քանի մը վայրկեան ետ-  
քը գեղինի մօտ կանաչ գոյն մը  
կ'առնեն : Ներարկումէն քանի վայր-  
կեանի չափ ետքը աչքին եղջերիկին  
մէջի մասը կանաչ գոյն մը կը ստա-  
նայ, վիլորեսին սառնակերպ եւ ջրա-

յին հիւթերուն մէջ մտնելէն : Իսկ վիւօրէսինեին արիւնին մէջ մտած ըլլալը հետազայ կերպով կը հասկցուի : Մէկ կամ երկու բամազակ մանածի թել կ'անցուի մորթին տակէն նման խարսնի , եւ երբ արիւնը կը ծծեն , փորձի խողովակի մը մէջ կը փոխադրուին եւ քիչ մը ջուրի մէջ կ'եռացցուին : Երբ հեղանիւթը յստակի , վիւօրէսինեին կանաչ գոյնը յերեւան կ'ելլէ եթէ այդ մարմինը արիւն ծծած է : Կ'ըսուի թէ այսչափ մը վիւօրէսինեին ներարկումէն վտանգ չծագիր , ենթամթերելով թէ ներարկման ենթարկուողը ողջ է :

Կոյրերը պիտի տեսնե՞ն . — Բրօֆ. Բէդէր Ստինսի հիւնալի զիւտին վրայ առ այժմ հետեւեալ սողերով կը բաւականանամ : Անշուշտ լսած էք թէ լիշեալ բրօֆէսօրը կոյրերուն , ույն իսկ ի ծնէ կոյրերուն ահօնութիւն տալու միջոցը գտած է : Այս հրաշալի զիւտին մանրամասնութիւնները տակաւին ծանօթ չեն , որով

հետեւ մեծանուն հնարիչը՝ ընկլիք մէկ քանի կատարելագործութիւններ ունենալով , գաղանիքը զուրու չի հաներ տակաւին : Գիւտը սակայն կատարեալ իրականութիւն մ'է :

Տքթ. Գաղ պատառ մը տեղեկութիւն իւլելու համար անոր մասին , գացած է տեսնել Մ. Բէդէրը , որ սիրով ընդունած է զինք ու առաջնորդած փոքր մութ սենեակ մը , ուր աշքերը կապած են : Այս խոր խարին . մէջ Տքթ. Գաղ կը լսէ երթալ գալու ձայներ , լուցկի զարնուիլը , լամբի մը վասուիլը . բնականաբար ոչինչ կրնայ տեսնել : Եւ ահա յանկարծ գործիք մը կուգայ հանգչիլ իր երկու քունքերուն վրայ : Եղիցի լոյս , եւ լոյսը կը ծագի խոր խաւարին մէջ , այնպէս որ Տոքթորը կը նշմարէ իրեն ներկայացուած բաց ձեռք մը որուն երեք մասները կը համրէ : Լոյսին սասակութիւնը տակաւ առ տակաւ զօրանալով Տքթ. Գաղ կը տեսնէ սենեակին կահերը , երկու սեղան , ութ աթոս , զորս շատ

դիւրութեամբ կը համրէ : Փորձի ենթարկուած Տոքթորը կ'ըսէ թէ ելեկտրական հսուանքի մը անցնիլը կ'զգարեւ թէ իր սովորական տեսողութիւնը դժմելու վրայ էր . . . երբ դործիքը կը վերնայ իր քունքերէն ու խորխաւարը դարձեալ կը պատէ զինք :

Արեւի լոգանք . — Սւստրիական գիւղակի մը՝ Վէլզի դարմանատունն այս միջոցիս հիւրընկալած է յօդացաւ ունեցողներ, անարիւններ, թռաքախաւորներ, ջղաքարներ եւ նոր ապաքինողներ որ լոյսի լոգանք կ'ընեն : Դարման ընդունող հիւանդները կը բնակին անդուռ խցիկներու մէջ, որք շատ պարզ կերպով կահաւորուած են : Առառուն ժամ 6ին կ'ելնեն եւ կ'երթան ըլուրի մը դագաթն ուր դարաւոր ծառերով շրջապատուած մարգագետին մը կայ : Հիւանդներն իսկոյն կը հանուին եւ բաղնիքի անդրավարտիք մը հագնելով կը նստին մարգագետին վրայ եւ հաց, կաթ ու մեղր կ'ուտեն իբր նախա-

ճաշ : Յետոյ, ստքերնին բոպիկ, զլուխնին յարզէ զլխարկ մը միայն դրած, հիւանդները կը պատին, իրենց մերկ մարմինն օդի ու լոյսի կազդուրիչ ազգեցութեան ենթարկելով: Սակայն արեւը տաքցած է : Ժամանակ է ձշմարիտ լոգանք մ'առնել : Ծլուրին վրայ գտնուած չէնքը շատ նախնական վիճակի մէջ է : Զինական փախաթներով ծածկուած ասանիք մ'է, որու վրայ կը տարածուին հիւանդները ձշմարիտ մողէսներու պէս, եւ մէկ երկու ժամ արեւին ձառագայթներուն մէջ կը կենան այսպէս իրենց զլուխը միայն ստուերի մէջ է թեթեւ վարագոյներու միջոցաւ : Հիմա բացատրենք թէ ի՞նչ ազգեցութիւն կ'ընեն այս լոգանքները : Յայտնի է թէ առանց օդի կեանք եւ առանց լոյսի առողջութիւն չկայ : Ո՞չ միայն թոքերով կը շնչենք, այլ մորթով ալ, որու տակ թթուածինի կարօտը քաշով միլիոնաւոր գնտիկներ կը շրջաբերին եւ ուր կը յանդին լոյսի ծարաւ ջղային

նեարդներ : Արեւին լոյսը մեր հիւս-  
քէններունկեանքը կըզգպոէ, կըմտա-  
կէ եւ մեր գործարանները կը սնու-  
ցանէ : Մորթը կը գունաւորուի եւ  
հիւանդները կը կորսնցնեն իրենց  
տժունութիւնը : Կարսիր գնտակիկ-  
ներն աւելի շատ, աւելի ուժով կ'ըւ-  
լան, եւ աւելի զիւրութեամբ կ'ստա-  
նան թթուածինը : Լոյսն ալ առող-  
ջութեան թանկագին օժանդակնե-  
րէն մին է, եւ զարհուրելի միկրո-  
բին անողոք թշնամին : Հոն ուր  
լոյս չի մտներ, բժիշկը կը մտնէ յա-  
ճախ, կ'ըսէ հին առած մը :

Մահուան վայրկենին . — Ցու-  
րիսի Բրօֆ. Հայն, որ անդամ  
մը լեան ի վեր ելած ատեն վար գա-  
հավիժած է, միեւնոյն արկածի են-  
թարկուող զբօսաշրջիկներուն հար-  
ցուցած է զահավիժման պահուն ի-  
րենց զգացածը : Ինքն իրեն համար  
սապէս կը պատմէ . «Գահավիժմանս  
պահուն, այսինքն այդ մէկ քանի  
երկվայրկեանին մէջ զգացածս մէկ

ժամուան մէջ իսկ անկարելի է պատ-  
մել : Մտածումներս, գաղափարներս,  
պատկերներ ու դէմքեր արտասովոր  
արագութեամբ եւ յատակութեամբ  
կը ներկայանային մաքիս առջեւ : »—  
Ալպեան լերանց վրայ մաքլցելու  
մենամոլութիւնն ունեցող Վիմբրը  
անուն անգլիացին, որ 70 մէթր  
բարձրութենէ մը վար գլասորեցաւ,  
սապէս կը պատմէ իր արկածը . —  
«Գիտակցութիւնս չէի կորսնցուցած  
եւ զիաէի թէ ինչ կ'ըլլայի. ամէն ան-  
գամուան ընդհարումներս կը համ-  
րէի, բայց գեղերով զգայազիրկ  
եղած հիւանդին պէս ամենեւին ցաւ  
չէի զգար . ամէն նոր ընդհարումն  
քարերուն, բնականաբար առջի ընդ-  
հարումէս աւելի սաստիկ էր, եւ  
շատ լաւ կը յիշեմ թէ, կը մակարե-  
րէի որ յաջորդ ընդհարումս աւելի  
սաստիկ պիտի ըլլար, այսպէս՝ մին-  
չեւ վերջը : Բայց զարմանալին այն  
է որ գլասորելու պահուս այդ իրարա-  
յաջորդ ընդհարմանց ատեն անհաճոյ  
բան մը չէի զգար : »

Անգլիացի ծովակալ Պօֆոռ պատանեկութեան ատեն անգամ մը ծովն ինկաւ. իր այդ արկածը սապէս կը պատմէ . «Ազատելու համար ըրած ջանքերս երբ ա'լ դաղբեցան, ջղակտուր յուզմանս կատարեալ հանդարտութիւն մը յաջորդեց եւ այդ ալ զգայազրկութիւն էր եւ ոչ թէ համակերպութիւն վիճակին. վամն զի այլ եւս չզգացի թէ խեղդուիլը դժբախտութիւն մէ. ընդհակառակին, առաջուընէ աւելի հեշտ կ'զգացի ինքզինքս :» Մարդ մը որ ծանօթ է մեղ ամենուս իրրեւ մանրազնին հետախուզող, այն է Տարվին, կը պատմէ թէ դպրոցական տարիքին մէջ անգամ մը Շրէսպըրի դարատափին վրայ շրջագայած ատեն 7—8 սոք բարձրութենէ վար իյնալով, այդ պահուն իր մտքէն անցած դաղափարները չատ յանկարծագէպ եւ արտգասահ եղած են :

Տէրըբաս անուն ֆրանսացի զինուորական մը, պատերազմի մը մէջ զլիսուն եկած մէկ դէպքը սապէս կը

պատմէ . — «Թշնամիէն 50 քայլ հեռու ինկած էի վիրաւոր . չորս կողմէս զնտակները կը սուլէին . այնպէս որ ալ համոզուեցայ թէ անոնցմէ մէկն ալ ինձ հանդիպեւ լով պիտի մեռնէի : Այդ վայրկենին ամբողջ կեանքս իր ամենագոյզն մանրամասնութեամբ եւ արտասովոր յստակութեամբ անցաւ մաքէս, եւ կարծես դեռ աչքիս առջեւն է այդ ամենըն Մահուան վայրկենին մէջ, մարդուս անցեալ կեանքին դէպքերն համայնապատկերի մը պէս, միահազոյն տեսնուելու երեւոյթէն կը մակաբերուի թէ երեւակայութեան ոյժն է որ զանոնք կ'ըստուերացնէ ապա : Այն աղաքներէ որոց եալ շատ անհշան ու սակաւաթիւ տարրերէ կազմուած է, գրէթն չունին այս միշտատակները . անոնք կը մտածեն միայն թէ այլ եւս պիտի չկրնան տեսնել իրենց ծնողքը :

Հակառակ Սոկրատի իմաստուն վարդապետութեանց եւ օրինակնե-

լուն, մարդոց շատերը դեռ կը սոս-  
կան այն վայրկեանէն որ ներկան կը  
բամնէ յաւիտենականութենէն, այդ  
է մահու վայրկեանը։ Բժիշկներն  
հաստատած են թէ մահն ըստ ինք-  
եան համառւմ, սպառում մ'ըլլա-  
լուն՝ ոչ թէ ցաւալի, այլ գրէթէ  
հեշտ փախանցման վիճակ մ'է,  
եւ հնտեւապէս ատիկա բոլորովին  
տարբեր բան է ցաւատանջ հիւան-  
դութենէ մը յառաջ եկող մահուան  
երեւոյթներէն։

Հոգեվարքի վիճակը սովորապէս  
առանց ցաւի տեղի կ'ունենայ։ Հաղ-  
ուազէալ է որ հոգեվարքի մէջ եղողը  
արտանջայ։ Մանաւանդ եթէ հոգեվա-  
րին խիգճն հանդարա ըլլայ։ զերծ  
ըլլայ ո եւ է խոյթէ, այնպիսին յա-  
ւիտենականութեան մէջ ձնած ու  
ապրիլ սկսած է արդէն, երբ մենք,  
հոս, անոր վերջին շունչին կ'սպա-  
սենք։ Երանի՛ անոր։

Վ. Հունաէր իր մահուանէն մէկ  
երկու բոպէ առաջ սա բառերը մրմն-

ջած էր. «Եթէ զրիջս բոնել կարե-  
նալի, պիտի գրէի համոզելու համար  
թէ քանի՛ հեշտ, քանի՛ դիւրին է  
առանց խղճի խայթի մեռնիլը։»

Թունաւորման դէմ. — Նիւ-Եորքի  
թերթերը մեծ կարեւորութիւն տա-  
լով կը յիշատակեն երեք թունա-  
ւորմաներու բուժումը։ արիւնային  
թունաւորման երթարկուած այս ե-  
րեք հիւանդները, մահուան նախըն-  
թաց վերջին աստիճանին հասած էին,  
երբ 500 խորանարդ սանդիմեզր  
ֆորմալին ներարկուեցաւ իրենց ե-  
րակներուն մէջ, 5000 խորանարդ  
սանդիմեզր ջուրի մէջ լուծուելով։  
Բժիշկները դարմանման այս միջոցին  
գիմեցին, որովհետեւ բնաւ յոյս չու-  
նէին որ թունաւորուածները կը  
բժշկուին, բայց ինչ մեծ եղաւ իրենց  
զարմանքը, երբ տեսան որ աաքու-  
թեան աստիճանը, բազկերակը, չնչա-  
ռութիւնը շուտով բարեգուշակնչան-  
ներ ցոյց տուին։ Նիւ-Եորքի ակա-  
նաւոր բժիշկները, հիմնուելով ֆոր-

մալինի այս բուժիչ զօրութեան վրայ  
կը յայտարարեն թէ արխւային թու-  
նաւորման դէմ հիմնալի գեղ մը  
գտնուած է :

Տոքթ. Ուոլթը Մէյէրո ինքինքը  
խայթել տուաւ մժեղի մը որուն նա-  
խապէս խայթել տուած էր հիւանդ  
մը, եւ զիտութեան համար իր ու-  
նեցած անձնուիրութեանը զո՞ն եր-  
թալով՝ քանի մը օրէն մեռաւ զեղին  
տենդէ :

Ուրեմն հարկ անհրաժեշտ է որ  
ինքինքնիս պաշտպանենք այս ան-  
պիտան կենդանիներուն ձեռքէն,  
մանաւանդ համաճարակի ատեն :

Արդ, մարզոց համար շատ զժուար  
է թեւաւոր մժեղներուն հետ գլուխ  
ելնել, զի ինչպէս ըսինք, շատ զիւ-  
րաշարժ եւ սաստիկ զգայուն են ա-  
սոնք եւ ասոնց դէմ զործածուած եւ  
զովարանուած այլ եւ այլ չողիներն  
ու հոտերը օգուա մը ունեցած չեն :

Հորոյ

—

Պրառւն եւ Քրէպի անուն երկու  
մարդիկ քաղցկեղէ կը տառապէէին :  
Մր. Պրառւնի լեզուին արմատին  
վրայ քաղցկեղն այնքան մեծ ու-  
նեցք մը պատճառած էր որ, խեղ-  
ձին խղզուելուն բան չէր մնացեր .  
օր մը պատահաբար ոռուփ (բէքմէզ)  
խմեց եւ թէպէտ առջի բերան շատ  
նեղուեցաւ, բայց տեսաւ որ յետոյ  
շատ հանգիստ կ'ընէ . այնպէս որ  
սովորութիւն ըրաւ, եւ օրական չորս  
հինգ զգալ ոռուփ խմեց . տասն օրէն  
քաղցկեղը բուժուած էր : Միւս հի-  
ւանդը ստամոքսի քաղցկեղ ունէր .  
ամէն տեսակ գեղ ու դարման զոր-  
ծածած, բայց չէր յաջողած իր ցաւն  
ամոքել . օր մը վերջապէս լսելով  
թէ բերնի քաղցկեղ ունեցողը ոռու-  
փով բժշկուեր է, ինքն ալ սկսաւ  
ոռուփ խմել . նախ սարսափելի ցաւեր  
զգաց, բայց ամէն բանի տոկաց . եւ  
իրաւ ալ քիչ քիչ ցաւն անցաւ եւ  
երեք ամիս ետք մարդը կատարելա-  
պէս բժշկուեցաւ : Այսօր Քրէպ, ողջ  
առողջ, նորէն երկրագործութեան կը

պարապի եւ զիւեր ցերեկ կ'աղօթէ  
այս գիւան ընողին համար : Եթէ  
վաւերական են այս պատմութիւն-  
ները , արդարեւ պզտիկ չարիք մը  
չէ որ մէջաւեղէն պիտի վերցնէ այդ  
ամենուն ծանօթ հեղուկն եւ մեծ  
պահքի կերակուրը :

Ընկուզի անսակ եղող պտուղները  
կը պարունակեն մասնաւոր տեսակ  
մը աղ , որ մասնաւոր յարմարու-  
թիւն ունի չնչերակներուն մկան-  
ները զիւրաշարժ ընելու եւ կակուղ-  
ցնելու : Բժիշկներէն ոմանք կ'ըսեն  
թէ տարիքոտ անձինք , ի մասնաւորի  
պէտք է օգտուին աւելի շատ ընկոյզ  
եւլն . ուտելէ : Յաղթուելիք միմիայն  
չարիքն է սա որ այդ կարգի պտուղ-  
ները գժուար կը ծամուին : Պէտք է  
զանոնք լաւ ծամել , այնպէս որ  
կարծր կտորուանքներ չմանեն մար-  
սողական գործարանը : Գաղղիոյ մէջ  
Եղիպտացորենին չգոյութեան պատ-  
ճառաւ աղքատ դասակարգը անոր  
տեղ իրբեւ կերակուր կը գործածէ

շաղանակը . Այդ երկրին գեղացիները  
ընկոյզ կ'ուտեն հացով սրուն վրայ  
սխասոր կը քսեն : Այս կերակուրը  
առողջարար կը նկատուի եւ մսի  
տեղ կը գործածուի առատօրէն : Ա-  
նոնք շագանակէ հաց ալ կը շինեն :  
Շաղանակը մաքրելէ ետքը կը չոր-  
ցնեն եւ կ'աղան ու ալիւր կ'ընեն ,  
որմէ կը շինեն անուշիկ ծանր տա-  
փակ քաքար մը : Քորէայի եղեւնի  
ընկոյզը , որ շատ առատութեամբ  
իւզ կը պարունակէ , զօրացուցիչ կը  
կարծուի , եւ այս պատճառաւ Քորէ-  
ացիք ակարակազմ մանուկներու  
կուտան զայն ինչպէս նաեւ շագա-  
նակը : Քորէացիք ունին նաեւ տե-  
սակ մը ընկոյզ կամ կաղին , որ ճեր-  
մակ կեղեւ ունի : Այս կը խորովուի  
եւ իրբեւ կերակուր կը գործածուի ,  
նաեւ շատ կը գործածուի հում վի-  
ճակի մէջ իրբեւ հազի զեղ :

Զօրաւ որ հոտոտելիք ունեցող բժիշկ  
մը պիտի կարողանայ աչքերը դոց  
ընել ախտազննութիւնը : Ամերիկացի

բժիշկ մը, բայց սա ալ գիտնալ պէտք  
է որ ամերիկացի բժիշկները քիչ  
մը . . . տարօրինակ մարդիկ են — կը  
յայտարարէ թէ լոկ հոտոտելիքը կը  
բաւէ ճանչնալու համար կարմրախառը,  
կեղծմաշկը, հիւծախառը, եւ նոյն  
խոկ լուսնոտութիւնը Քիթովլ կարելի  
է հասկնալ նմանապէս՝ գոնչութիւնը  
(fēl) որ մուկի հոտ կը բուրէ, խոկ յօ-  
դացաւը թթու հոտ մ'ունի : Հիւ-  
ծախտային որովայնամաշկախապը  
մուշկի հոտ ունի, որ աւելի հաճելի  
է բուն խոյրուներու բուրած թթու-  
ած գարեջուրի հոտը, Հիւանդու-  
թեանց հոտերը զեռ շատ այլազան  
են : Կարելի է ըսել թէ հաճելի ըլ-  
լալէ աւելի՝ տարբեր են : Կ'ըսուի  
թէ ջզային հիւանդութեանց ենթա-  
կայ կիները մանիշակի կամ անանասի  
հոտ կը բուրեն : Բայց ուղեղային  
կակլացման ենթակայ մարդիկ աղ-  
ուէս կը հոտին, ինչ որ շատ հաճելի  
բան մը չէ անտարակոյս : Ընդհանուր  
ջերմի ենթակաները զեռ նոր բուռէն  
ելած հացի հոտ ունին, ինչ որ տհա-

ձելի ու անախորժ չէ . Բայց ասոր  
հակառակ, հասարակ ջերմն անուշադ-  
րի հոտ մը կուտայ հիւանդին, որ  
երբեմն անտանելի կը դառնայ : Միտ-  
քի խանդարումներու ատեն, հոտերն  
ալ անախորժ կը դառնան, մելա-  
մաղձուներն ու անդամալոյժները  
մուկի հոտ կը բուրեն գոնչերուն  
պէս : Բայց ասկէ գէշն ալ կայ, շա-  
ռաասենդը (զըզըլ հիւմնա) զօր օրինակ,  
անանկ հոտ մը կը բուրէ, որ վայրի  
անասուններու վանդակի մը հոտին  
եւ կղուած պանիրի մը հոտին մէջ-  
տեղերը բան մ'է : Խոկ ծաղիկի  
բոնուողներուն հոտն աւելի նուրբ է  
բաղդատմամբ, բորբոսած հացի հոտ:  
Խոկ բնատիպ հոտ մ'ունին հարսանիթ  
ունեցողները . ասոնք, կ'ըսէ Մ.  
Նոէլ, փետրազերծ սազի հոտ կը  
բուրեն, ինչ որ շատ աւելի հաճելի  
հոտ մ'է քանի քրտնատենդին բուրու-  
մը, որ է հին քացախի կամ աւրուած  
սինծի հոտ : Ժանտատենդէ բանուող-  
ներուն կղկղանքը զղուելի հոտ մը  
կը բուրէ, ինչպէս զիտէք : Բայց

այս հոտը կուգայ հիւանդին որովայ-  
նէն , հիւանդութեան երեւնալէն  
շատ առաջ իսկ , այսինքն փորի բի-  
ծերուն եւ փորհարութենէն առաջ :  
Տքթ . Ռըպուլ , որ ծանօթացուցած է  
այս նշանը , անմիջապէս կ'ըսէ թէ  
մէկը ժանաատեղէ վարակուած է ,  
երբ այս հոտն առնէ : Ուրիշ բժիշկ  
մը , Տքթ . Տըլամար , զիտել կուտայ  
թէ սասամոքսի տկարութիւն ունեցող  
տղոց չունիը շատ անդամ քլորսփորմի  
հոտ կունենայ : Կ'ըսուի թէ սասափի  
յուզմանց ատեն մարդիկ սմանք  
մերթ հաճելի եւ աւելի յաճախ ահա-  
ճելի հոտեր կը բուրեն :

## ՊԱՏՄԱԿԱՆ

ԿԵՆԳԱՆԻԻՆ ԽՄԱՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Յրանսացի քրոնիկագիր մը պատ-  
մութիւնն ըրտած էր շունի մը , որ գի-  
շերները կը հանէր իր բերանակապն  
եւ մօտակայ ագարակի մը մէջ ոչ-  
խարներ կը յօշտաէր , յետոյ , բերանը  
կը լուար առուակի մը մէջ , եւ իր  
տեղը դասնալով՝ բերանակապը նու-  
րէն կը գնէր ինքնին , որ կասկած  
չհրաւիրէ . այս գէպքն անհաւատալի  
երեւցած ըլլալով , նոր վկայութիւն-  
ներ մէջ կը բերէ հետեւեալ կերպով .

Անզիիացի վիպասան մը , Սդիվէն-  
ուն , կ'ըսէ թէ ձո՞ն Դոտ անուն  
սկսվացի լիոնական հովիւ մը պատ-  
մած է իրեն որ շուն մը իր ոչխար-  
ներն սպաննելէ վերջ . կ'երթար կը  
լուացուէր մօտակայ առուակի մը մէջ :

Թօթօ անուն չնիկ մը կար սեւուլիկ , որ կը վերաբերէր գտւառացի զրամատէրի մը , ամէն առտու զրամատան պաշաօնեայները զուարձանաւ համար քանի մը սու կուտային թօթօյին , թուղթի մէջ դրած . թօթօ բերանը կը դնէր զանոնք ու շիտակ մօտակայ հացագործին խանութը կ'երթար , ուր կարկանդակ ու սանտուիչ կուտային իրեն , ի փոխարէն այն սատակին , զոր շունը բերնեկն կը ձգէր , ապրանքն առնելի վերջ : Մինչեւ հոս աղէկ , ասկէ ետքն է հետաքրքրականը , օր մը , շունը դարձաւ աղջկան մը հետ , որ զարմացոծ պատմեց թէ թօթօ հացագործին խանութէն 100 քայլ հեռու ծաղարարին եկած էր , եւ պոչն երեցնելով , հաջելով , իր բերնին սուերը վար դրած էր . անշուշտ կարկանդակ կ'ուզէր , բայց հաստատել պէտք էր , եւ աղջկին ու ատոր համար եկած էր . ան ատեն բացառուեցաւ խնդիրը . իր սովորական հացագործը մեռած ըլլալով , խանու-

թր գոցուած էր , եւ թօթօ չուզելով ձեռնունայն ետ գառնալ , 100 քայլ անդիի ծաղարարին եկած էր գնելու համար : Ուրիշ պատմութիւն մ'ալ . — Այս անգամ վանքի մը շունին վրայ է խօսքը . ամէն օր կէս օրին , խոհարարը զանգակը կր հնչէր արեղաները ճաշի հրաւիրելու համար , ուրիէ վերջ շունն ալ իր բաժինը կուտէր խոհանոցին մէջ . շունը միշտ անհամբերութեամբ կ'սպասէր զանգակին զարնուելուն . բայց օր մը ի զո՞ւր երկար ատեն սպասեց : Զէր գիտեր թէ Աւագ Ուրբաթ էր եւ այդ օրը վանականներն ամրողջ օրը ծոմ կր կենացին : Անանկ կարծելով որ խոհարարը մոռցեր էր , ի՞նք գնաց ակուներովը զանգակին շոււանը բըռնեց եւ սկսու զանգակն հնչեցնել բոլոր ոյժովը , վանականները ճաշի հրաւիրելու եւ ի՞նքն ալ բաժինն ուտելու համար անկէ վերջ . Աւելորդ է ըսել թէ այդ օրը կենդանին կրկին բաժին ստացաւ իր այս խելացիութեանն համար :

ԽՂ. Ճ. Ա. Հ. Ա. Բ. Գ. Ո. Ղ. Ե. Բ. Ը.

Անգլիոյ մէջ անցեալները մարդասէր հարուստ մը , խումբ մը ազատ արձակուած դատապարտեալներու հացեկերոյթ մը կուտայ . Յանկարծ ճաշի ժամանակ ներկաներէն մին իր ժամացոյցին կորսուած լլլլլլ կը նշմարէ : Խնդիրը կ'իմացնէ կոչնատիրոյթ , որ հետեւեալ խօսքը կ'ուղղէ հրաւիրեալներուն .

« Ձեր մէջէն մէկը կայ որոն քով կը գտնուի իրեն չւեփականող ժամացոյց մը , ուստի հիմա կր մարեմ բուլը լամբարները եւ մութին մէջ կը սկսիմ համրել մէկէն մինչեւ հարիւր . լամբարները կրկին պիտի վառուին , եւ եթէ կորսուած ժամացոյցը երեւան հանուած չըլլայ . այն ատեն պիտի ստիպուիմ խնդիրը իմացնել ոստիկանութեան » : Ըստի ին պէս ալ եղաւ , եւ քիչ յետոյ լցոյք վառուելուն տեսնուեցաւ որ երեսուն երկու ժամացոյցներ մէջտեղ դրուած էին :

Պատմութիւնը նոր չէ , բայց քիչ

մը տարբեր է մինչեւ հիմայ լուսածներէն : Տակաւին վերջերս նոյն թերթը կը պատմէր թէ անկիքան երէց մը , որ իւր հովանոցը կորսնցուցած էր , այդպիսի ճարտար միջոցով մը յաջողեր է ձեռք ձգել 24 հատ անձրեւնոցներ :

117 ՏԱՐԵԿԱՆ ՀՈՅՈՒՀԻՆ

« Կաւկազ»ը հաղորդում է , որ Տփղիսում , Գանովակայա փողոցում , Թամամշեանի տանն ապրում է 117 տարեկան մի Հայ պառաւ կի՞ն՝ Շուշան Համբավերդեան : Այդ պառաւը եւս բաւական կայտառ է եւ լսւ է տեսնում : Նա Մողնու եկեղեցու քահանայի աղջիկ է . Հայրը մեսեր է սրանից 85 տարի առաջ , խոլերայի ժամանակ : Շուշանն անուսնացել է 15 տարեկան հասակում . իսկ 25 տարեկան այրիացեալ է , ունենալով 6 զաւակ . 5ր տղայ եւ 1ր աղջիկ : Տղաներն արդէն րուրին էլ մեսել են , իսկ աղջիկը 85 տարեկան է , բայց այնքան թոյլ եւ զառամած , որ մայրն

է նրան պահում։ Շուշանը զբաղում  
է մատրացների համար մազ մաքրե-  
լով։ Հին շրեր կարկատելով եւայլն։  
Բայց աշխատանքն այնքան քիչ է,  
որ հազիւ է բաւականանում մօր ու  
աղջկայ ապրուսափ համար։

Երեսուն ժամ օդապարիկով։ —  
Օդանաւորդ Փագ Պալսան հետեւեալ  
կերպով կը պատմէ իր վերջին օգային  
ճամրորդութիւնը։ «Ճամրայ ելած  
ատենիս, արեւմտեան յաջող հովմը  
շուառվ գէպ ի Գերմանիա տարաւ  
մեզ։ Երբ բաւական բարձր ելանք,  
մեր օդապարիկին նաւակէն յաջորդա-  
րար տեսանք Վերնէ օյլը։ Ժամը 1.10  
ին, Մօնղրուս՝ 2.40ին, Նօժան-սիւր  
Սէնը՝ 3.20ին, յետոյ, Նահաի, Լիւ-  
նէ վիլ, եւ ահա մտանք օտար երկիր։  
Յետոյ վրայ հասաւ երկար եւ ցուրտ  
գիշերը, որ մեր նաւակիմի պահու-  
տին համար լաւ նշան մը շէր։ Եւ ի  
լրումն զժբաղդութեան, ծիւնի սար-  
սափելի փոթորիկներէ ու մաւախուզի  
թանձր խաւերէ ալ անցանք։ Բայց

որո՞ւ հոգ, իմ անվեհեր օդապարիկս  
հիտնալի կերպով կը յառաջանար եւ  
ես, այդ երկար գիշերուան ճամրոր-  
դութեան միջոցին, շատ ուրախ ե-  
ղայ որ օդանաւիս յարմարցուցած էի  
օդալի փոթորիկ գունդ մը։ Արդարեւ,  
ատոր շնորհիւ էր որ կրցանք քիչ  
նաւախիճ կարանցնել։ Գիշերուան  
ժամը 1.30ին Միւնիխոն անցնելէ Եաք,  
առառն Աւստրիական հոգի վրայ էինք։  
Արեւը ծագած ատեն ա'յնքան դիւ-  
թիչ տեսարան մը պարզուեցաւ որ  
շեմ կրնար մտանալ բնաւ։ Աջ կողմէն  
կը բարձրանացին Դիրոլի լեռները,  
ծիւնապատ սարերով, որք գեռ նոր  
կ'արթննացին արեւին ճառագայթնե-  
րուն տակ։ այն ի'նչ վսեմ տեսարան  
էր, զոր տեսանք 3000 մէջդր բարձ-  
րէն։ Դժբախտարար, Վիեննայի վրայ  
հիւսիսէն հոսանք մը գէպ ի հարաւ  
քեց մեզ։ Ալ վազ անցանք ուրիշը  
գերազանցելէ, եւ սկսանք խորհիլ  
մեր վայրէջքին վրայ։ Կէս օրին,  
Պալատոն լճին վրայ էինք, եւ գէպ ի  
հարաւ կ'առաջանացինք, բայց նա-

ատիթճի պաշարնիս կը հասնէր :  
Մէկը տասն անցած էր եւ բաւա-  
կոն իջած էինք . ժամ մը ամ-  
րող , հարիւր մէդր բարձրէն յառա-  
ջանալով , տակաւին կը վարանէինք .  
վերջապէս , խարիսխը նետեցինք եւ  
մեր խեղճ ու կրտկ օգապարիկն հանգ-  
չեցաւ երկրի վրայ , ի մեծ ապշեցում  
Մաճառ գիւղացիներու , որք ամեն  
կողմէ վազած եկած էին »

Օձաձուկ՝ ստամիսի մէջ . — Գամ-  
րանիս շրգենաւը վերջերս երր Համ-  
պուրկէն նիւ Եորք կ'երթար , ճամ-  
րորդներէն մէկը՝ շուետացի քանր-  
եօթնաւեայ Եիք Անտէրուն տարօրի-  
նակ հիւանդութեան մը ենթարկուե-  
ցաւ . նաւուն բոլոր բժիշկներն ալ  
շուարեր մնացեր էին . Սաստիկ կը  
հազար եւ ստամոքսի անտանելի խի-  
թեր կ'զգար . արուած դեղերն ո՛ եւ  
է օգուտ չըրին . մահու եւ կենաց  
մէջ կը տարուրերէր . շրգենաւը նիւ  
Եորք հանելուն երր առողջապահա-  
կան քննիչներն եկան որ ճամբարդ-  
ները քննեն , երիտասարդն անոնց

առջեւ նորէն սկսաւ մարիկ մարիկ  
գուլ ցաւէն , եւ գերագոյն ճիգով մը ,  
60 սթաշափ երկար սղջ օձաձուկ մը  
դուրս տուաւ րերնէն : Այս տարօրի-  
նակ զէպքին սա՛ մեկնոթիւնը կու-  
տան թէ երիտասարդը ճամբախուա  
տեղէ մը ջուր խմած րլալու է , որով  
օձաձուկը . զեռ փոքր եղած ատեն  
պատմոքսը զացած է եւ հսն մեծցած :

Աւագի փորուիկ . — « Առաւոտ  
եղու : Հով մը կը փչէր այնչափ  
րուոն . եւ պաղ որ ստիպուե-  
ցայ հագնիլ տաք պահող բոլոր վե-  
րարկուներս . Օրն ի բուն ճամբարդե-  
ցինք մեծաքայլ , ճաշի համար խիկ  
տանց կանգ առնելու , յուսուլով որ  
օրուան վերջը անտապափն մէջէն անց-  
նելով պիտի համնինք «Վատի Վէր-  
տան» կոչուած հովիտ մը . որու ցա-  
ծոթիւնը կրնար մեզ պաշտպանել ,  
եթէ ահաելի խորշակը մեզի հասնէր :  
Կէս օրէն շատ ետքը հովք փոթորկի  
փոխուեցաւ : Աւագ կը բարձրանար  
մեր չորս կողմը , զրեթէ կուրացնելով

մեր աչքերը : Վերջապէս ուղաները  
մերժեցին փոթորկին կուրծք առալ եւ  
բոլորովին իրենց կրնակը գարձուցին :  
Վար իջանք եւ մեծ յուզմամբ փոր-  
ձեցինք քաշել տանիլ զանոնք աեղ  
մը , ուր աւազի քանի մը կոյսեր քիչ  
մը կը խափանէին մրրկին սասակու-  
թիւնը : Հսն կեցուցինք զանոնք եւ  
կապեցինք անոնց ոտքերը որ չկրնա-  
յին փախչիլ իրենց սարսափին մէջ :  
Մեր ալ զլուխները կապեցինք գլխու  
մեր շալերով , լաւ ծածկելով մեր բե-  
րանները եւ քիթերը , եւ ապա ին-  
կանք պառկեցանք ուղտերուն քով .  
Ժամանակ մը եաքը պաղ հովին ան-  
ցու եւ գիշերը հովը տաքցաւ հնոցի  
շունչի պէս : Զարմանալի էր տեսա-  
րանը : Օդն աւազով յեցուած էր :  
Ազօտ կերպով կը տեսնէի հեռակայ  
լեռները : Կարծես կը միսային անոնք  
լուսնի տկար ու դալուկ լոյսին տակ ,  
որ երբեմն երբեմն միայն կ'երեւէր :  
Այդ մուխոր անոնց կողերն ի վեր  
քշուող աւազն էր . Արեւմուտք ահա-  
ւոր էր . սեւ սեւ ամպեր մութ շրջա-

գիծով : Մերթ ընդ մերթ փայլակ կը  
շողար : Քրտինքի մէջ թաթխուած եւ  
աւազէն ու տապէն կիսահեղձ , աւ-  
զաման ամէն յոյս կորսնցացինք :  
Գիշերը քանի մը անգամ ելայ թօթ-  
վել վրաս զիգուած աւազը , նաեւ  
ումագ մը ջուր խմել կաշեայ ջրամա-  
նէս . բայց ջուրն աւազով լեցուած էր :  
Դարձեալ . երբեմն կ'ելլէինք ամէնք ,  
վասն զի ուղաներէն ումանք իրենց  
տագնապին մէջ կը փրցնէին իրենց  
սաքերուն կապերը եւ ոտք կ'ելլէին ,  
եւ պէտք կ'ըլլար որ նորէն նստեցը-  
նէինք եւ կապէինք զանոնք : Յա-  
ջորդ օրը միջօրէի ատենները կրցանք  
ժողվել մեր ցրուած ուղտերը եւ  
գոյքերը եւ նորէն ճամրայ ելանք :  
Բայց , ո՞հ , ի՞նչ տկարութիւն , ի՞նչ  
ցաւազին տկարութիւն գլխացաւով  
հանգերձ եւ ի՞նչ վատուժութիւն՝  
չոր հացէ զաա ուղելու ոչինչ ունե-  
նալով : Աստուծոյ օրհնութեամբ ժա-  
մանակին հասանք «Մովսէսի հոր»ին  
ովտսիը : Հսն կերանք եւ հանգե-  
ցանք եւ ապա շարունակեցինք մեր

Ճամբան դէպի Սուէզ»

Մր. Վարապրթըն Մըսըր հազգընատան եալարզը պիր էսէրինաէ, մէմէքքթի մէզքիւէ ուէքէնէսինաէն մէշհուր պիր միւնէ ճճիմին պիր թէճրիպէսինի զիքր ու պէյտն էտիյօր, Միւնէ ճճիմ չաղրըլարագ, Մր. Վարապրթընըն մուգիմ օլարզը օթէլէ կէմիր, վէ օրատա մէնարէթինի կէսութէրմէսի քէնտիսինէ թէքլիֆ օլունուր, Միւնէ ճճիմ վազը օլան թէքլիֆի պիլ գապուլ սօգագտան պիր չօճուգ չաղրըրը, վէ անըն ավուճընըն իւզէրինէ մախառու պիր իշարէթ եափարագ, տիր տիր զիյէ ոլ իշարէթ իւզէրինէ պագհաւընը չօճուգու թէնսին էտէր, Չօճուգ օն տագիզա գտատր պէօյէ եափար իսէ տէ, հիշ պիր սէմէրէսի կէօրիւլէզ, Միւնէ ճճիմ տիկէր պիր չօճուգ չաղրըրը, վէ այնի թէնպիհի թէքրար էյլէր, Պու չօճուգ ոլ ամէլիյաթը մըգնաթիսիյէլէնին թահմը թէսիրինէ տիւշար էտիւլէք, ավուճընըն իւզէրինաէք

իշարէթի զարիսէ՛ քէնախիսինի պիր իմատաթը քեամիլէ հալինէ վազ էթմէյէ պիր վասըթա օլուր, Միւնէճճիմ չիմտի Մր. Վարապրթընտան իսթէտիյի ատէմի խաթրընա կէթիլումէսինի պիլ իխթար, չօճուգըն օլ ատէմի կէօրէճէյինի պէյան էտէր, Պունըն իւզէրինէ Մր. Վարապրթըն միւթէվէֆֆա Լօրտ Տէրպինին իսմինի վէրիր, Չօճուգ պու իսմի իշիթտիմինաէ, տէր հալ, «Իշթէ պո՛ւտատա արը Լօրտ Տէրպի, Պէն պիր իխթիյար ատէմ կէօրիւյօրըմ քի, կէօզիւնէ պիր կէօզիւք թագմը, վէ սիյան ուզուն պիր գաֆթան կէյինմիշ օլարզը հալաէ պիր գանափէ իւզէրինաէ եաթմը արը, » տէյիւ պուզրըրը, Մր. Վարապրթըն պատէնումիւթէվէֆֆա Լօրտ Նէրունրն իսմինի չաղրըրը, Պունը իշիթախիյնաէ, չօճուգ, «Իշթէ օտա պուրատա արը, Պիր թէք զօլլը պիր ասքէր կէօրիւյօրըմ, » տէյիւ թէքրար նիտա էտէր, Պէյլէճէ պիր չօգ քիմուլէրին իսմի տէր խաթր օլունարագ, չօճուգ հէր

պիրինի եէկեան եէկեան թարիվ էթ-  
տիյինտէն , օրատա հազրը պուլու-  
նանլար հայրէթլէրինտէն փարմագ-  
լարընը բարա գալըրլար . Պու թէճ-  
րիպէ չօճուղին տիւշիւնմէքլիք գուվ-  
վէթլէրինին մուաթթալ պիր հալ քէսպ  
էթմէսինի իլէրի էթմիրմէքլիքաէն  
իսպարէթ պուլուն ՚ը տըր , պիր հալ-  
աէ քի չօճուգ նիմ մրգնաթթըսիյէթ  
թէսիրի ալթրնտա գալմրշ , վէ պէօյ-  
լէնէ Մր . Վարպրթըն միւխթէլիք  
քիմաէլէրին իսմինի զիքր էթտիյինտէ  
անըն ֆիքրիյլէ ալագատուր օլուշ  
տըր : Զօճուգ Մր . Վարպրթընընըն  
պու ատէմէրին իսմէրինի զիքր էթ-  
տիյի անտէ Փիքրինտէքի թէսավզու-  
րընը պիր տիւրլիւ րիւյատա կէօրիյօրու

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ(1)

Համբարձում երանեան , բնիկ  
վանեցի , ծնաւ 1858ին : Հայրն էր  
ուսուցիչ , մայրը բարեպաշտ մի տի-  
կին , զիտակ էր հին եւ նոր կտա-  
կարանաց մի այսպիսի ժամանակի  
մէջ երբ կարգալ զիտցող կին մը  
մատով կը ցուցուէր : Համբարձումի  
երկու երիցագոյն եղբայրներն մեռան  
ի ծաղիկ հասակի , ուստի անոր  
ծնողք իրենց բոլըր ոէր կեղրոնա-  
ցուցին . Համբարձումին վրայ իրենց  
ծերութեան գաւազան եւ աղօտա-  
ցած օճախին վերջին շառաւիդ սե-  
պելով զնա : Համբարձում 1864ին  
թաղային վարժարաններ մտաւ , իսկ  
1868ին իր 11 տարեկան հասակին  
մէջ ծաղկախտէ բռնուելով կորսնցուց

(1) Օրացուցիս պիտի կցենք Կենսագրական  
Բաժին մայ 100 տողէ բաղկացեալ կենսագրու-  
թիւններ , 078ԱԿԱԾ հանդիսացած անձանց ,  
կ'ընդունինք եւ կը հրատարակենք :

աշաց տեսութիւն : Աւա՛զ , գեղանին  
Համբարձում ի սպառ այլափոխուած  
էր , մինչ ինք , անգիտակ իր գժրաղ-  
դութեան , կ'ըսէր , աջքիս վէրք գեռ  
շիտակ լաւցած չէ , անոր համար  
գոցուած է , երբ լաւնայ , այն ատեն  
պիտի բացուին եւ պիտի տեսնեմ :  
Աւա՛զ , խարուած էր ինք . լուսոյ  
նշոյն անգամ այլեւս չտեսաւ : Փոք-  
րիկն Համբարձում շուտով հաշտուե-  
ցաւ իր ճակատագրին հետ եւ ուրախ  
ու զուարթ էր : Իր հայր խորհեցաւ  
Համբարձումին ինևան զարնել սոր-  
վեցնել որ իր մահէն ետեւ ճարէ իր  
օրապահիկ , ինչպէս կ'ընեն իոյրերն  
սովորաբար . բայց Տիգրան վարժա-  
պեա դժբախտ մանկան մէջ մեծ  
մարդ մը նշմարելով արգիլեց հօրն  
ստորնացուցիչ ձեռնարկ եւ զայն  
գոլրոց առնելով սկսաւ աւանդօրէն  
դասախրակել մինչեւ 1870 . երբ  
հայրն եւ ապա երէց եղաւյր մեռ-  
նելով ինք մնաց աչազուրկ որբուկ մը  
իր ծերունի մօր հետ : Հօրեղորոր-  
դին Յովհաննէս , որ հարուստ էր

սրտով ալ , մայրն ու տղան իր հո-  
վանաւորութեան տակ առաւ , այս-  
պէս Համբարձում սկսաւ յառաջ վա-  
րել իր ուսում սորվելու հին եւ նոր  
հայերէն , կրօնք , պատմութիւն եւ  
Փրանսերէն . քիչ ատենէն զլեց ան-  
ցաւ իր աչք ունեցող դասընկերնե-  
րէն : Տիգրան վարժապետ 1873ին  
օգնական ուսուցիչ ըրաւ Համբար-  
ձումը . ուսանողք կը պաշտէին զնա :

Աղքատ մանսւկիներու ուսուցման  
հոգ տանելու համար 1878ին խնա-  
մատար մարմին մը կազմուեցաւ նա-  
խաձեռնաթեամբ Համբարձումի : Քիչ  
ժամանակ վերջը 20 տղայք Համբար-  
ձումի յանձնուեցան ի դաստիարակու-  
թիւն . անոնց զգեստի եւ սւտեստի  
ծախքերը խնամատարի անդամոց  
տուած ամսաբաժիններով եւ հան-  
գանակութեամբ կ'ըլլար : Այս եղան-  
երամեան Որբանոցի սկզբնաւորու-  
թիւն : Սով գալով խնամատարի 80  
անդամներ ետ քաշուեցան . ան ատեն  
Համբարձում , իր 20 որբերովը մէջ-  
աել մնաց իրը խաղալիք լաղջին :

Համբարձում չուզեց յետս ընկրկել,  
մանաւանդ որ ալ նոյն որբերուն հետ  
կապուած ըլլալով, կարող չէր լքա-  
նել զանոնք: Ուստի Առաջնորդ Սրբ-  
բազանին զիմեց: Տղա՛ս, ըստ  
Սրբազնը, երբ 80 աչք ունեցողներ  
չկրցան վարել, դուն ինչպէս պիտի  
վարես զայն այդ վիճակով, ջուրը  
պատէն վեր հանել չչ<sup>o</sup> քու ըրտծդ: Այս՝  
Սրբա՛զան, պիտի կարենամ  
ջուրը պատէն վեր հանել, եթէ ձեր  
Սրբազնութեան ձեռք ինձ հետ ըլլայ,  
պատասխանեց աննկուն երիտասար-  
դը: Սրբազնը բարոյական եւ նիւ-  
թական օգնութեան ձեռք կառկառեց  
անոր, որով որբանոց կրցաւ պահել  
իր գոյութիւնն մինչեւ 1887, երբ  
զիւերօթիկ սրբանոցը ցորեկորիկ  
դպրոցի փոխուեցաւ եւ կը շարու-  
նակե մինչ ցարդ: Հրաշտիք մը  
պէտք է նկատել այս տիպար Վար-  
ժարան Վանայ ժողովրդեան մէջ,  
ուր կը պատրաստուին Եկեղեցւոյն  
հարազատ զաւակներ եւ Տէրութեան  
հաւատարիմ հպատակներ:

Համբարձում էֆ. Երամեան կը  
տօնէ հաստատութեան քսանհինգ  
ամեակն . ժողովուրդը որ զիտէ զնա-  
հատել իր կրթական մշակները, ինչպէս  
միշտ փորձով ալ տեսնուած է, կ'ու-  
զէ 1000 շիրայի գումար մը դնել  
Յորելիարին ափը, որ նա ունենայ  
յատուկ մի չքնք եւ յառաջ վարէ իր  
օգտաւէտ ձեռնարկ :

Երամեան Վարժարան կոթող մէէ  
վանայ մէջ կառուցուած :

## ԳԻՏԱԿԱՆ

ԽՆԶ ԲԱՆԵՐԾԻ ԿԸ ԳՈՐԾԱԾՈՒԻ ԹՈՒՂԹԸ

Տասնեւիններորդ դարուն համար  
ըսուեցաւ թէ թուղթի զարն է: Ա-  
տիկա կը հաստատուի գերազանցօրէն  
«Տէպա»ի զիտական քրօնիկագիր  
Հանրի աը Բարվիլի հետեւեալ շա-

հազրպիռ տեղեկութիւններով :

Թուղթի գործ ածութիւնը կը բազմապատկուի զարմանալի կերպով : Բայց Եւրոպայի մէջ տակաւին խաւաքարտի տուփեր , թուղթէ գնտակներ եւ օձիքները միայն ծանօթ են : Ամերիկայի մէջ է որ թուղթը զանազան ու եղական գործ ածութիւններ կը ստանայ :

Օրինակի համար Սբրինկֆիլտի (Մ. Նահանգ) գործարան մը կը շնէ թուղթէ շիշեր՝ կաթ լեցունելու սահմանուած . ասոնք շատ հաստատուն են , եւ այնքան դիրազին որ կը բնանք զանոնք մէկ կողմ նետել՝ գործած ելէ վերջ : Տեսանի մէջ հաստատուած նոր գործարան մը հրապարակը սղողած է թուղթէ հողաթափիներով , որոնց գինը այնքան աժան է որ ասկէ վերջը բոլոր պանդոկապետները կրնան զանոնք իրենց հիւրերուն տրամադրութեան տակ դնել . հոգ չընելով եթէ անոնք հետերնին տանին : Գերմանիոյ մէջ կը շինեն թղթէ խնայողական ասոսի-

գնտամուղի համար :

Բայց ասոնք շատ աննշան բաներ են բաղգատմամբ հետեւեալներուն :

Թուղթէ տուներ կը չինեն հիմա Ամերիկայի մէջ , Անուսիացի մըն ալ Նիւ-Եորք յանձնարարած է այսպիսի թուղթէ տուն մը : Այդ տունը չինուած է Սավինօքասի մէջ , արժած է 80,000 բուպի եւ ունի 16 սենեակներ : Ճարտարապետին խօսքին նայելով , այդ թուղթէ տունը քարտաչն կամ աղիւսէ տունէ մը աւելի հաստատուն է ու պիտի կրնայ դիմադրել անձրեւին եւ փոթորիկին . Ամէնը այս չէ սակայն : Նորվեկիոյ մէջ , — որ փայտէ թուղթի երկիրն է , — կառուցուած է եկեղեցի մը՝ ամբողջավին թուղթէ շինուած՝ որ կրնայ առնել հազարաւոր անձեր : Այսո՛ , թուղթէ եկեղեցի մը՝ իր զանգակատունով , եթէ հաճոյ կը թուի ձեզի . զանդակները միայն թղթէ չեն : Այն գորոցականները որոնք երրեմն ծանուած թուղթէ գնտակներ կը նետէին ապակիներուն , պիտի կրնայի՞ն գուշակել անոր ապա-

գան : Այդ թղթէ գնասակները անդամ  
մը որ չորնային , այն աստիճան ա-  
մուր կը փակչէին ապակիին որ ան-  
կարելի էր անկէ անջատել :

Հետաքրքրացարժ պիտի ըլլար  
տեսնել թուղթէ եկեղեցի մը : Հե-  
տաքրքրութիւնը զիտութեան ա-  
ռահճանաշնորհումներէն մէկն է :

### ՕԴԱՊԱՐԻԿԻ ԽՆԴԻԲԸ

Նիւ-Եսոքէն կը գրեն թէ Բրօֆ .  
Ալքքանաոր Պէլ , նշանաւոր ելեկտրա-  
գէտը , կարեւոր գիւտ մը րրած է  
որուն շնորհիւ կարելի պիտի ըլլայ  
լուծել օդանաւորդութեան խնդիրը ,  
Բրօֆ . Պէլ չի հաւնիր Սանթօս Տիւ-  
մոնի գրաւթեամբ շինուած օդանաւե-  
րուն , առարկելով թէ օդէն թեթեւ  
ոեւէ մեքենական մարմին հովին խա-  
ղալիկ ըլլալու դատապարտուած է , եւ  
հետեւաբար օգուտ մը չունի : Թըռ-  
չունները , որոնք օդէն ծանր են ,  
կատարեալ ազտութիւն ունին .  
Տքթ . Պէլ թաջող մեքենայ մը շէ շի-  
նած , ոչ ալ շինել փորձած է , բայց

Ժամանակէ մը ի վեր կ'աշխատի լու-  
ծել օդանաւորդութեան խնդիրը , եւ  
աս եղրակացութեան հասած է թէ  
օդանաւոր կամ վեկաւոր օդապարփկը  
պէտք է թուուցիկի նմանի : Իր վեր-  
ջին փորձարկութիւններուն միջոցին ,  
բրօֆէսէօրը թուուցիկ մը շինեց . որ  
մարդու մը ծանրութեան համահարա-  
սար ծանրութիւն մը կրնար տանիլ ,  
նաեւ ունէր մեքենայ մը , որ կամաց  
կամաց վար կ'իջնէր . առանց վկաս-  
ուելու : Բրօֆէսէօր Պէլ քանի մը  
տարիէ ի վեր կ'աշխատի արդէն ու-  
րիշ գիւնականի մը հետ . իր հետա-  
զոտութիւնները պիտի շարունակէ  
ձևեսը , եւ զարնան բաց օդին մէջ  
նորէն փորձեր պիտի կատարէ . հա-  
սանական է որ այն ատեն առաջին  
թոչող մեքենան հրապարակ հանէ :

Ուրիշ ամերիկացի բրօֆէսէօր մը ,  
որուն օդանաւոր մրցումի պիտի զրուի  
Ա. Լուիսի արտեստահանդէսին մէջ ,  
կը ծանուցանէ թէ ելեկտրական օդա-  
նաւ մը հնարած է , որ թռչունի մը  
պէս կը թռչի : Այս նաւը կը մղուի

պառուտակներով . սրոնք վայրկեանը  
2000 թաւալում կ'ընեն :

**ԱԴԱՄԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ**

Գիտութիւնը երբեմն զարմանալի  
տարօրինակութեանց կր մղէ մարդու :  
Քէ մարդի համալսարանին ուսուցա-  
պեաներէն Տոքթոր ծօն Լայփութ  
կ'ուզէր գիտնալ թէ Աղամ ո՞ր թուա-  
կանին ծնաւ : Ասոր վրայ ճիշտ 15  
տարի աշխատեցաւ , եւ վերջապէս .  
Ա. Գրոց եւ ուրիշ հին գիրքերու  
րնադիրներ ուսումնասիրելէ , եւ  
իւրաքանչիր դարսւ տարեցացնե-  
րու հաշիները հետազոտելէ վերջ  
հաստատեց թէ Աղամ աշխարհ եկած  
է Քրիստոնէ առաջ 4004 հոկտ. 23ին  
Ու Տ.քթ. Լայփութ՝ աւելի ճշգութեան  
համար կը յարէ թէ՝ առատուան ժամը  
9ին լոյս աշխարհ տեսած է մեր նա-  
խահայրը :

**ԿՈՇԿԱԿԱՐՈՒԹԻՒՆՆ Ա.ՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ**

Վիճակագրութիւնները ցոյց կու-  
տան թէ վերջին տարւոյ միջոցին

750,000 անգլիարնակ այրերուն , կի-  
ներուն եւ տղաքներուն հագած կո-  
շիներն Ամերիկայի մէջ շինուած են :  
Այս կարեւոր հարցին պատճառը քըն-  
նելու համար Բիթէրի թղթակիցը  
Մողիի ճարտարական ծանօթ յանձ-  
նախումբին հետ Ամերիկա զրկուե-  
ցաւ , Պաղպնի կօշկակարութեան մեծ  
կեզրոններն ուսումնասիրելու : Կօշկի  
մեծ գործարաններէն մին ժամը հա-  
զար զոյգ կօշիկ եւ մուճակ կ'պատ-  
րաստէ եւ օրական՝ 9000 զոյգ : Աշ-  
խարհի վրայ չկայ կօշկագործութեան  
վերաբերեալ մեքենայ մը որմէ օգուտ  
մը շքաղուի այդ գործարանին մէջ .  
Ճեռք բերուած արդիւնքները պար-  
զապէս հրաշալի են . բայց գործին  
ամենէն աւելի ապեցուցիչ կողմը սո-  
է թէ ամերիկայի կօշկագործներն  
անգլիացիներուն կրկինն օրական  
կ'առնեն . գլխաւոր գործարանի մը  
շարաթակատնները միջին հաշուավ 8  
սգերլին են . ամենէն վարպետներն  
օրական մէկ երկու սգերլին կը շա-  
տին : Կօշկակարները շատ գոհ են

իրենց վիճակէն . տասնեւ վեց տարեկանէն պակաս մանչ կամ աղջիկ չեն բանեցներ . աշխերաներու , զոր օրինակ գետինն աւ լողներուն տրուած նուազագոյն շարաթականն է 144 դրշ . Առողջապահական տեսակէտով ալ վիճակնին շատ գոհացուցիչ է : Տարակոյս չկոյ թէ Ամերիկայի առեւտրական այս յաջողութեանը միայն արագ արտադրութեան արդիւնք չէ . յայտնի է թէ մորթի եւ ուրիշ շինուած անիւթերու զիներն աւելի աժան են Ամերիկայի մէջ : Բայց ամերիկեան կօշիկի եւ մուճակի մեծ տունի մը ընկերներէն մին յայտարարեց թէ անդիլական կօշիկներն ամերիկեաններէն աւելի դիմացկուն են :

### ԱԾՈՒԽԵՆ ՄՈՒԽԵՆ ԴԷՄ

Լոնտանի մէջ վերջերս փորձ մը եղաւ ջնջելու համար գործ արաններու մասիր , որ այնքան անպատեհութիւններ կը պատճառէ եւ այնքան հակառազապահիկ տարր մ'է մեծ քաղաքներու համար : Այս գիւ-

մը մեծ յեղաշրջում մը յառաջիափի բերէ առողջաւունական եւ գիւտական տեսակէտով . զիւտն ընողը գիւտեր է որ կարդ մը ծխախտներ կ'շարունակեն վասիլ , նոյն խոկ երբ սիկառն ո եւ է առարկայի վրայ թողուած է . քիչ մը աղբորակ աւելցնելով պատրաստուած ծխախտն ամբողջովին կ'այրէր . նոյն բանն է ածուխին համար : Կը ծանուցուի թէ մօտերս Բարիզի մէջ ալ փորձեր պիտի ըլլան :

### ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀՆԱԲՐԱՄՏՈՒԹԻՒՆ

Օր շանցնիր որ տարօրինակ գիւտի մը լուրջ չգայ Ամերիկայէն : Եոր զիւտը մանաւանդ ձմրան ցորտին առթիւ մեծ կարեւորութիւն կ'ստանայ : Գլխարկ մը հնարուած է , որ ինքն իրեն կը բարեւէ . առանց զինքը կրովին նեղութիւն մը պատճառելու : Այլ եւս վերջ պիտի գտնեն ուրեմն ձեռքի այն շնորհայի շարժումները , որք բարեւի ատեն կ'ըլլային , մանաւանդ Տիկին-

ներու բարեւ տրուած ժամանակի : Կը  
բաւէ միսյն զլուխը քիչ մը ծռել եւ  
ահա զլսարկը , գազաթն հաստատ-  
ուած մեքենայի մը շնորհիւ վեր կը  
բարձրանայ . բարեւը կուտայ եւ նո-  
րէն տեղը կը նստի : Հնարամի՛տ մոր-  
դիկ :

ՊԱՐԱԽՈՐ ԶԵԽԱԳԻՐ ՄԸ

Կըսուի թէ Գահիրէն գտնուեր  
է Հին Կտակարանին հինգ զիրքե-  
րուն ամբողջ ձեռագիրները , ո-  
րոնք գրուած են սամարիական  
զիրով վիթէ մագաղաթի վրայ :  
Հնագէաները հաստատած են թէ այս  
ձեռագիրները մնացած են 735 (Ն. Ք.) :  
Այս հաշուով այն ձեռագիրները մին-  
չեւ հիմա գտնուած երբայեցերէն բո-  
լոր ձեռագիրներէն աւելի հին են :  
Արդի ամենազիտուն արեւելագէանե-  
րէն Պ. Ժօրժ Զէյտանի պաշտօն  
արուած է առժամարար պահել այս  
թանկագին ձեռագիրը :

Ծ Խ Ա. Խ Ա Տ

Ծխախոտի գործածութիւնը իրր

400 տարի տառջ աշխարհիո ան-  
ծանօթ էլ : Գոլումպոսի ձեռամբ Ամե-  
րիկայի զիւտին նետ ծխախոտին գիւտն  
ալ եղաւ : Վայրենի Ամերիկացիք  
ծխախոտին տերեւները իրար փաթ-  
թելով խոշոր եւ թանձր զլանիկներ  
(սիկար) կը չինէին փայտի նման եւ  
այրելով կը քաշէին : Ծխախոտը Ա-  
մերիկայէ անցաւ Եւրոպա եւ անկէ  
Արեւելք եւ Թուրքիա , Կառավարու-  
թիւնները արտասովոր զօրութեամբ  
աշխատեցան անոր մուտն արգիլել ,  
բայց չ յաջողեցան , թէեւ գործա-  
ծողներուն երեք տեսակ պատիժ  
անօրինեցին . 1. Առաջին անգամ  
օրէնքն անսասատովներուն գաւազանի  
սաստիկ հարուածներ կը տրուէին .  
2. Ծխախոտը նորէն գործածողին քի-  
թը կը կարուէր . 3. Եթէ այս պա-  
տիժն ալ չազզէր , մարդը կախաղան  
կը հանուէր :

Կառավարութիւններէ ոմանք բո-  
լոր ծխողները քաջաքական իրաւունք-  
ներէ կը զրկէին եւ լոռները կ'աքսո-  
րէին : Պատմութենէ կը տեղեկանք

թէ շատեր, արական եւ իգական սեռն, աւելի յօժար էին լեռներուն եւ բլուրներուն վրայ թափառիլ քան թէ ծխախոսէ հրաժարիլ

Ի՞նըովկենախոս ԺԳ. Պապը բառազրեց բոլոր ծխախոս գործ ածողները : Քանի՛ քանի՛ վեհապեսներ զանազան տեսակ պատիժներ սահմանեցին, բայց երբեք օգուտ մը չաենուեցաւ :

Տօքք. Գ. Նամարեան

Կարմիր խաւեարը կը շնուրի ծածանի (սազան պալըդը) հաւկիթէ : Հոս, խաւեարը կը պատրաստուի խոշոր թեփով ձուկէ մը, որ տեսակ մը ծածան է : Ասոնք ծուխին կը դրուին եւ ամառը կը ծախուին րիմկա անունավ զոր ամենէն աւելի Հրեաները կ'սպառեն : Տարին 1500էն 2000 եւ երրեմն աւելի տակառ կարմիր խաւեար կուգայ Պոլիս Աստրախանէն : Տակառները կը կշռեն 90 - 92 օրսա : Օխան 5 - 9 $\frac{1}{2}$  զրշ., Օսմ. ոսկին 140էն : Պրուսայէն ալ յիտուն

թէնէքէ կարմիր խաւեար կուգայ, ընտիր տեսակէ, եւ կը ծախուի 8 - 10 զրշի : Կարմիր խաւեարն ախորժակ կ'բանայ : Յոյները մեծաքանակ կ'սպառեն Մեծ Պահքին :

Չորս տեսակ խաւեար կայ, թարմ, ճնշուած, սեւ ու կարմիր : Աստազրաւթեան զլիսաւոր կեղրոններն են սաորին Վոլկայի ափունքն եւ Աստրախան : Թարմ խաւեար կը պատրաստուի թառափին (մերսին պաշըդը) հաւկիթները ծակծկելով, Յետոյ այդ հաւկիթները ժամու մը չափ ազ ջաւրի (սալամուրա) մէջ կը դրուի : Կը չորցուի եւ ապա կը ծախուի : Թարմ խաւեարը միշտ սուզ ապրանք մ'է, նոյն իսկ Ռուսիայ մէջ, որովհետեւ պահելը զժուար է : Ամէն օր հարիւրաւոր տակառ կը զրկուին ի կեղրոնական եւ հիւսիսային Ռուսիա : Թարմ խաւեարին մէկ րուաը (16 քիլօ 380 կրտմ) ժամանակին համեմատ 50 - 120 սուզիլի է : Ճնշուած խաւեարը կը պատրաստուի հետեւեալ կերպով . — Հաւկիթները ձեռ-

բով կը թրեն աղջուրի մէջ եւ յետոյ  
պարկերու մէջ կը դնեն եւ ուժով մը  
կը գալարեն : Յետոյ տակառները  
դնելով կ'արտածեն : Այս խաւեարը  
զիւրաւ կը պահուի եւ երկոր ճամ-  
բորդութեան կը դիմանայ : Սեւ կամ  
աղած խաւեարը շատ զիւրաւ կը  
սրահուի : Խաւեարը կ'աղեն ձուկէն  
հանուած զիմակին մէջ 7—8 ամիս  
տակառներու մէջ կը դնեն : Յետոյ  
նորէն կ'աղեն եւ արեւին կը չորցնեն :

Աւասիկ ինչողէս կը յաջողի կաթը  
փոշիի վերածել : Նախ մասնաւոր  
ջրհան մը՝ մեծ ու կլոր պղինձէ կաթ-  
սայի մը մէջ կը քաշէ կաթը, որ հոն  
կը շարժի եւ կը տաքնայ փուքերու  
միջոցաւ որոնք կաթսային մէջ տաք  
օդ կը փշեն եւ այդ օդն «սղէսիլիզէ»  
եղած է, այսինքն՝ միքրոպներէ մաք-  
րուած : Յետոյ կաթը կ'անցնի քա-  
ռասնկիւն ձեւով ուրիշ չորս կաթսա-  
ներու մէջ, որոց բոլորափքը, դուր-  
ուէն, տաք ջուր կը չընի, ինչպէս  
ներսէն ալ խողովակներու միջոյաւ:

Այդ կաթսաներուն մէջ նաև մի քանի  
փուքեր տաք «սղէսիլիզէ» օդ կը  
փշեն : Բոլոր այս գործողութիւննե-  
րուն նպատակը կաթը մաքուր կեր-  
պով թանձրացնել է եւ որուն 16րդ  
մասր կը մնայ արգէն, մնացեալը չո-  
գիանալով : Անկէ վերջ, այդ թանձ-  
րացած կաթն արագութեամբ դար-  
ձող կաթսայի մը մէջ կ'անցնեն, ուր  
հետզհետէ աւելի թանձրանալով վեր-  
ջապէս խոր կը դառնայ, ու յետոյ  
այդ խորը կը չորցնեն որ բնականա-  
րար կը կարծրանայ : Այս վերջի  
կարծր վիճակին մէջ կաթը կը յանձ-  
նեն «փշող» գործիքին որ զայն ա-  
լիւրի պէս փոշիի կը վերածէ : Այս-  
պէս «փոշիացած կաթը» կը ծրարեն,  
որ այլեւս ընթերցողին բերնին ար-  
ժանի է: Անուշներ ըլլայ :

Հաճի Մխիթար

Անթել հեռագրութեան հաղոր-  
դակցութիւն պիտի հաստատուի Հա-  
վայեան կղզիներու հինգին մէջանեղ :  
Թէսլէտ շատ ճարտարագէտներ յիշ-

եալ հինգ կղզիներուն ընդծովեայ  
պարաններու միջոցով հաղորդակցու-  
թիւնն անդորթադրելի համարեցին  
բուռտի ժայռերու համար, Ամերիկ-  
եան ընկերութիւն մը անոր ձեռնար-  
կելու վրայ էր, վասն զի հեռագրա-  
կան հաղորդակցութիւնը անհրաժեշտ  
դարձած էր : Ընկերութիւնը, երբ  
լսեց Մարքոնիի դրութեան նշանաւոր  
յաջողութիւնը, հետազօտեց զայն .  
զաւո որ ընդծովեայ պարտնէն չառ  
աւելի քիչ ծախքով կ'ելլէ եւ անկէ  
աւելի գործնական է չառ մը նկա-  
տումներով : Ընկերութիւնը կանոնա-  
ւոր հեռագրական գործ պիտի ընէ  
անթել հեռագրութիւն մը հաստա-  
տելով : Հեռաւորութիւնը որուն վրայ  
պիտի հաստատուի հաղորդակցու-  
թիւնը, նէն մինչեւ 71 մղոն է :

Հէրվէյ Քէննըտի կօշիկի կապը  
հնարեց եւ 12 միլիոն շահեցաւ :  
Զբոսաշրջիկ մը Պոմպէյի աւերակները  
այցելելու պահուն, տեսակ մը ճար-  
մանդի (կօրչա) պատկերը տեսաւ ման-

րանկարի մը մէջ, եւ անոր օրինակլ  
շինելով, «Ապահովութեան գնդասեղ»  
անսանով մենաշնորհ մը ստացաւ, եւ  
60 միլիոն ֆր. դիզեց : Տիկին մը  
պիտի համար սիրուն կառք մը  
հնարելով 200,000 ֆր. շահեցաւ :  
Ուրիշ կին մը մազերու խոպոպներ  
շինելու համար երկաթ մը շինելով  
մեծ հարստութիւն դիզեց, մինչ ա-  
մուսինը՝ խստամբեր կղերական մը՝ իր  
պարապոյ ժամերը կանցընէր սեղմի-  
րանի կատարելագործութեան պա-  
րապելով, ինչ որ կլորիկ շահեր կը  
բերէր իրեն : Այն մարզը որ առա-  
ջին անգամ կապար գրչի մը ծայրը  
կօմ մը դնելու գաղափարը ունեցաւ,  
կրեսսի մը հարստութիւնը դիզեց :

Ապագային ամէն մարդ հարիւր-  
ամեայ պիտի ըլլայ : Ալ զրեթէ բնաւ  
վարակիչ հիւանդութիւն չպիտի գըտ-  
նուի, բոլոր մժեղները բնաջինջ եղած  
պիտի ըլլան եւ մարդկութիւնը պիտի  
ապահովուի թոքախտին, ժանտա-  
տենդին, ծաղկախտին եւլն. դէմ,

առողջապահութեան, շիճուկով բռւժ-  
ման եւլու չնորհիւ : Մարդուն բոլոր  
սխալ մասերը պիտի անհետանան,  
ինչպէս նաեւ ոռքին սպին : Այլեւս  
մարդ արանձիափիջէ չպիտի մեռնի,  
նոյն իսկ ոչ մէկ վիրաբոյժ անով պի-  
տի ապրի, այն գերազանց պատճա-  
ռով որ արանձիսը ինքնիրեն պիտի  
անհետանայ : Ապագայ Ագամը մենէ  
աւելի լու պիտի լսէ եւ հեռատես  
պիտի լլլայ :

Անոր ճաշակելի քը, ջօշափելի քը, հո-  
տոտելի քը աւելի փափուկ պիտի ըլ-  
լան : Այլեւս ոչ ճաղատ զլուխ պիտի  
գտնուի ոչ ալ առանց ակռայի բերան :  
Պէտք չէ կարծել թէ ինքնաշորժ  
կառքը, եւ մեզ յոզնութենէ ազա-  
տելու համար երեւակայուած միւս  
մեքենաները պիտի վնասեն մարդկու-  
թեան Փիզիքտկան զարգացումին :  
Մարդը այլեւս չափազանց չպիտի  
յոզնեցնէ ինքզինքը : Մանաւանդ,  
ապագայ Ագամը իրրեւ զրօսանք  
միայն սրօրդները պիտի ճանչնայ :  
Արտազրութիւնը, փոխանակութիւնը,

հազորդակցութիւնները եւլու, այնպէս  
մը պիտի կազմակերպուին որ, գոր-  
ծատեղիէն կամ զրասենեակէն ելլելէ  
վերջը, գործաւորը կամ պաշտօն-  
եան, ինչպէս դատարկապորտաները,  
պիտի հարկադրուին բացօթեայ զրօ-  
սանքներ ընել, քրիքէժ, լոնթէն-  
նիս եւլու խաղալ, փոխանակ ալքո-  
ւին զիմելու, ինչպէս կ'ընեն այսօր :  
Ապրոզը կը տեսնէ :

1. Կապոյտ աչքերն ամէնէն տը-  
կարները կը համարուին :

2. Թուխ աչքերն ամէնէն զօրա-  
ւոր ըլլալ կը նկատուին ակնարոյժնե-  
րէն :

3. Վար նայող աչքեր լրջութիւն  
կ'ենթադրեն :

4. Բնականէն մելամաղձոտ ան-  
ձինքներու մէջ շատ քիչ կապոյտ աչք  
ունեցող կրնայ ըլլալ :

5. Երկու աչքերու իրարմէ ճիշտ  
հեռաւորութիւնն աչքին լայնքն է :

6. Երկայն եւ սուր անկիւն աչ-  
քերը մեծ դատողութիւն ու սրա-

մառթիւն կը ցուցնեն :

7. Աչք մը սրուն վերի կափարիչը բիշն վրայէն հորիզոնական ողղոթիւնով կ'անցնի , մտաւորական կարողոթիւն կը ցուցունէ :

8. Եթէ վրայի կափարիչը բիշն կէսը կամ աւելին ծածկէ , պաղ խորհրդածութիւն կը նշանակէ :

9. Կ'ըսուի թէ լուսանոտներու անկելանոցներու մէջ աչաց ընդհանուր գոյնը թուիս ու սեւ է :

10. Դիմագէտները կ'ըսեն թէ այն աչքերն որ յայն են՝ կը ցուցնեն մեծ ու շիմոթիւն եւ անմոռանալի յիշատակի :

11. Կ'ըսուի թէ հանճարեղ մարդիկ անին վճիտ աչքեր եւ հանդարտ շարժուածք որ մտաւոր կարողոթիւն կը ցուցնեն :

Մինրան Քեսապեան

Իշճինին պիրի պիր կիւն ախպի ազը իլէ սրվանմըշ վէ իշինէ ոռւ տօլտուրըշ պիր գասլը գրզլն պիր սողա իւզէրինէ գօմըշ իտի : Անըն

մագսէտի սոյցու ըսթիւլ սլու սու իլէ էլլէրինի երգամագ իտի իտէ տէ , գապը սոպանըն իւզէրինտէն գալարբալընտա . իշինտէքի սոյցըն սայքի օրայա գնըլըլըլը վաղթմտա օլտըլը գտատր սողուգ օլտըլընը հէօրտիւ : Պունու կէօրէձէք օլան սախր քիմէլէր , սալթ պիր , «Նէ՛ թու հափ չէյ ,» տէյիւ նիտա էթմէքլէ իքթիֆա էտէ ձէքլէր իտի , լաքին պու ատէմ պագարըլը շէյէ տիգգաթլէ նազար էտէր իտի : Օ կէօրիւպ անլատը քի ալշ օ տէրէձէ միւքէմմէլ լայրի նազիլի հէրարէթ տիր քի սնըյըն տէրէճէ ի հէրարէթինի , զրիզըպըլ օլուշօլան սովանմըն թէսիրինէ զարշը մուհափազա էթմիշ իտի , գէ պաւնու պէօլէ միւշահէտէ էթակիյնաէ , պու մէպույի աթէշտէն միւթէսսիր օլուշ գացալար ինշարնտա թաթպիգ էթափի : Շիմայիէ զատար պու գապիլ գացալար աղաճտան եափրլըլ տիշ եիւզիւ տէմիր գափլամա օլտրզլըլնտան , աթէշ էսնամընտա , տրշարըսը օլտըլը կիսլի իշէրիսի տախի զըզար

իամի, վէ իշխնաէ պուլունան չէլէր  
տախմա զավուլուպ վէ չօդ տէ ֆա  
աա եանար իտի :

**Գ Ի Ւ Տ Ե Ր**

1. Անկումէն ետեւ Արարիչը մեր  
հախածնողաց կաշիէ հանդերձներ  
հազցնելով եւ կենաց պահպանու-  
թեան համար հողագործութիւն յանձ-  
նարարելով — հանդերձ եւ կերա-  
կուր — զանոնք Դրախտին դռնէն  
դուրս հանեց :

2. Նման Ռոպէնսոնի այնուհետէ  
սկսան մարդիկ իրենց իմացականու-  
թիւն գործածել ուրիշ պէտքեր հո-  
գալու համար միջոցներ գտնելու .  
այն օրէն կսկսի Գիւտերու ոկիզր .  
դրախտի դրան առջեւ ծնունդ առին  
առաջին զիւտեր :

3. Մարմնոյ պատսպարուելուն

համար բաւական չէր մորթէ հան-  
դերձ , ուստի մեր նախածնողք , այր  
եւ կին , ձեռք ձեռքի տուած , ծա-  
ռերու ճիւղերէ վրան խրճչթ պատ-  
րաստեցին հոն բնակելու համար , ապա  
այն վրաններ կենդանեաց մորթերով  
պատրաստել սկսան անձրեւէն պաշտ-  
պանուելու համար :

4. Բուսեղէններով եւ պտուղնե-  
րով ջրաւականանալով հովուութեան  
եւ որսորդութեան հետամուտ եղան,  
նետ , կարթ հնարեցին . կաթը կարա-  
զի , մածունի , պանիրի վերածելու  
կերպն գտան , ցորենն ալ երկու քա-  
րի մեջ փոշիացնելով ալիւր ունեցան :

5. Պ. Ղամէքի գեղանի գուստը ,  
Օր. Նասմա , կաշիէ կոչտ հանդերձ-  
ներ չվայլեցնելով իրեն , ոչխարի  
բուրդէն նուրբ թէլեր ոլորեց , քթան  
եւ բամբակ հանեց եւ գործիք մը  
հնարեց որով այս նիւթերէ կտաւ կը  
չինէր : Այսպէս այժմեան ոստայնան-  
կութեան հնարիչն եղաւ Օր. Նասմա

Ղամէքեան : Ղամէրոսի տաեն ծիրա-  
նագոյն բուրդ կը գործածուէր , ուս-  
ափ ներկարաբոթիւն ալ ծանօթ էր :

6. Առաջին «քաղաքն» ալ կո-  
ռուցանոլն Կայէն էր . զոր Ենովք  
անուանեց , ի յիշատակ իւր սիրեցեալ  
որդւոյ Ենովքի . հաւանականարար  
ճիւղերէ շինուած խրճիթներու խումբ  
ու ըլլալու էր այդ «քաղաք» :

7. Պ. Ղամէքի գերդաստան յի-  
րաւի խիստ հնարագէտ անդամներէ  
կը բաղկանար . ինքն Ղամէք բազ-  
մակնութեան հեղինակն է . որդին  
Յորէլ ճարտարապետ եւ խաշնարած ,  
Յորալ . միւս որդին , երաժշտապետ ,  
սրինգ եւ քնար կ'ածէր յոյժ մեծ ճար-  
տարութեամբ :

8. Ղամէքի միւս կնոջ որդին Ժօ-  
վիէլ-Կայէն վարպետ երկաթագործ եւ  
պլնձագործ էր . «ամեն տեսակ» գոր-  
ծիք կրնար շինել . սորա քոյր Օր.  
Նաամա , արդէն ծանօթացինք ըն-  
ընթերցողաց . Զմոռնանք ըսել որ

Ղամէք նաեւ առաջին քերթողն է .  
կտրդա՛ իր երկու կիներուն ուղղած  
ճառը . նոյի առաջին նաւազը եւ  
նաւազեան ըլլալը ծանօթ է :

9. Զրհեղէղէն ետեւ կ'սկսին մար-  
դիկ այլեւս աշխայժիւ գործածել ի-  
րենց միտք եւ իմացականութիւն .  
Բարելոնի հիմեր կը դրուին , աղիւս  
— քէրրիճ — կը գործածէին շինու-  
թեան համար , փոխան ծառի սատե-  
րու եւ անասնոց մորթի : Քարը ա-  
ռանց կիրի վրայէ վրայ կը զետեղէին .

10. Փոխանակ կաշիփ . սկսան  
անասնոց մուշտակ իրր հանդերձ գոր-  
ծածել . սակայն գարշահոտութեան  
չհանգուրծելով սկսան նախ մէզով եւ  
շամբինով եւ ի վերջոյ ծառի կեղեւ-  
ներով , զիստորով եւ խոզկաղինով  
մորթերն կաշիփ վերածել որով խա-  
զազորդութիւն սկսաւ :

11. Յորենահատէն ճզմելով ճեռք  
բերուած ալիւրը նախ սկսան ջրով

եւ կաթով խառնել եւ խիւս շինել,  
ապա շաղուել, խորել եւ կանոնա-  
ւոր հաց շինել:

12. Նոյ նաւապետ հարկաւ սղոց,  
կացին, ուրագ եւն. գործածեց երբ  
իր հակայ նուը շինեց, սակայն զի-  
տենք որ օձերու ատամնաւոր կզակը  
իրը սղոց կը գործածուէր, խոչոր  
ձուկերու ողնայարն ալ իրը սղոց կը  
գործածուէին: Մատէյրա կղզիին հին  
բնակիչները շանաձուկի ակռաներն  
իրը սղոց կը գործածէին:

13. Մովսէսէ 500 տարի առաջ  
սոկերչութիւն ծանօթ էր, Արքահամ  
արծաթ վճարեց կնոջը գերեզմաննոց  
գնելու համար. սակայն ոսկի եւ ար-  
ծաթ աւելի իրը զարդ կը գործածէին:  
Յուգա, Յակոբին որդին, մատանի  
ունէր:

14. Արձանագործութիւն նաեւ  
շատ հին է, կաւէ ուրիշ նիւթերէ ար-  
ձաններ կը շինէին: Լարան ունէր ար-

ձաններ — կոռոքեր — Յոյներն զայն  
ծագիեցուցին. Քրիստոսոէ 500 տարի  
առաջ, նկարչութիւն աւելի ուշ մշակ-  
ուեցաւ, ինչուէս նոր պեղումներ  
կ'ապացուցանեն:

15. Փիւնիկեցիք դիպուածով գը-  
տան ապակին, աւազուտ տեղ մը բո-  
րսկ թափելով կրակ վառեցին կերա-  
կուր եփելու համար, եւ ապակիի  
կատրներ զտան կրակին վառած տեղ  
Սիդոնացիք գտան ապակիէ հայելին,  
աւելի առաջ մետաղէ հայելի կը գոր-  
ծածէին, Յոր եւ Մովսէս կը յիշեն  
զայ:

16. Բրուտի արհեստ ծանօթ էր  
Մովսէսի ատեն. Գէ դէսնի սակորներ  
ծանօթ են, Յոյներն եւ մանաւանդ  
Հռովմայեցիք խիստ զարգացուցին  
այս արհեստ:

17. Ոսկեզօծութիւն ծանօթ էր  
Մովսէսի ատեն. Մողոմնի տաճար  
ո՛չ թէ ոսկեզօծուեցաւ այլ տեղ տեղ  
ոսկիսվ զրուագուեցաւ (զափլամա):

18. Մագնէսր Քրիստոսէ 2700  
տարի առաջ Զինաց ծանօթ էր . 2000  
տարի առաջ ալ անոնք կողմնացոց  
ունէին , 1260ի մօտերն Մարքօ Փօլ  
զայն իտալիա բերաւ . ԺԴ. զարուն  
եւրոպացիք զայն կատարելազործե-  
ցին :

19. Նոյի արհեստ . նաւարկու-  
թիւն , զարգացուցին Փիւնիկեցիք .  
մէջը փորուած ծասի բուներով սկսան  
նաւարկել , ապա կանոնաւոր ցոկա-  
նաւեր — չէքտիրմէ — շինելով մինչեւ  
Սպանիա կը նաւէին , ծովուն խորու-  
թիւն չափելու համար խորաչափ  
զունաը եւ խարիսխոր Յունաց ծա-  
նօթ էր . ասոնցմէ անցաւ Հռովմա-  
յեցոց , Յոյներն քաջ սուզակիներ —  
տալլում — էին :

20. Գիրի հնարիչն է Թօթ անուն  
Փիւնիկեցին . սա ջրահղէղէն մի քանի  
զար վերջը ասլրած է . Զինացիք .  
Քրիստոսէ 10 զար առաջ տառերն  
տախտակի վրայ կը փորագրէին , եւ

վրան մելան քսելով թղթի վրայ կը  
տպէին , թողթն ալ ծանօթ էր Զի-  
նաց . Աւելի հինուրն քարի եւ մե-  
տաղի վրայ կը փորագրէին տառեր .  
Սուրբ Գիրք կը յիշեն այսպիսի քարի  
վրայ փորագրութիւններ , պեղումներ  
ալ հետզհետէ ի լցո կը բերեն հին  
արձանագրութիւններ — բեւեռագրեր  
— ամբողջ գրատուններ , աղիւսէ  
տախտակիներու վրայ զրօշմեալ պատ-  
ճութիւններով :

21. Երկրաչափութիւնը Եղիսլա-  
կան գիւտ մ'է . Նեղոսի ջարերուն  
կանոնաւորման համար թումբեր կը  
շինէին . Բաղէս եւ Պիւթագորաս ա-  
նոնցմէ ուսան այս գիւտութիւն , Ա-  
ռաջին չափաբերական գիրքը — Ժէօ-  
մէթրի — գրեց Քրիստոսէ 300 տարի  
առաջ Եւլիտէս :

22. Շերտամարտն ծանօթ  
էր Զինաց Քրիստոսէ 20 զար առաջ .  
Զ. զարուն ճգնաւորներ Յունաստան  
բերին առաջին հունաերն ուսկից եւ-

րոպա տարածուեցաւ :

23. Առաջին ժամացոյցը արեւու ժամացոյցն էր, Քաղմէացիք ունէին ջրոյ ժամացոյց :

24. Հրեայք ունէին աեսակ մը երգէսն : Անաքարսիս, ըստ Սարարօնի, զտած է բրուտի ճախտարակն, փքոց — քէօրիւկ — նաւու խարիսխ, Քրիստոսէ 600 տարի առաջ, Պազմէոս ունէր արուեստական երկրագունտ մը, Քրիստոսէ 200 տարի առաջ . Կրէտացիք մարմարիսնի վրայ կը քանթակէին Քրիստոսէ 470 տարի առաջ : Առաջին թղթատարութիւն հնարեց Պարսից Կիւրս թագաւորը, Ցրի եւ օդի զտած են Հնդիկները : 325 Ն. Ք կը գործածուէր մեծն Աղեքսանդրի ատեն . զարեջուրը Դ. դարուն Հայոց սիրելի րմակելին էր — այսպէս կ'ըսէ Քոչնօֆոն — Մազաղաթի վրայ զիր զրելն Խորայեւոց ծանօթ էր . րայց Գ. զարուն Պէրկամոսի մէջ վերսալն ծաղկեցաւ :

Եզիսպտացիք Բարիբոսի աերեւները իրը թուղթ կը գործածէին, ետքը սկսան բամպակէ թուղթ շինել : Հիներն կը հեռազրէին կրակով: Հրդեհի ջրհանը շատ հին է, Նիկոմիդիայի հրդեհին Տրայիանոս կայսրը հրշէջ ջրհաններ գործածել տուաւ: Օրացոյցն ալ նոր րան մը չէ, քրմապետներն ամեն ամսագլուխ ծողովուրդն հուաքելով պէտք եղած ծանօթութիւններն կուտային . Յուլիոս Կեսար զայն ձեւակերպեց եւ Քրիստոսէ 45 տարի առաջ Հոռովմ ընդունեց զայն : Զանգակին ալ ծանօթ էր հիներուն . Ոսիրիսի տօներուն կը գործածուէր :

(Յաջորդ տարի նորագոյն գիտեր)

## ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

— օօշօօ —

ՊԱՐՏԻԶՈՎԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ

Թուրքիոյ կղիմային համեմատ  
պատրաստուած է :

### Յունվար

Սալորի, կեռասի եւ ծիրանի ծառ  
ողի նպաստաւոր ժամանակին  
յօնել (պուտամաք), եւ ամիջապէս  
գաղրանով կտրուած տեղերը գոցել:  
Պաղատու ծառերու շուրջը փառ բա-  
նուով չի մարած կրափոշի սրոկել եւ  
ապա ազրել, ասով թէ՛ ծառերը կը  
զօրանան եւ թէ յաւաջիկային կրագ  
մը հիւանդութեանց առաջքը առ-  
ուուած կ'ըլլայ: Պաղատու ծառոց եւ  
ուրիշ ծաղիկներու համար Փետրվա-  
րին պատրաստուելիք տնկարանին  
տեղը՝ այժմէն փորելու եւ ազրելու է:

Նախաղէս ցանուած եւ այժմ  
ծլած սմբուլ սօխերուն վրայ տերեւէ

գոյացած ազբ եւ չոր հող եւ ասոնց  
վրայ ալ չի մարած կրափոշի լեցնե-  
լով պահպանելու է :

### Փետրվար

Պաղատու ծառերուն տակը լաւ մը  
փորել, հողը կակզացնել: Կաղինի  
ծառերը եթէ հինցած են բնական է  
որ քիչ պառզ կուտան, ուստի զա-  
նոնք արմատախիլ բնել, եւ նոր  
տունկեր տնկել եւ երկարած ճիւ-  
զերը յօաել հարկ է :

Ծաղիկի պարտէզները այժմէն փո-  
րել, ազբել եւ պատրաստել: Զողի  
վրայ փաթթուած վարդենիները, մե-  
խակները, եւ կրետական կակաչը  
թաղարներու մէջ տնկել, չույքա չիշե-  
յին ցուրաէն չի սառացնելու համար՝  
տաք տեղ մը փոխագրել անհրաժեշտ  
է: Այս ամսոյ մէջ մուկերը շատ ըը-  
նասներ կը հասցնեն, ուստի եւ ոկտք  
է պարտէզին զանազան կողմերը թա-  
կարդներ լարել:

### Մարտ

Լոլիկ, սմբուլ, պղպիղ, վարունգ,

հալանտական լահանայ, գդում, եւ րսպական ամեն տեսակ բողիեր եւ ազատքեղ կը ցանուին :

Ծաղիկները թաղարներու մէջ առնելով չաշել — չէլիկ ամէլիաթը — եւ մինա կոչուած ծաղիկը իրարմէ երկուական մատ հեռաւորութեամբ փոս տնկարաններու մէջ զետեղել եւ վրան ալ ասպակեփեղիով գոցելու է, ամէն օր քիչ մը օդ տալէ վերջ վերստին գոցել հարկ է :

Ուրիշ ծաղիկներ ալ այս կերպով կրնան պահպանուիլ. լեմոնի եւ նարնջի ծառերը յօտել, ու գամելիտաներուն աղրի ջուր եւ ի հարկին պարզ ջուր առատօրէն տալ պարտիզանին կարեւորագոյն աշխատաւթիւններէն են :

### Սպրի

Կոտեմ, զանազան աղցաններ (սալադա), պամիա, փերփեր (սէմիզօթու), թթուկիչ (գտղու գուլազ), լոլիկ, սմբուկ, պղպեղ, վարունդ, գալ, լահանայ, գարնպահար, գդում, գաղ, բողի, հազար, սոխ, լուրփանե-

րուն աեռակը, զանազան ծաղիկներու հունտերը ցանել, նարկիս, թաւշածաղիկ, մեխակ եւ ուրիշ ծաղիկներու հունտերը՝ տնկարանի մէջ ցանելու ամենայարմար ժամանակն է: Սմբուկ եւ ուրիշ կանուխ ծաղկող կակաչներ այս ամսոյ մէջ ծաղկելով իրենց գունագեղութեամբ վլարդ կը հիացնեն :

### Մայիս

Սմբուկ, պամիա, լոլիկ, լսպիկ, փերփեր, գդում, վարունդ, սեխ, ձմերուկ, ոսպ, բակլայ եւայն սրբ մէկ երկու ամիս առաջ տնկարաններու մէջ ցանուած էին այժմ կրնամք զանոնք պարտէզին մէջ՝ բաց օդին տակ տնկել, եղիսպահան կահաչ, եւ ըդրց ծաղիկներն ալ վերստին կարելի է բացը ցանել:

### Ցունիս

Ամենէն աւելի պտղատու ծառերուն խնամք տանելու է: Տհաս եւ զող պտղալներու չափը քիչցնելու է. եթէ ծառի մը վրայ 200 հատ տանձ

կայ, ատոնցմէ 50—60 հատ բրցնելու է, զի այդ 200 հատը հասունացած տախն քանի քաշ ծանրութիւն որ ունենայ, այդ 50—60 հատը բրցնելով ծառին վրայ մնացած 150—140 հատն ալ հասուննալուն՝ նոյն ծանրութիւնը պիտի ունենան :

Միայն թէ այժմ պտուղները տեսաբով գեղեցիկ եւ խոչըրկէկ կ'ըլլան :

### Յուլիս

Սմբուլ եւ կրէտական կակաջները թաղարներէն հանելով պատրաստուած տեղերնին տնկել: Շոմին (բարանաք), լախուր (քէրէվիզ), լոհանա, ծներեկ, զարնպահար, հազար եւլն. ինչպէս եւ շողգամ ու լուրիա ցանել

Պաղատու ծառերը յօտել, վարդենեաց աղրի ջուր կամ աղբ տալ, մեխակ եւ ուրիշ ծաղիկներ չաչել. աւազուտ հողի մէջը կատարելը նախընարելի է: Դիմացկուն վարդերը յօտել, փափուկներուն չդպչելով:

### Օգոստոս

Պարզ եւ զալ բողկեր, հիմտիպա,

ծներեկ եւլն. ցանելու է . պատի տակ տնկուած ծառերը յօտելով կանոնաւոր ձեւ մը տալու է: Եէզայիքներու աղրի ջուր տալ եւ պտղատու ծառոց վրայ գտնուած մնասակար միջատները ջնջել :

### Սեպտեմբեր

Այս ամսոյ ցանուելիքներն են՝ լահանա, հիմտիպա, աղցան, գաղրողկեր, չոմին, բաղրջուկ: Հետեւեալ ամսոյ այսինքն հոկտ.ի մէջ պտղատու ծառերու տունկերը արնկարկել հարկ ըլլալուն՝ տեղը այժմէն պատրաստել եւ գտնուած ինքնարոյս խոտերը խլել, աղբել եւ փորելով մինչեւ իւր ժամանակին այս վիճակին վրայ թողելու է:

Ծառերու տերեւները երբ թօչնին ու թօժափին՝ անկից վերջ միայն ուրիշ տեղ տնկել պէտք է:

### Հոկտեմբեր

Ամեն տեսակ աղցաններ, հազար եւ հիմտիպա՝ տաք եղող տեղերը տնկարկելու է: Եթէ տանձն ու խլն-

Ճարը հասունցած են՝ առանց վիրաւորելու րրցնելու և տեսակին համեմատ ամանի մը եւ կամ բաժապակի մէջ պահելու եւ կամ թէ շահմարանին առաստաղէն կախելու է : Ընկուզները հասունալուն վրայի կեղեւը ճեղքուելով վար կ'իշնայ . յայնժամ ճաղիկելու , չորցնելու եւ շտեմարան փոխաղբելու է : Այս ամսոյ մէջ անտառային ամեն տեսակ ծառեր կը անկուին :

### Նոյեմբեր

Ոլոռն , Մանչէսդրի ոլոռն , Սաքրդի բակլայ , աղցան , հաղար եւն . հարաւային համբէ հանդէպ եղողակեղմը ցանելու է : Կեռասի , բալի եւ տանձի ծառերը յօտելու յարմար ատեն ըլլալով՝ ժամանակ կորուսելու չէ : Ծաղիկներէն Աստղիկ , Պէտօնիա եւն . հողէն հանելով չորցնելու եւ սոխերնին աւազի մէջ պահելու է : Կակաչ , միրուլ , քրքում , շուշանի եւն . ի սոխերը անկելու եւ ցուրտի չղիմացողներն նաւի ածուխի փոշիով եւ կամ

պարզ մոխիրով գոցելու եւ ասոր վրայ ալ մամուռ – եօսուն – զնելու համար :

Միւս ծաղիկներն ալ տաք տեղ մը փոխաղբելու եւ այդ տեղի տաքութեան աստիճանն ալ +5°էն վար բնաւ ըլլալու չէ : Վարդի տունկերն ալ վարդաստանի մէջ իրարմէ մէյմէկ մէզրօ հեռաւորութեամբ տնկելու ծիշդ ժամանակն է :

### Գեկտեմբեր

Ցուրտը հետզհետէ կը սաստկանայ , ուրեմն ծառերուն տակը խոչչորյարդով եւ կամ խոտով գոցելու է :

Հաղարջի եւ պէյթալի խաղողի ծառերը յօտել եւ ամիջապէս մարած կրափոշիով տակերնին գոցելու է :

Վարդերը աղուել , թաղարները ներս առնել եւ ցուրտէն պահպանեալու է որպէս զի գեղածիծաղ գարնան ծաղկին աւ ծին :

—  
Չիրենեաց հիւանդուրխն նը ինչպէս ամեն պտղատու եւ անպտուղ ծառք՝ նոյնպէս եւ մշտաղա-

լարն ձիթենին տեսակ տեսակ հիւանդութեանց կ'ենթարկուին . կարեւորը սա է թէ հետզհետէ թէ կենդանեաց և թէ բուսոց հիւանդութեանց տեսակները շատնալու վրայ են , որոց իրական պատճառները միաւմի երկարօրէն աստանօր բացատրել՝ Օրացոյցի ծաւալը չի ներեր . միայն թէ կը փափաքիմ սոյն սուզ էջերուն մէջ կարեւորագոյն կիւվե կոչուած ձիթենեաց 4—10 տարիէ ի վեր երեւան ելած . հիւանդութեան քանի մը դարմաններ ցոյց տալ . Այս հիւանդութիւնը անձամբ տեսանք ու հետամուտ եղանք կէ մէջյիի մէջ . ումանք կ'ըսեն թէ նախ տերեւները կուտէ , յետոյ ծաղկանց մէջ կ'անցնի ու անկից ալ ծաղիկը ձիթապտուղի փոխուելէն՝ դարձեալ ձիթապտուղին մէջ կը մնայ . զեռ տհաս կսկսին պտուղները թափթփիլ . այս չարաձնին ըրտծ վնասները շատ մեծ են , Գիտական դարմանները սոքա են :

Ա. — Կազ , նեփթեադ , եւ արարական օճառ իրար խառնելով տե-

րեւները եւ պտուղները չաւ մը ջրել . բայց ասիկայ չպիտի կարենաք գործադրել , զի այս հեղուկը այս կիւվին փճացնելէն զատ՝ տերեւներն ալ կ'այրէ . եւ որովհետեւ ձիթենին մշտադալար պէտք է մնայ ուստի անհնար է փորձել :

Բ. — Մառերուն տակ ծծումբ վառելով ծուխին միջացաւ այս որդը կը սատկի :

Գ. — Խոշոր յարդով խառն աղբ վառել մառերուն չուրջը , առանց բաց հանելու , մուխին սասակութենէն որդերը կը փճանան . Ահա այս Բ. եւ Գ. դարմանները կրնաք գործադրել : Բաց աստի ձուերը եթէ մնացած են՝ ասոնք եւս բալորովին անհետացնելու համար քանի մը տարի չարունակ ձիթապտուղները տհաս եղած ատեն թափելով իւղ հանելու է :

Ահաւախի ասոնցմէ աւելի գործնական եւ կատարեալ միջոց չէ գլունուած տակաւին .

**Մեղուաբուժական  
Մեղուաբուժութեան օգտակա-**

րութիւնը ցուցնելու համար գնեմք  
հոս 1890ին ֆրանսայի շահը :

Գին մեղ.ի 9,771,000 ֆր.  
» մոմոյ 4,720,000 »

Տարեկան շահ  $\frac{1}{14,491,000}$  »

Ասկէ կը տեսնուի թէ ի՞նչ շահա-  
բեր կենդանի է մեղուն :

Անգլիոյ մէջ ալ կան ընտիր փե-  
թակներ, մանաւանդ Տիյտամ զա-  
ւառին մէջ, բայց ամենէն բազմա-  
թիւ կը գտնուին Ամերիկայի Միաց-  
եալ Նահանգաց մէջ, ուր կը հաշ-  
ուին 2,800,000 փեթակ :

#### Կուսածնուրիւն

Այս րանս թէպէտ շատ հակառա-  
կութիւն կրած է, բայց հիմա փոր-  
ձով ստուգուած է, թէ էգ մեղուն  
կրնայ երբեմն ածել ձու առանց զու-  
գաւորելոյ արուի հետ ի կոյս վիճա-  
կի, բայց յայնժամ կ'ածէ միայն  
արուի ձուեր, մինչդեռ զուգաւորու-  
թեամբ կ'ածէ գործաւոր մեղուաց  
ձուեր :

#### Մեղուին երգը

Բանտարկեալ էգ արուն ըջջին  
մէջէն տեսակ մը ձայն կը հանէ որ  
կոչի երգ, եւ երկորդական պարս  
տալիք փեթակներէն կը լսուին . ի-  
րենցմէ ծնած էգերն ալ ոսյն ձայնը  
կը հանեն կանչելով թիթ, թիթ,  
թութ, մինչդեռ բանտարկեալները  
սովորաբար կը կանչեն քուա, քուա :

Բեղնաւորեալ մայրերը խիստ քիչ  
անգամ կ'երգեն :

#### Հիւանդուրիւնն տանձենեաց

Դալուկ կամ ժանկ . — Ծառին  
տերեւները կ'սկսին տկարանալ, զեղ-  
նիւ, չորնալ եւ թափիլ, լուսոյ պակ-  
սութենէ, թացութենէ եւայնէ յա-  
ռաջ կ'ուգայ, դարմանն է՝ Փետրուա-  
րի մէջ տանձենեաց արմատներուն  
վրայ մէկ քառակուսի մէդրի 100  
կրամ հետագայ խառնուրդէն ցա-  
նել :

Նիդրաթ (Ազօդադ) տը սուտ 40 կրամ  
քլորաթ ալ բօթաս 40 »  
իբէր Փօսֆադ տը շօ 20 »

**Սիւախայտ . — Տանձին վերնաւմաշկին վերայ կ'երեւի . մանր եւ սեւ արաւաներ կը զոյանան , սունկէ յառաջ կուգայ . անձք չի մեծնար , լեզի եւ անհամ կ'ըլլայ :**

**Դարմանը . — Փետրուարի մէջ վրձինով տանձին վրայ քսելու է :**

10 լիդր ջրոյ մէջ հալեցնել 400 կրամ սիւֆաթ առ քիւիվրը եւ 800 կրամ կիր :

### **Հիւանդուրիւնք խնձորենեալ**

**Զարագեղ (շանքը) . — Փաեցուցիչ է , եթէ չդարմանուի ծառը կը մեռցնէ , ուստի ուր որ տեսնուի կորել հանելու է . եւ յետոյ կը տրուած վէրքը լուալ սիւլֆաթ առ ֆէրի լուծմամբ . եւ չորնալէ ետքը պատրւաստի մոմով պատել :**

**Ժանկ կամ Բաս — Դարմանը ճիշդ տանձենեալ ժանկին նման է :**

### **Հիւանդուրիւնք զեղձենեաց**

**Խիժ (զամգ) — Ծառին ներքին կոռմը լոյծ հիւմը յանկարծական ցրտութենէ վերջ կը թանձրանայ եւ**

**կսկսի կաթկթիլ , ու միւս աւշակին համարձակ շրջան կատարելուն արշգելք կ'ըլլայ . կան ուրիշ պատճառներ ալ ինչպէս՝ խորունկ տնկել . եւ կամ հողին թացութենէն :**

**Վազած տեղը կորել հանելու է , եւ վէրքը պատրւաստի մոմով զոցելու է :**

**Տերեւուսոյց . — Գարնան տերեւոց տակի կողմը աեսակ մը բորբոք կը զոյանայ , տերեւները կուոին եւ կը զալարին :**

**Տերեւները կորելու է եւ 1000 կրամ ջուրի մէջ Յ կրամ սիւլֆաթ արքիւմը խառնելով ծառին տերեւներան որսկելու է :**

**Ծիրանին եւ կեռասն ալ խիժի ենթակայ են , դարմաննին նոյնն է :**

### **Հիւանդուրիւնք սպորենեալ**

**Սալորենին ալ խիժէն զատ ժանկի ենթակայ է . ճիշտ երկաթի ժանկի պէս կ'ըլլայ . կ'իյնան տերեւները , ծառին աճումը կը զաղրի : Տերեւոց վրայ սրոկելու է՝ հիւանդութեան**

սաստկութեան համեմատ աւելի կամ  
պակաս քանակութեամբ սիւլֆաթ  
ար քիւիվրը :

**Աերակենդանուրիւն պաղատու  
ծառոց**

Շատ անգամ պաղատու ծառոց  
օդային մասը ծերանալով կամ հի-  
ւանդանալով կը փճանայ , ասոնք  
նորէն վերակենդանացնելու այսինքն  
նախկին ոյժը տալու համար պէտք  
է ձմրան սկիզբը կտրել ծառը ամ-  
բողջովին եւ եթէ 1—2 ճիւղ կան  
որք հիւանդութենէ զերծ են՝ զանոնք  
թողուլ որ աճին մեծնան : Այս րանը  
ընելու ժամանակ պէտք է առատ  
պարարտութիւն տալ , բուսահող ,  
մոխր , անասնոց աղբ եւ կամ ամենէն  
լսւը :

**Իրէրֆուֆադ տը չօ 55 կրամ**  
**Քիօրիւր տը բօթասիում 55 »**  
**Սիւլֆաթ տամօնեաք 40 »**

Սոյն հանքային աղբը իրար խառ-  
նելով մի մէմր տարածութեամբ իւ-  
րաքանչիւր ծառի արմատներուն վրայ  
150 կրամ սրսկելու է :

Մասին կտրուած մասերուն վրայ ալ  
կամ պատուասի մու եւ կամ թէ  
կաւախառն թրիքով ծածկելու է :

Անդրանիկ Մ. էսայան

**Պառկեներ խուրցնել**

Կ'ո՞ զէ՞ք խոչոք կեռաս , սալոր ,  
խաղող եւն . ունենալ , 100 լիտր  
ջուրին մէջ 2 լիտր երկաթի ծծմբատ  
(sulfate de fer) աւելցնելով , ձարձա-  
աեցէք ձեր պաղատու ծառերը : Բայց  
ամեն ծառի համարյարմար ժամանակ  
մը ընարելու է : Խաղողը՝ իր աճու-  
մին երկու երրորդը առած ժամանակ ,  
անգամ մը՝ ամիս մը յետոյ՝ երրորդ  
անգամ՝ քաղոցէ 20 օր առաջ՝ եր-  
րորդ անգամ ձարձատելու է : Միւս  
պառկեներուն համար ալ այսպէս  
հաշուելու է :

**Պառկեներուն հասուննալը**

Հասուն կը համարուի այն պառկը  
որ կատարելապէս աճած , փայլուն  
գոյն մը ստացած , կոթը չորցած ,  
ծառին տերեւները դեղինցած ըլլան :

Հասուն պառազի մը միսին թջիջները՝  
նախ թթու եւ լեղի նիւթով մը, յե-  
տոյ՝ արեւին տաքութեան եւ լոյսին  
տղեցութեամբ, խմորում մը յառաջ  
կալով՝ շաքարային համեղ հիւթով  
մը կը լեցուին : Խնձորի եւ տանձի  
նման պառազներն ալ հասուն կը հա-  
մարուին, երբ իրենց կուտերը սեւ-  
ցած ըլլան :

Պառազները բաղել

Պառազի քաղոցը, պէտք է սկսիլ  
տկար, արեգգէմ եւ ծեր ծառերէն :  
Նախ ճիւղերու ծայրը եւ հսկին դէմ  
եղող պառազները ժողվելու է : Քա-  
ղոցը՝ չոր եւ գեղեցիկ օդի մը ատեն,  
առառուան ցօղը անցնելէն ետքը ի-  
րիկուան դէմ կատարելու է . տաք  
օրեր երբէք պառազ քաղելու չէ :  
Քաղոցը կամ ձեռքով կ'ըլլայ եւ  
կամ թոթվելով . առաջինը նախա-  
պառուելի է :

Պառազները չորցնել

Խեճեպաւոր պառազները, ինչպէս

կազին, ընկոյզ՝ արեւի մէջ կը չոր-  
ցընեն : Դեղձ, ծիրան, թուզ, սալոր,  
խաղող, կեռաս ալ այսպէս կրնան  
չորցուիլ, պայմանաւ որ կատար-  
եալ հասուննալէն ետքը ժողվուուին:  
Եթէ արեւին տաքութեան աստիճանը  
բաւականաչափ չըլլայ, ջերոցներու-  
կամ տաք փուռերու մէջ չորցնելու  
է : Չորցած պառազները չոր աեղեր  
պահելու է :

Պառազները պահել

Պառազները երկու քի կը բաժնուին:  
Կորզաւոր պառազներ՝ ինչպէս դեղձ,  
ծիրան, սալոր են . : Կատար պառազ-  
ներ՝ ինչպէս են տանձ, խաղող,  
խնձոր եւն . : Ասոնցմէ վերջինները  
երկար ժամանակ կարելի է անվթար  
պահել : Խաղողը պահելու միջոցն  
հետեւեալն է, որ ամրող Ֆռանսայի  
մէջ սովորական գարձած է : Ողկոյզը  
կը կտրեն ուռի փոքրիկ մասով մը եւ  
այդ մասը՝ տակը ածուխի փոշի դրուած  
ջրալից շիշի մը մէջ կը խոթեն :

Իսկ միւս կտաւոր պառազներն ալ

պահելու համար, տհաս քաղելէ յետոյ, վանդակածեւ տախտակներու վրայ մէկիկ մէկիկ կը շարեն Պաղատունը ոչ տաք պիտի ըլլայ եւ ոչ խոնաւ . տաքութիւնը 8-10 աստիճան պիտի ըլլայ : Պաղատունի խոնաւութիւնը ծծեցնելու համար, կիրի քլորակ (chlorure de chaux) կը կը գործածեն : Այս քիմիական նիւթը՝ տակը ծակ մ'ունեցող զինկէ ամանի մը մէջ դնելով, ծակին տակն աւ շիշ մը կը գետեղէն . շիշին մէջ կը վազէ ջրացած քլորակը :

### Պաւդերը ոգիի մէջ պահել

Դեղձի եւ սալորի նման ողիի (alcool) մէջ պահուելիք պտուղները մաքուր եւ իրենց վրայի խաւը սրբուած եւ մինչեւ կորիզնին զնդանեղով մը ծակած ըլլալու է : Յետոյ պաղ ջրի մէջ դնելու է որպէսզի պնդանան, Պաղ ջրէն հանելով, մաղէ մաղի մը մէջ դնելու եւ ձգելու է որ ջուրը կաթի . յետոյ աղակիէ ամաններու մէջ շարելով, վրան 60

աստիճանի ոգի լեցնելու է : Վեց շաբաթ ողիի մէջ մնալէ յետոյ, մէկ լիտր աւքովի 125-250 կրամ հալած շաքար աւելցնելու եւ ամաններու բերանն ալ ամրապէս գոցելով, բարեխառն տեղ մը պահելու է :

### Պղպեղախս

Անմահն Բասթէօր գտած է այս աւերիչ հիւանդութեան մանրէն, որ հաւկթակերպ փայլուն մարմնիկներէ (corpuscules) կը բաղկանայ: Կուզէք քառանց մանրադիտային քննութեան, զիւրաւ ճանչնալ ախտավարակ հունաերը, գործազրեցէք հետեւեալ միջոցը որ գոն պիտի ձգէ ձեզ :

Ախտավարակ հունաերը՝ կապոյտ լուազեղի (tournessol) վրայ մետաղակերպի (metalloïdes) խոկ առողջներն ալ մետաղի (metaux) հակազդեցութիւն կ'ընեն : Այսինքն կապոյտ լուազեղի վրայ մի քանի հունադնելով, ճմլած ատեննիս, եթէ թուղթիւն վրայ կարմիր րիծեր գոյանան, հունատին պղպեղախտէ (rébrine, գա-

բա-թափան) վարակուած ըլլալը, հա-  
կառակ պարագային, այսինքն կար-  
միր թիծեր չգոյցաց ատեն՝ ասողջ  
ըլլալը կը հասկցուի:

Լոռագեղը թուղթ մ'է որ աժան  
դնով կը ծախուի բոլոր զեղավա-  
ճառներուն քով :

Սեպոհ Լտեփանեան  
Վկայեալ Խելքազործ

## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Կին. Նոր հանդերձի պէտք ունիմ:  
Մյր. Միշտ հանդերձ, հանդերձ,  
հանդերձ, կի՞ն, բարձր բաներու  
հիշ փափաք չունի՞ս :

Կին. Բա՛րձր, այո՛, ի՞նչ բարեսիրտ  
էք, զլսարկ մ'ալ կուզեմ :

Հայր. Աղջիկս, ջանք ըրէ որ շուտ  
կերակուր եփել սորմիս, ան ա-  
տեն քեզի անակնկալ մը պիտի  
պատրաստեմ :

Աղջիկը. (Քանի մը ամիս ետքը վկա-  
յական ի ձեռին), հայրիկ, կերա-  
կուր եփել սորմեցայ, իշթէ տիփ-  
լօմաս :

Հայր. Էհ, անակնկալին ժամանակն  
եկաւ . վաղը խոհարարուհին պի-  
տի ճամբենք :

Ուսանող մը որ շատ դրամ կը  
վասնէր հօրը քանակ մը զրկեց որոյ  
մէջ թուղթի կտոր մը կար, վրան  
սապէս զրուած «Յովհ, Բ. 7 համա-  
րին առաջին 4 բառերը», գործադ-  
րենիդ կը խնդրէ որդիդ Ս. : Հայրը  
կը բանայ Աւետարան եւ կը կար-  
գայ. «Յիսուս ըսաւ անոնց . լեցու-  
ցէք» :

Հայրն ալ իր կարգին թուղթի  
կտորի մը վրայ զրեց Առակ. ԺԳ. 4  
եւ զրեց. 7. առաջին բառերը ձեր ու-  
շագրութեան կը յանձնէ սիրալիր  
հայրդ : Թուղթը նամակաւ տղուն  
կը զրկէ : Սա գողգոջուն ձեռքերով  
կը բանայ նամակ հոն միծկակ գու-  
մարի մը փոխ-զեիրն ակնկալելով :

Որքան սակայն կը խոռվի երբ Սուրբ  
Գիրք բանալով սա' խօսքեր կը կար-  
դայ. — Ծոյլին հոգին կը ցանկայ ու-  
բան մը չունի :

Վարժապետ. Բայէ նայիմ, Յովհաննէս,  
ջերմութեան ու պաղութեան  
յատկութիւններն :

Յովհաննէս. Զերմութիւնը կընդար-  
ձակէ իսկ պաղութիւն կը կար-  
ճեցնէ :

Վարժապետ. Ապրիս, օրինակ կրնաս  
տալ :

Յովհաննէս. Ամառը օրերը երկայն  
կ'ըլլան, իսկ ձմեռը կը կարճնան :

Օրիորդը. (Իր խօսեցեալին) Ի՞նչպէս  
կը համարձակիք հայրիկիս ըսել  
թէ քիչ ատենէն 2-3000 լիրայի  
տէր պիտի րլլաք քանի որ ա-  
տանկ յոյս մ'ալ չունիք :

Երիտասարդը. Զէ՞ որ երբ ամուսնա-  
նանք ա'յդքան դրամօժիտ պիտի  
ստանամ :

—

Skr. Ծօ՛, Պետրոս աղբար, վաղ առ-  
տու զիս ժամը 10ին արթնցուք ,  
շատ գործ ունիմ. չմոռնաս հա՛:  
Մառան. Սնանկ էնէ ժամը 10էն  
առաջ չալէ զանգակը որ սենեակդ  
գամ եւ 10ին արթնցնեմ :

Տիկին, կըսէ հիւրը, շատ կը յո-  
րանցէք, կերեւի թէ արսօր ձանձրա-  
ցուցիչ այցելուներ ունեցեր էք :

Ոչ, կըսէ տիկինը, զեռ առաջինն է:

Ի նպաստ կարօտելոց դրամ հա-  
ւաքող կին մը կը ներկայանայ հա-  
րուսափ մը եւ քսակը ներկայացնելով  
կը խնդրէ որ բան մը ձգէ մէջը :

Ստակ չունիմ, կըսէ հարուսար  
կոպառութեամբ քսակը մէկդի հրելով:  
Է՛հ, ատա՞նկ, օ՞ն ուրեմն առէք  
այս քսակը մէջի նղած դրամով ,  
քանզի ես աղքատաց համար կը ժող-  
ուեմ եւ դուք էն արժանաւորն էք :

Հոչակաւոր բժիշկ մը աղատեց  
վտանգաւոր հիւանդութենէ վարակ-

Նալ աղու մը կեանքը : Տղուն մայրը տօքթօրին տունը զնաց յայտնել իր երախտագիտութիւն :

Տօքթօ՛ր, ըսաւ կինը, կան մատուցեալ ծառայութիւններ, որք անփոխանակելի են . չեմ գիտեր ինչպէս յայտնել իմ շնորհակալութիւնքս ձեր ցոյց տուած հոգածութեան համար, որով զաւկիս կեանք փրկեցիք ստոյդ մահուրնէ . խորհեցայ անակնկալ մը պատճառել ձեզ նուիրելով այս քսակ, զոր ես հիւսած եմ : Տիկի՞ն, պատասխանեց բժիշկը, քիչ մը կոշտ շեշտով, դեղ եւ գարման զգացումներով չեն փոխարինուիր, ոսկիսվ կը վճարուի, ձեր նուիրած քսակ բարեկամութեան նշան է. ատով ոչ էքմէքին հաց կուտայ, ոչ ալ խասապը միս . . .

Բայց, տօքթօր, ընդմիջեց տիկինը վշտացեալ եւ վիրաւորեալ ձայնով, ինդրեմ որոշ զին մը յայտնեցէք, ի փոխարինութիւն ձեր ծառայութեանց :

2000 ֆրանք պարափիք ինձ, տիկին, գոչեց տօքթօրը :

Տիկինը այն ատեն տօքթօրին արրուելիք քսակին բերանը բացաւ, եւ հանեց անկէ հինգ հատ 1000 ֆրանքնոց պանք տոսմու, երկու քը բժիշկին առաւ եւ միւս երեքը քսակը զնելով հեռացաւ : Աւելորդ է ըսել որ տօքթօրին վրայ պաղ սարսուռ մ'եկաւ ըրած այս մեծ կորուստին համար :

Մայր Տե՛ս, Յովսէփի, մեղուներն ի՞նչ ծիր եւ աշխատասէր են. քեզ տեսնեմ. զուն ալ անոնց նմօնիս Յովսէփի. Այ, անշուշտ, մեղուները աշխատասէր չըլլան աէ ո'վ պիտի րլայ. քանդի առաւուրնէ մինչեւ իրիկուն մեղը կուտեն :

Դատաւորը. Զէք քամնար, անպիտան մարդ :

Զերբարկապիալը. Ինծի չհաւնեցա՞ք . ուրեմն թողէք որ երթամ :

Ուտուցիլը. Տղա՛ք, ուշ դրէք . Միւսն բանաստեղծը կոյց էր. հասկցա՞ք :

Աշակերտներն. Սյո՛, այս՛:  
Ուսուցիչ. Շատ լաւ, ըսէք. Միլտոն  
ինչու դժբաղդ էր :  
Աշակերտներն. Քանզի բանաստեղծ էր:

Նոր հարսլ. Միքելի ամուսինս, որ-  
պէսզի ուրիշ անգամ մէջերնիս  
գժառութիւն չպատահի կ'առաջար-  
կեմ որ, ասկէ ետեւ երբ բանի  
մը վրայ երկուքս ալ մի եւ նոյն  
կարծիք ունենանք, իրաւունքը  
քուկդ ըլլայ, իսկ երբ կարծիք-  
նիս տարբեր ըլլայ իրաւունքը իմս  
ըլլայ եւ իմ ըսածս կատարուի :

Հայր. (Զեռքերն շփելով ուրա-  
խութեամբ) Ալ գործս ամէն կեր-  
պով կարգին է. թէ հոս աշխարհի  
վրայ եւ թէ օր մը երկնից մէջ.  
Պետրոսս աստուածաբանութիւն  
կը սորմի, Պօղոսս թժշկութիւն եւ  
Մինասս փաստաբանութիւն. օխ,  
աս ի՞նչ բախտ է ծօ՛ . . . .

Ա. Վախնամ չնիկը հիւանդ է, միս

դրի առջին, հոտոտեց բայց չկե-  
րաւ :  
Բ. Ի՞նչ կըսես, անասնաբոյժը կան-  
չե՞մ :  
Ա. Դեռ սպասենք. գուցէ միսը հո-  
տած էր եւ անոր համար չկերաւ.  
հէլէ մէյմը դուն փորձէ :

Մաննիկ. Մայրիկ, եթէ դուն Ման-  
նիկ ըլլայիր եւ ես մայրիկ ըլլայի,  
զիտես ի՞նչ կընէի :

Մայրիկ. Ե՛, ըսէ տեսնեմ, ի՞նչ կը-  
նէիր :

Մաննիկ. Սա կարկանդակէն խոշոր  
կտոր մը կտրելով քեզի կուտայի :

Էլիզա. Մեր պղտիկ աղբարիկը ա-  
ռաջ երկինքն էր, մայրիկ :

Մայր. Ալո՛, սիրունիկս :  
Էլիզա... Շատ լալկան ըլլալուն հա-  
մար դուրս են վճնտեր, անանկ  
չէ, մայրիկ :

Տիրը. Թորոս աղբար, սա շիշը տօ-  
լապը դիր . մէջը մելան կայ .

չթափես հա՛:

**Թորոս.** (մէկուսի) հա՛. մելան հէ՞.  
որո՞ւ կը հաւասացնես . զինի է  
պապամ, զինի :  
(Թորոս տօլապին առջեւ կանգ  
կառնէ ու շիշին պարունակու-  
թիւնը բերանը կը պարպէ ). էի՛խ,  
վայ թշուառական , իրաւ մելան  
է եղեր . էի՛խ . . . :

**Ա.** Հիմակ ի՞նչ զործով կզբաղիք :

**Բ.** Գրագրութիւնով :

**Ա.** Որո՞ւ քով .

**Բ.** Կեցիր որ ըսեմ. Ամիսը երկու  
անգամ մօրքրոջս նամակ կը զբեմ  
որ ինձի դրամ խրկէ . անոր  
խրկած ստակովը կապրիմ :

**Գրիգոր.** Ի՞նչ ունիք , բարեկամ ,  
կորո՞ւստ մ'ունեցաք որ այսքան  
տիմեր էք :

**Յովսէփ.** Զեզի օրեր , զոքանջս մե-  
ռաւ .

**Գրիգոր.** Ցաւալի բան .

**Յովսէփ.** Մեռնելը չէ որ զիս այնքան

կը տիրեցնէ , այլ քարոզիչն ը-  
սածը :

**Գրիգոր.** Է՛, ի՞նչ ըսաւ :

**Յովսէփ.** Թաղման պաշտօնը կա-  
տարելէն եսեւ եկաւ ձեռքս  
սեղմեց եւ ըսաւ . հոգ մի ըներ ,  
Գրիգոր եղբայր , անդիի աշխարհ  
զիրար նորէն պիտի զտնէք :

Անկուտի երիտասարդ մը կառք մը  
կը մտնէ , ուշ ատեն , տուն երթալու  
համար : Երբ զբան առջեւ կը հաս-  
նին , երիտասարդը կառքէն վար  
կիջնէ ողբալով : Վա՛խ , երկու ոսկիս  
կառքին մէջ ինկաւ , կորսուեցաւ ,  
խնդրեմ , կըսէ կառապանին , սպա-  
սեցէք որ ճրագ մը բերեմ եւ փնտը-  
ռեմ : Այս լսելով վեր կելէ : Կա-  
ռապանը երկու ոսկիին ձայն առած  
ըլլալով սրարշաւ կը վազցնէ ձիերն ,  
որ եթէ զտնալու ըլլար իրեն ակնկա-  
լած վարձքին 20 անգամը պիտի ըլ-  
լար :

## ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Ա.

### ԵՐԿՐԻՄ ԾԱԽԱԼՆ ՈՒ ԲՆԱԿԻՑՆԵՐԸ

Եւրոպա	9,690,843	ՔՄ².	392,054,000	բն.
Ասիա	44,183,382	"	930,265,000	"
Աֆրիկէ	29,817,042	"	181,538,000	"
Ամերիկա	39,295,060	"	145,097,000	"
Ովկ. (Աւստ.)	8,955,231	"	6,461,000	"
Բևեռներ	4,486,564	"	83,000	"
Գումար	136,428,122	"	1,655,498,000	"

Բ.

### ԵՐԿՐԻՄ ԵՐԿԱՅՈՒՂԻՆԵՐԸ

	1890ին	1900ին
Եւրոպա	223,869	ՔՄ.
Ասիա,	33,724	"
Աֆրիկէ,	9,836	"
Ամերիկա,	331,417	"
Աւստրալիա,	11,889	"
Գումար,	610,735	"

գ.

### ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԿԱՅՈՒՂԻՆԵՐԸ 1900 ԻՆ

Թուբրիա	3,142	ՔՄ.
Գերմ. նիա	51,391	"
Ռուսիա	48,107	"
Գաղիա	42,827	"
Աւստրիա	36,883	"
Հունգարիա	35,186	"
Իտալիա	15,787	"
Ապանիա	13,357	"
Շուէտ	11,320	"
Պելիգա	6,345	"
Զուիցերիա	3,378	"
Հոյանտա	3,209	"
Ռումանիա	3,098	"
Տանիմարգա	3,001	"
Բօրթուկուլ	2,376	"
Նորվէկիա	2,053	"
Յունաստան	972	"
Սերպիա	578	"
Գումար	283,010	"

Դ.

### ԵՐԿՐԻՄ ՀԵՌԱԳՐԻ ԹԵԼԵՐԸ

Եւրոպա	716,290	ՔՄ.	216,112,000	հեռագիր
Ասիա	128,560	"	10,340,000	"
Աֆրիկէ	42,400	"	3,700,000	"

Ամերիկա	549,240	ՔՄ.	92,300,000	հեռագիր
Աւստրալիա	70,280	"	11,270,000	"
Միջազգային ընդունված	258,996	"	—	"
Գումար	1,765,766	"	333,722,000	"

b.

ԵԿՈՂՈՎԱՅԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԻ  
ԲԵԼԵՐԸ

Թուրքիա	39,782	ՔՄ.	3,777,457	հեռագիր
Ռուսիա	150,145	"	19,817,778	"
Գաղիս	145,882	"	47,280,068	"
Գերմանիա	131,011	"	45,346,281	"
Մեծն Բրիտ	86,296	"	93,505,177	"
Խոսլիա	43,884	"	12,268,927	"
Աւստրիա	34,104	"	15,380,110	"
Սպանիա	32,475	"	4,677,713	"
Հունգարիա	22,948	"	7,789,001	"
Շուէտ	9,589	"	2,962,785	"
Նորվեգիա	9,381	"	2,180,513	"
Բորթուկալ	8,345	"	2,069,124	"
Ռումանիա	6,971	"	2,211,789	"
Պէճիզա	6,806	"	6,843,800	"
Զուիցերի	6,596	"	4,078,353	"
Հուանտա	6,243	"	5,797,673	"
Յունաստան	5,290	"	1,205,095	"
Պուլկարիա	5,180	"	1,206,288	"
Տանիմարգա	3,884	"	2,214,246	"
Սերպիա	3,790	"	624,775	"

Հերս. Պոմակա	2,980	ՔՄ.	580,060	հեռագիր
Լուսէնպուրկ	659	"	168,231	"
Մօնթէնէր	650	"	—	"
Գումար	762,891	"	281,935,244	"

9.

ԵԿՈՂՈՎԱՅԻ ՎԱՀԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՆԱԽԱ-  
ԽՈՒՏԲԸ 1902 Խ

	107 շողենաւ	1,023 նաւ
Մեծն Բրիտ	9,484	"
Գերմանիա	1,390	"
Գաղիս	1,272	"
Նորվեգիա	1,223	"
Շուէտ	911	"
Ռուսիա	745	"
Սպանիա	498	"
Տանիմարբա	483	"
Խոսլիա	446	"
Ֆինլանտիա	298	"
Աւստ. Հունգար.	215	"
Հուանտա	213	"
Յունաստան	150	"
Ռումանիա	72	"
Պէճիզա	66	"
Բորթուկալ	44	"
Պուլկարիա	2	"
Մօնթէնէրկո	1	"
Գումար	17,620	"
		81,743

Ե.

ԵՐԿՐԻՍ ՄԵԾԱԳՈՅՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Հոնտոն (1901)	6,528,000	բնակիչ
Նիւ Եոլը (1900)	3,437,202	»
Բարիզ (1901)	2,714,088	»
Քանթօն (1898)	2,500,000	»
Պերլին (1901)	1,901,567	»
Վլէննա (1902)	1,744,177	»
Չիքակո (1900)	1,698,575	»
Բէ Քին (1898)	1,650,000	»
Թօքիօ (1899)	1,440,121	»
Բեղրսպուրկ (1900)	1,439,375	»
Ֆիլատէ Լիմ (1900)	1,293,697	»
Կոստանդնուպոլիս	1,106,000	»
Մոռբռա (1897)	1,035,000	»
Կալկաթա (1901)	1,026,987	»
Սիսակթան (Չին)	1,000,000	»
Չանչառ (Չին)	1,000,000	»
Թիէնժին (Չին)	1,000,000	»
Գայրօ (1897)	570,0621	»
Չժիւռնիա	201,062	»
Պալտստ	145,000	»
Սելանիկ	105,000	»
Երուսաղէմ	51,000	»
Երգլում	38,000	»

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՈՌՈՍՈՒԹՈՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆԱՑ

- Ազգապետական փոխանորդ,  
Մ. Ն. Գուղու Քէպապեան էֆ.:
- Առամանակեայ քարոզիչ,  
Պատ. Արէսթիտիս Մումճիատիս:
- Գրածախ Ս. Գրոց,  
Կարապետ աղոս Ճինկէօզեան:
- Սարկաւագի փոխանորդ,  
Տեար Ստեփան Եաղճեան:
- Եկեղեցական ժողով,  
Նախագ. Տեար Արիսթիտիս,  
Քարտ. Մ. Ն. Գուղու Քէպապեան էֆ.:
- Ազգ. Վարչական ժողով,  
Նախագ. Մ. Ն. Գուղու Քէպապեան էֆ.,  
Ատենապետ Տեար Կարապետ Ճինկէօզեան,  
Ատենագ. » Յակոր Ուզունեան,  
Ժողովական » Հաճի Տօնիկ Զավուշեան,  
» » Մայիսա Մայիսասեան,  
» » Յովհաննէս Չավուշեան  
» » Ստեփան Եաղճեան,  
» » Տիգրան Կէվրէկեան
- Թաղական ժողով,  
Ատենապետ Տեար Մայիսա Մայիսասեան  
Ատենագ. » Յակոր Ուզունեան,  
Յովհաննէս Չավուշեան,  
Տիգրան Կէվրէկեան:
- Թիւ ժողովուրդի 80,  
» Եկեղեցւոյ անդամոց 24.

9. Ծախք տարիեկան. քարողիչի և ժողովրդական 60 լիրա:
10. Հայկեան վարժարան մանչերու համար, Տեսուչ Մ. Ն. Գուզու Քէպապեան էֆ., Աշակերտ 40, Տարեկան ծախք 36 լիրա, Ուսմունք Ընթերցանութիւն, Ս Դիրք, Բարյագիտութիւն, Կենդանաբանութիւն, Իրազիտութիւն, Պատմութիւն, Թուարանութիւն, Աշխարհազրութիւն, Թուրքերէն, Հայերէն, և Անգղիերէն :
11. Եկեղեցասիրաց միութիւն, որուն նպատակն է Եկեղեցւոյն ժախուց համար հասոյթաքեր կայուածներ առնել Նախազահ, Պատ. Արիսթիտիս, Ատենադպիր, Տեար Գեղէռն Զավուշեան, Գանձապետ, Մ. Ն. Գուզու Քէպապեան էֆ., Ժողովական, Հաճի Տօնի Զավուշեան, Պ Պետրոս Զավուշեան:

### Վ.Ի.Ց.Կ.Ա.Գ.Ր.ՈՒ.Թ.Ի.Ի.Ն ՏՐԱԳԻՉՈՒՆԻ

- Երեց Քարողիչ,  
Պատ. Գրիգոր Խ. Տոմազեան.
- Գործադիր ժողով,  
Պատ. Գ. Խ. Տոմազեան, Նախազահ.  
Սարգիս Բաբերդցիեան, Ատենադպիր.  
Կարապետ Յովակիմեան, Գանձապետ.  
Զւնոր Պ. Ֆիլիսեան, Կալուածոց միւնքէցի.  
Պալչի ախրար, Գիւելա գիւղէն, անդամ

Աւետ. Ժողովրդեան Թիւը	53
Եկեղեցւոյ անդամ	24
Եկամուտ Կալուածներէ	95 ոսկի
Հոգեւոր տուրք	10 "
Ծախք ամպիոնի, Պարոցի, Եւայն	128,5 "
Աղբատաց	1 "
Տեղական հասոյթ	108,5 "
Օր. Մարինէ Զ. Ֆիլիսեան, Վարժուհի	

### ՀԱՅ ՄԱՍՈՒԻԼ

Նոր հրատարակութեանց կ'ուղենք տեղ մը յատկացնել Օրացոյցին մէջ, եթէ նմոյշներ ընդունինք, Թերենք ժողովրդեան զարգացման միջոցներ են ամեն տուն զոնէ մէկ թերթ պարտի ունենալը:

Ստորեւ նախակեալ են Հայ Թերթեր, ի դիւրութիւն ընտրութեան.

Գիւ Դ. Տ.

Արեւելիան Մամուլ, շարաթաթերթ, հզմիր,	50
Արեւելք, Օրաթերթ, Կ. Պոլիս	140
Աւետարեր, շարաթաթերթ,	30
Նոյնը հայատառ Թրք. »	30
Նոյնը տղայց համար, հայ. ամսաթերթ	6
Բիւզանդիոն, օրաթաթերթ, Կ. Պոլիս	120
Բիւրակն, շարաթաթերթ,	50
Լոյս,	50
Մատիկ, շարաթաթերթ, Կ. Պոլիս	50
Հանրապիտակ, շարաթաթերթ, Կ. Պոլիս	40
Ճերիտեկի Շարգիկ, հայ. Թրք. օր. Կ. Պոլիս	150
Մանզումէի Էֆքեար, » » » »	108

Մասիս, շարաթաթերթ, կ. Պոլիս	50
Սուբհանդակ, օրաթերթ, »	100
Փունջ, շարաթաթերթ, »	50

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ

- Առողջ, երջանիկ եւ երկար կեանք դճկ. 1
- Լապտեր Ծնողաց » 4
- Առաջնորդ Ա. Տևանացելոց » 3
- Ասպար կենաց » 3
- Աշխան Տերեւներ թ. Տիպ » 4
- Սրբան Պատմութիւն ոտանաւոր » 2
- Կեանք Տէր Յիսուսի » 4
- Մայրիկին Առաջնորդոց » 4
- Կեանք Սրբոց Առաքելոց, ոտանաւոր » 4
- Ռոկեղէն Բանալի Անզդիերէն լեզուի » 15
- Պարզ Օրացոյց, ճոխ 128 երես » 1
- Բնդարցակ » Հանրագիտ. 320 երես » 3

ԸՆԴ Դ Մ Ա Մ Լ Ո Յ

- Իլոյս պիտի զայ
- Ռւզեցոյց Ս. Գիրը Ընթերցողաց իրը 50  
պատկերներով.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տոմարական գիտելիք	.	.	.	.	3
Օրացոյց	.	.	.	.	17
Օսմանեան Կայսրութիւն	.	.	.	.	97
Օսմանեան թղթատարութիւն	.	.	.	.	105
Հեռագրական կանոնագիր	.	.	.	.	119
Հոգեւոր իշխանութիւնք	.	.	.	.	122

ՅԱ. ԽԵՂՈՒԱԾ

Բարոյավէպք . . . . . 130

Ընտանեական

Ծնողաց բաժին	.	.	.	.	140
Օրիորդաց և կանանց բաժին	.	.	.	.	142
Տղայոց բաժին	.	.	.	.	149
Լուցկիի խնդիրներ	.	.	.	.	157
Ռւսուցիչներու բաժին	.	.	.	.	166
Դպրոցական տասնարաննեալ	.	.	.	.	171

Հարցարան . . . . . 179

Առօղջապահական հերական

Մարզանք	.	.	.	.	189
Հանդերձ	.	.	.	.	193
Դիեցում	.	.	.	.	204
Հիւծախտ	.	.	.	.	205
Ծիծաղ	.	.	.	.	207

<b>Ըժեկական</b>	209
<b>Պատմական</b>	
Կենդանիքն իմացականութիւնը	231
Խղճանար զողերը	234
117 տարեկան հայուհին	235
<b>Կենսագրական</b>	245
<b>Գիտական</b>	
Ի՞նչ բաներու կը գործածուի թուղթը	249
Օդապարիկի խնդիրը	252
Աղամի քաղաքային հանգամանքը	254
Կոշկակարութիւնն Ամերիկայի մեջ	254
Ածուխին մուխին դէմ	256
Ամերիկան հնարամտութիւն	257
Դարաւոր ձեռագիր մը	258
Ծխախոտ	258
<b>Գիտեր</b>	270
<b>Երկրագործական</b>	
Պարտիզանական Օրացոյց	280
<b>Զուարենալիք</b>	300
<b>Վիճակագրական</b>	310
Եկեղեցական վիճակագրութիւն	315
Վիճակագրութիւն Տրապիզոնի	316
Հայ մամուլ	317

6445

2013

«Ազգային գրադարան



NL0031985

